ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻՑ ԱՆՋԱՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

www.coe.int/children

ԿԱՌՈՒՑԵԼՈՎ ԵՎՐՈՊԱ՝
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻՑ ԱՆՋԱՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Եվրոպայի խորհուրդ

Բնօրինակ հրատարակություն.
Effective guardianship for unaccompanied and separated children in the context of migration in Armenia
© Council of Europe, June 2025

Տեքստը ստեղծվել և օգտագործվել է Եվրոպայի խորհրդի թույլտվությամբ: Ոչ պաշտոնական լեզվով այս թարգմանությունը հրատարակվում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող Գործողությունների ծրագրի շրջանակում, սակայն թարգմանիչ(ներ)ի/հրատարակիչ(ներ)ի բացառիկ պատասխանատվության ներքո:

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ի պատասխանատվությունն են և կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Հատվածների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է ոչ առևտրային նպատակներով՝ տեքստի ամբողջականությունը պահպանելու, հատվածը համատեքստից դուրս չօգտագործելու, թերի տեղեկատվություն չտրամադրելու կամ ընթերցողին տեքստի բնույթի, ծավալի կամ բովանդակության վերաբերյալ այլ կերպ չմոլորեցնելու պայմանով: Բնօրինակ տեքստը պետք է նշվի հետևյալ կերպ՝ © Եվրոպայի խորհուրդ, հրատարակման տարեթիվ Սեպտեմբեր 2025:

Բնօրինակ աշխատության ամբողջական կամ մասնակի վերարտադրման/թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Աշխատության վերաբերող ընդհանուր հաղորդակցությունը պետք է հասցեագրվի Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով գլխավոր տնօրինության Երեխաների իրավունքների բաժին (էլ. փոստ՝ children@.coe.int):

Կազմը և դասավորությունը՝ «ԲՐԵՆԴԲՈՒՔ» ՍՊԸ

Լուսանկարը՝ © Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր 2025
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ. ԽՆԱՄՔԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 8

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՁԵՌՆԱՐԿԻՑ 9

Ա. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ 10

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 10

2. ՍԶԲՈՒՆՔՆԵՐ 13

2.1 Երեխայակենտրոն սկզբունքներ 13

2.2 Խնամակալների և խնամատար ընտանիքների համար առաջնորդող սկզբունքներ 17

2.3 Առանց ուղեկցության և ըմտանիքից անջատված երեխաներին ուղղված ծառայությունների և միջամտությունների ուղղորդող սկզբունքներ 19

2.4 Համապարփակ համակարգային մոտեցման ուղղորդող սկզբունքներ 22

2.5 Մասնակից պետություններին ուղղված առաջնորդող սկզբունքներ՝ ապահովելու համար, որ իրենց իրավասության ներքո գտնվող առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին արդյունավետորեն տրամադրվի խնամակալություն 23

3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԸ 28

3.1 Խնամակալության և այլընտրանքային խնամքի տեսակ 28

3.2 Աջակցության և ներկայացուցչության տեսակ 30

3.3 Խնամակալների ընտրության չափանիշները, պրոֆիլավորումը և ընտրությունը 32

3.4 Ծնողական իրավունքներ 34

3.5 Երեխաներին տեղեկատվության տրամադրում և մասնակցություն 35

3.6 Մշտադիտարկման համակարգ, խնամակալների վերահսկողություն և հսկողություն 36

3.7 Ուղղորդման ընթացակարգեր 39

3.8 Տարիքի գնահատման ընթացակարգեր 40

3.9 Ապաստանի ընթացակարգեր 41

3.10 Իրավաբանական օգնության և արդարադատության հասանելիություն 42

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (ՈՒՂԻ) 46

4.1 Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար ապաստանի ընթացակարգի տեսողական սխեմա 46

4.2 Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներ՝ խնամակալության գործընթաց 47
Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ 48
1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ 48
2. ՏԱՐԱՇԱԾՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ 50
2.1 Դատական պրակտիկա 54
3. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ 57
Գ. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿՆՈՒՄ 62
1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 62
1.1 Ազգային մակարդակ 63
1.2 Մարզային մակարդակ 63
1.3 Համայնքային մակարդակ 65
1.4 Հայաստանում խնամքի տեսակները 66
2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ, ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԵՐԸ 68
3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 72
4. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԸ 74
4.1 ՄԱՈՒԸԱ երեխաների համար ներկայացուցիչ նշանակելու ընթացակարգը և պայմանները 74
4.2 Խնամատարություն 75
4.3 ԲՆակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ (խնամք հաստատություններում) 79
4.4 Խնամակալություն և հոգաբարձություն (ազգակցական խնամք) 81
5. ՏԵՂԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ 84
5.1 Հայաստանում ՄԱՈՒԸԱ երեխաների ապաստանի ընթացակարգերի սխեմա 84
5.2 Խնամակալության գործընթաց 86
6. ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԱՄԱՐ 87
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 88
Հավելված 1 88
Հավելված 2 89
Հավելված 3 90
Հավելված 4 97
Հավելված 5 103
Հավելված 6 105
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 112

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս ձեռնարկը կազմվել է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026 թթ. ծրագրի ներքո իրականացվող «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ծրագրի շրջանակում:

Ձեռնարկը մշակել են՝

- **Մարիոն ՊՐԱՏՍԸ**, արտակարգ իրավիճակներում երեխաների պաշտպանության հարցերով միջազգային մասնագետ և խորհրդատու: Հիմնվելով ոլորտում իր մեծ փորձի վրա՝ Մարիոն Պրատսը ուսուցանում և տեխնիկական աջակցություն է տրամադրում միջազգային կազմակերպություններին երեխաների պաշտպանության և հոգեկան առողջության վերաբերյալ:

- **Ամալյա ՈՍԿԱՆՅԱՆԸ**, երեխաների պաշտպանության մասնագետ և իրավաբան՝ երեխաների իրավունքների պաշտպանության և բարեփոխումների ոլորտում մեծ փորձով: Ամալյա Ոսկանյանը տեխնիկական աջակցություն է տրամադրում այն կազմակերպություններին, որոնք աշխատում են երեխաների պաշտպանության շրջանակները ամրապնդելու և խոցելի երեխաների կյանքը բարելավելու ուղղությամբ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԽԱ	Այլընտրանքային խնամք արտակարգ իրավիճակներում
ԵԼՇ	Երեխայի լավագույն շահեր
ԼՇՈ	Լավագույն շահերի որոշում
ՀՄԿ	Համայնքային կազմակերպություններ
ՀՄԵՊ	Համայնքային մակարդակով երեխաների պաշտպանություն
ԵՊ	Երեխայի պաշտպանություն
ԵՊՄԳ	Երեխայի պաշտպանություն մարդասիրական գործողություններում
ԱՊԱԻ	Երեխայի պաշտպանություն արտակարգ իրավիճակներում
ԵՊՆՉ	Մարդասիրական միջամտությունների շրջանակում երեխայի պաշտպանության նվազագույն չափանիշներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություններ
ՎՄԶ	Վաղ մանկության զարգացում
ՓՎԵԽ	Փախստականների և վտարանդիների հարցերով եվրոպական խորհուրդ
ԸՀՎՄ	Ընտանիքի հայտնաբերում և վերամիավորում
ԽՀՄ	Խնամակալության և հոգաբարձության մարմիններ
ԽՀՀ	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ
ՄՄԺ	Միջգերատեսչական մշտական հանձնաժողով
ՆՏՀ	Ներքին տեղահանված անձինք
ԿԽՄՖ	Կարմիր խաչի/Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա
ԿԽՄԿ	Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ՄՀԿ	Միջազգային հասարակական կազմակերպություններ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՀԱՀՍԱ	Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն
ՄՔԾ	ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
ՆԳՆ	ՀՀ ներքին գործերի նախարարություն
ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՊՍԾԲ	Պաշտպանություն սեռական շահագործումից և բռնությունից
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՍԳՀԲ	Սեռական և գենդերային հիմքով բռնություն
ՍԳԸ	Ստանդարտ գործառնական ընթացակարգեր
ԱՈՒԸԱ	Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներ
ՄԱՈՒԸԱ	Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՀԱԻԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա
ՄԱԿ ՓԳՀ	Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (UNHCR)
ՄԱԿՄՀ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (UNICEF)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (ԵԻԿ) սահմանում է երեխաների կյանքի, առողջության, զարգացման, խնամքի և օգնության հիմնարար իրավունքները: Այն վավերացված է աշխարհի գրեթե բոլոր երկրների կողմից (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1989թ.):

Տեղահանության հանգեցնող տրավմատիկ իրադարձությունների կամ հակամարտությունների ականատես լինելը, թե՛ արտասահմանում, թե՛ երկրի ներսում կարող է լուրջ խաթարել երեխաների խնամքի, պաշտպանության և բարեկեցության երաշխավորումը, մասնավորապես, հանգեցնելով երեխայի ընտանիքից անջատման: Անջատումն երեխաներին դարձնում է հատկապես խոցելի և խոչընդոտում է նրանց հիմնական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Անկախ նրանից, թե անջատումը կամավոր է, պատահական, թե հարկադրական, դրա հետևանքները կարող են լինել հսկայական և երկարատև: Նման դեպքերում ազգային և տեղական իշխանությունները պատասխանատու են երեխաների իրավունքների պահպանման համար, իսկ խնամակալները կարևոր դեր են խաղում այն երեխաներին ուղեկցելու և պաշտպանելու գործում, ովքեր զրկված են ընտանեկան միջավայրից կամ որոնց ընտանիքը չի կարողանում ներկայացնել նրանց լավագույն շահերը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2019 թվականին ընդունված՝ Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության վերաբերյալ հանձնարարականը (CM/Rec(2019)11) սահմանում է խնամակալության միջոցով՝ տեղահանված երեխաների պաշտպանության, օգնության և անվտանգության հստակ առաջնորդող սկզբունքներ[1]: Նրա անխափան իրականացումն աջակցվում է Եվրոպայի խորհրդի 2021-2025 թթ. «Եվրոպայում միգրացիայի և ապաստանի համատեքստում խոցելի անձանց պաշտպանության գործողությունների ծրագրով»[2] և 2022-2027 թթ. «Երեխայի իրավունքների ռազմավարությամբ»[3]: Եվրոպայի խորհրդի Երեխայի իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեի կողմից 2022 թվականին պատրաստված խնամակալության վերաբերյալ հանձնարարականի բացատրական հուշագիրը ներկայացնում է անդամ պետություններում խնամակալության կազմակերպման տարբեր եղանակներ՝ միգրացիայի համատեքստում գտնվող երեխաների հատուկ կարիքները բոլոր մակարդակներում հաշվի առնելու համար:

Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ 2024 թվականի հունվարից

1 Տե՛ս CM/Rec(2019)11 Հանձնարարականը, https://rm.coe.int/cm-rec-2019-11-guardianship-en/16809ccfe2 :
2 Տե՛ս Գործողությունների ծրագիրը, https://rm.coe.int/action-plan-on-protecting-vulnerable-persons-in-the-context-of-migrati/1680a409fc :
3 Տե՛ս Ռազմավարությունը, https://rm.coe.int/council-of-europe-strategy-for-the-rights-of-the-child-2022-2027-child/1680a5ef27 :

իրականացվում է «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ծրագիրը[4]: Այն նպատակ ունի ամրապնդել պետական ծառայողների և/կամ համակարգող մարմինների և այլ մասնագետների կարողությունները՝ հակամարտություններից տուժած, մասնավորապես՝ Ղարաբաղի տարածաշրջանից տեղահանված հայ երեխաների իրավունքները արդյունավետորեն պաշտպանելու համար:

Հետևաբար, այս ձեռնարկի նպատակն է՝ բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը խնամակալության վերաբերյալ և աջակցել ազգային/տեղական իշխանություններին՝ երեխաների պաշտպանության համակարգերը ամրապնդելու հարցում: Ձեռնարկում ի սկզբանե ընդգծվում է սկզբունքների և չափանիշների վրա հիմնված պրակտիկայի կարևորությունը՝ խնամակալության համակարգերի որակը, հետևողականությունը և արդյունավետությունն ապահովելու համար: Այն հատուկ անդրադառնում է խնամակալության համակարգերում իրավունքների վրա հիմնված մոտեցում ներդնելու կարևորությանը, որը հաշվի է առնում էթիկական նկատառումները, առաջին հերթին՝ երեխաների լավագույն շահերը:

Այնուհետև, ձեռնարկում պարզաբանվում է խնամակալների դերը՝ որպես երեխաների պաշտպանության համապարփակ շրջանակի կարևոր մաս և այն տարբեր հիմնական տարրերը, որոնք անհրաժեշտ են արդյունավետ խնամակալության համակարգերի համար: Վերջապես, հիմնվելով միջազգային, տարածքային և տեղական մակարդակների իրավական շրջանակների վրա, ձեռնարկը կենտրոնանում է Հայաստանում գործող խնամակալության համակարգի վրա՝ թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ. ԽՆԱՄՔԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ընդգծում է Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների գործակալությունը[5], Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային միանալը առաջացնում է պետությունների պարտավորություն՝ հոգ տանել, պաշտպանել և օգնել ծնողական խնամքից զուրկ մնացած երեխաներին (հոդված 20):

Թեև ԵԻԿ-ը պետություններին զգալի հայեցողություն է տալիս համապատասխան լուծումներ գտնելու հարցում, այնուամենայնիվ, այն պահանջում է հաշվի առնել այնպիսի հիմնական նկատառումներ, ինչպիսի՝ խնամքի շարունակականությունը և երեխայի «մշակույթի, լեզվի և կրոնի», ինչպես նաև երեխայի ինքնահարգանքի և արժանապատվության նկատմամբ ուշադրությունը (հոդված 39):

Չափազան կարևոր է նաև, որ պետությունները և բոլոր կողմերը կատարեն խնամքի

4 Ծրագրի մասին մանրամասն՝ https://www.coe.int/hy/web/yerevan/refugee-response-package
5 ՀԻԳ, 2010 թ.

պարտականությունն այնպես, որ հնարավորինս պաշտպանեն և ապահովեն երեխայի լավագույն շահերը՝ ցանկացած պահի, ցանկացած գործողության մեջ և ցանկացած որոշում ընդունելիս (հոդված 3):

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՁԵՌՆԱՐԿԻՑ

Ձեռնարկի «Ա» բաժնում ներկայացված է արդյունավետ խնամակալության համակարգում ներդրման և իրականացման համար անհրաժեշտ հիմնական տարրերի համառոտագիրը՝ տեսական առումով: Հղումների լայն ցանկը լրացուցիչ ընթերցանություն է տրամադրում նրանց համար, ովքեր ցանկանում են խորացնել իրենց գիտելիքները: Յուրաքանչյուր բաժնի թեման շարադրված է՝ հիմնվելով ամենավերջին հետազոտությունների, ուղեցույցների և ձեռնարկների վրա:

«Բ» բաժինը ներկայացնում է համապատասխան ազգային, տարածաշրջանային և միջազգային օրենսդրության և կանոնակարգերի ամփոփ նկարագրություն՝ հստակ պատկերացում տալով արդյունավետ խնամակալության համակարգերի հիմքում ընկած իրավական պարտականությունների և իրավունքների վերաբերյալ: Այս բաժնի նպատակն է ուսումնասիրել հիմնական իրավական գործիքները՝ խնամակալության գործունեությունը կարգավորող իրավական շրջանակի պահպանման ապահովման վերաբերյալ ուղեցույց տրամադրելու նպատակով: Ուսումնասիրելով հիմնական իրավական փաստաթղթերը՝ այս բաժինը նպատակ ունի ուղղորդել շահակից կողմերին՝ ապահովելու խնամակալությունը կարգավորող իրավական դաշտին համատասխանությունը:

«Գ» բաժինն ամփոփում է Հայաստանում խնամակալության տարբեր տարրերը և վերլուծում համակարգի ներկայիս վիճակը: «Գ» բաժինը լրացնում է մեկ այլ բաժին, որտեղ թվարկվում են մոտ ապագայում համակարգի բարելավման առաջարկները:

Ընթերցողին որոշակի հարց հետաքրքրելու դեպքում բոլոր բաժինները կարող են ընթերցվել որպես առանձին մասեր:

Ա. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Այլ բան նշված չլինելու դեպքում սույն ձեռնարկում օգտագործվում են Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության վերաբերյալ CM/Rec(2019)11 հանձնարարականի սահմանումները:

- **«Երեխա»՝** 18 տարեկանը չլրացած ցանկացած անձ սահմանումն աշխարհում ամենատարածվածն է: Հայաստանում երեխա է համարվում 18 տարեկանը չլրացած ցանկացած ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում կամ լրիվ գործունակ է ճանաչվում ավելի վաղ[6]:
- **«Առանց ուղեկցության երեխա»՝** երեխա, որը բաժանվել է և՛ երկու ծնողից, և՛ այլ հարազատներից և որին չի խնամում որևէ չափահաս անձ, որն օրենքի կամ սովորույթի ուժով պատասխանատու է դրա համար[7]:

- **«Ընտանիքից անջատված երեխա»՝** երեխա, որը բաժանվել է երկու ծնողից կամ նախկինում օրենքի կամ սովորույթի ուժով իր հիմնական խնամողից, բայց՝ ոչ անպայմանորեն այլ հարազատներից: Ուստի, սա կարող է ներառել ընտանիքի այլ չափահաս անդամների խնամքի ներքո գտնվող երեխաներին[8]:

- **«Խնամակալ»՝** անձ, որը նշանակված է կամ որին հանձնարարված է օժանդակել, աջակցել, և, օրենքով նախատեսված դեպքերում, ներկայացնել առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաներին՝ նրանց առնչվող գործընթացներում[9]:

- **«Խնամակալություն»՝** որոշակի ժամանակահատվածով որոշակի երեխայի համար խնամակալ նշանակելու գործընթաց՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման համար իր պատասխանատվությունն իրականացնող մարմնի միջոցով, ներառյալ գործերի կառավարումը և աջակցությունը:

6 «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի 3.1 հոդվածի 1-ին մաս:

7 Երեխայի իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն N6, Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ վերաբերմունքը իրենց ծագման երկրից դուրս, CRC/GC/2005/6, 2005 թվականի սեպտեմբերի 1, պարբերություն 7:

8 Նույն աղբյուրը, պարբերություն 8:

9 Հանձնարարական CM/Rec(2019)11:

- **«Միգրացիա»՝** անձի տեղաշարժը իր սովորական բնակության վայրից:

- **«Երեխայի պաշտպանություն»՝** Երեխաների անվտանգությունը, բարեկեցությունը և իրավունքներն ապահովելու գործընթաց՝ կանխելով և արձագանքելով երեխաների վրա գործադրվող բռնությանը, անտեսմանը, շահագործմանը և բռնությանը[10]:

- **«Երեխայի անվտանգության ապահովում»՝** միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կազմկակերպման իր պարտականությունն իրականացնող մարմնի կողմից որոշակի ժամանակահատվածով որոշակի երեխայի համար խնամակալ նշանակելու գործընթաց՝ ներառյալ գործերի կառավարումը և աջակցությունը: Այն ենթադրում է համապատասխան չափանիշների և գործելակերպի ներդրում բոլոր գործողություններում՝ ծրագրերի, անձնակազմի կամ գործընկերների հետ կապված ռիսկերից երեխաներին պաշտպանելու համար[11]:

- **«Երեխայի պաշտպանությանն ուղղված մարդասիրական գործողություններ»՝** մոտեցում և միջամտություններ, որոնք ուղղված են կանխելուն և արձագանքելուն բռնությանը, շահագործմանը, դաժան վերաբերմունքին և անտեսվածությանը, որոնց ենթարկվում են երեխաները ճգնաժամային իրավիճակներում, այդ թվում՝ զինված հակամարտությունների և բնական աղետների ժամանակ: Այս մոտեցումն ընդգծում է երեխաների համար անվտանգ միջավայրերի ստեղծման, հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության, բաժանված ընտանիքների վերամիավորման, երեխաների պաշտպանության տեղական համակարգերի ամրապնդման և գործընկերների հետ համագործակցության կարևորությունը՝ ապահովելու համար, որ արտակարգ իրավիճակներում հայտնված երեխաները լինեն պաշտպանված և ստանան աջակցություն[12]:

- **«Երեխայի պաշտպանության համակարգ»՝** օրենքների, քաղաքականությունների, կանոնակարգերի, ընթացակարգերի և ծառայությունների միասնականություն, որն ընդգրկում է սոցիալական բոլոր ոլորտները՝ մասնավորապես սոցիալական պաշտպանությունը, կրթությունը, առողջապահությունը, անվտանգությունը և արդարադատությունը, որի նպատակն է աջակցել երեխաների նկատմամբ բռնության, անտեսվածության, շահագործման և ուժի գործադրման կանխարգելմանը և դրանց արձագանքմանը:

10 ՄԱԿ ՓԳՀ Երեխաների պաշտպանության շրջանակ, 2012 թ.:
11 ՅՈՒՆԻՍԵՖ-ի անվտանգության ապահովման քաղաքականություն՝ https://www.unicef.org/media/159656/file/UNICEF_Policy_on_Safeguarding_ March%202024.pdf.pdf:
12 Տե՛ս հումանիտար համատեքստերում երեխաների պաշտպանության վերաբերյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեղեկատվությունն իրենց կայքում՝ https://www.unicef.org/ protection/protecting-children-in-humanitarian-action:

– **«Միգրացիոն կարգավիճակ»՝**

- Փախստական՝ անձ, որը գտնվում է իր քաղաքացիության երկրի սահմաններից դուրս և չի կարող կամ՝ իր ռասայի, կրոնի, ազգության, որևէ սոցիալական խմբի անդամ լինելու կամ քաղաքական հայացքների պատճառով հիմնավոր վախի հետևանքով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանության իրավունքից: Կամ՝ անձ, ով չունի քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվում է իր նախկին մշտական բնակության երկրի սահմաններից դուրս և չի կարող կամ վախի պատճառով չի ցանկանում վերադառնալ այդ երկիր (ինչպես սահմանված է Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայով):
- Միգրանտ (տեղահանված անձ)՝ անձ, ով լքում է իր սովորական բնակության վայրը՝ անկախ այն բանից՝ դա տեղի է ունենում երկրի ներսում, թե միջպետական սահման հատելով, ժամանակավորապես կամ մշտապես, և տարբեր պատճառներով: Այս եզրույթը ներառում է՝ միգրանտ աշխատողներ, անօրինական ճանապարհով երկիր մուտք գործած միգրանտներ, միջազգային ուսանողներ [13]:
- Ապաստան հայցող. միջազգային պաշտպանություն հայցող անձ (ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակ):
- Ներքին տեղահանվածներ. անհատներ, որոնք տեղահանվել են իրենց սեփական երկրներում, լքել են իրենց տները հակամարտությունների, բռնության և աղետների պատճառով[14]:
- **«Ապաստան»՝** ապաստան հայցող երեխաների համար (անկախ նրանից՝ ուղեկցվող են, թե՝ ոչ) պետք է պահպանվեն հատուկ երաշխիքներ, մասնավորապես՝ չվերադարձելիության սկզբունքը[15] և անձնական տվյալների չբացահայտումը իրենց ծագման երկրների իշխանություններին[16]:
- **Դիմադրողականություն.** դժվարություններին դիմակայելու, հաղթահարելու, փոփոխություններին և անորոշությանը հարմարվելու և բացասական փորձառությունները դրական երկարաժամկետ նպատակի վերածելու կարողություն[17]:

13 «Միգրացիայի մասին» | Միգրացիայի միջազգային կազմակերպություն, ամսաթիվը նշված չէ:
14 «Միգրացիայի մասին» | Միգրացիայի միջազգային կազմակերպություն:
15 Այս սկզբունքի բացատրությունը տե՛ս 3.4 բաժնում: Terre des Hommes-ի սահմանման հիման վրա:
16 Եվրոպայի խորհուրդ, 2010:
17 Terre des Hommes-ի սահմանման հիման վրա:

2. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Այս բաժինը սահմանում է այն սկզբունքները, որոնք կարևոր են խնամակալության համակարգի արդյունավետ կիրառման համար: Այս սկզբունքները հետևում են սոցիալ-էկոլոգիական մոդելին, որը նույնականացնում է գործոնները և փոխկապակցված շահակից կողմերին, անդրադառնում և ներազդում է երեխայի զարգացման և բարեկեցության վրա խնամակալության համակարգի շրջանակներում: Այս սկզբունքները փոխկապակցված և միմյանցից կախված են և ներառում են՝ երեխայակենտրոն սկզբունքները, խնամակալներին ուղղված սկզբունքները, միջամտությունները և ծառայություններն ուղղորդող սկզբունքները, խնամակալության համակարգերին ուղղված սկզբունքները և մասնակից պետություններին ուղղված սկզբունքները:

Ստորև ներկայացված է բոլոր սկզբունքների տեսապատկերը:



2.1 Երեխայակենտրոն սկզբունքներ

Մասնագետները պետք է վերապատրաստվեն և իրազեկվեն, և, հետևաբար, համապատասխանեն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (ԵԻԿ) սահմանված հիմնական և հիմնարար չափանիշներին, հատկապես այն հետևյալ չորս սկզբունքին, որոնք առանցքային են երեխայակենտրոն մոտեցում որդեգրելու համար:

Երեխաներին վերաբերող բոլոր որոշումներն ու գործողությունները պետք է կայացվեն նրանց լավագույն շահերից ելնելով՝ ապահովելով նրանց օպտիմալ զարգացումը, պաշտպանությունը և բարեկեցությունը:

Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների (այսուհետ՝ ՄԱՈՒԸԱ երեխաներ) հետ աշխատող մասնագետները պարբերաբար պաշտպանում, գնահատում և ճշգրտում են երեխաների լավագույն շահերը, ինչպես նաև սահմանում են այդ գործընթացի առաջնահերթությունները՝ ներգրավելով բոլոր համապատասխան կողմերին և ապահովելով, որ այդ գնահատումները հաշվի առնեն երեխայի կարծիքը և առանձնահատկությունները (ՄԱԿ ԵԻԿ-ի 3-րդ հոդված):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ «...ներկայումս առկա է լայն կոնսենսուս, այդ թվում՝ միջազգային իրավունքում, այն գաղափարի շուրջ, որ երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում պետք է գերակշռեն նրանց լավագույն շահերը»[18]:

«Երեխայի լավագույն շահեր» (ԵԼՇ) հասկացությունը վերաբերում է երեխայի ընդհանուր բարեկեցությանը, որը պայմանավորված է տարբեր անհատական գործոններով (սեռ, տարիք, հասունություն, փորձառություն) և այլ հանգամանքներով (ծնողների հետ շփում կամ դրա բացակայություն, ընդլայնված ընտանիքի հետ հարաբերությունների առկայություն և որակ, ինչպես նաև հնարավոր ռիսկեր կամ կարողություններ):

Համաձայն ԵՊՆՀ-ների[19], երեխայի լավագույն շահերի հայեցակարգը ներառում է երեք հիմնասյուն՝

1. **Հիմնարար իրավունք՝** երեխաների լավագույն շահերը գնահատելու և որպես առաջնային նկատառում դիտարկելու:

2. Անհրաժեշտ է նախընտրել երեխայի լավագույն շահերից բխող **գերակա սկզբունքը** (այսինքն՝ օրենքի, իրավական դրույթի կամ ուղեցույցի ընտրված մեկնաբանությունը):

3. Որոշումների կայացման գործընթացի չափանիշ, որը հաշվի է առնում երեխայի վրա հնարավոր ազդեցությունը և ցույց է տալիս, որ երեխայի լավագույն շահերը առաջնահերթ համարելու իրավունքը հստակորեն հաշվի է առնվել երեխային վերաբերող ցանկացած որոշման մեջ (տե՛ս ԼՇՈ ընթացակարգի վերաբերյալ համապատասխան բաժինը):

Լավագույն շահերի սկզբունքը ծառայում է որպես ուղեցույց բոլոր ծրագրերի և միջամտությունների նախագծման, իրականացման, մշտադիտարկման և ճշգրտման համար և պետք է պարբերաբար վերագնահատվի: Այն վերաբերում է բոլոր երեխաներին՝ անկախ հետևյալից.

18 Տես՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ, Rahimi-ն ընդդեմ Հունաստանի գործը, no.8687/08, § 108, 2011 թվականի ապրիլի 5, և 8-րդ հոդվածի վերաբերյալ՝ Neulinger-ը և Shuruk-ն ընդդեմ Շվեյցարիայի [ՄՊ], no.41615/07, § 135, 2010 թվականի հուլիսի 6:

19 2019 թ :.

- վարչական կարգավիճակ (քաղաքացի, ապաստան հայցող, փախստական, ներքին տեղահանված անձ, միգրանտ կամ քաղաքացիություն չունեցող անձ),
- ծնողական միջավայր (անկախ նրանից՝ նրանք իրենց ծնողների կամ խնամակալների հետ են, թե՞ միայնակ են կամ բաժանված են),
- խնամակալության ընթացակարգի համատեքստը, ոլորտը (մասնավոր, պետական, սոցիալական ապահովության հաստատություններ, դատարան, վարչական մարմին, օրենսդիր մարմին) կամ պահը,
- անձնական այլ հատկանիշներ:

Միգրացիայի համատեքստում այս սկզբունքը հատկապես արդիական է, քանի որ այն ենթադրում է.

- հաշվի առնել երեխայի առանձնահատկությունները՝ լեզվական և մշակութային ծագման առումով, այդ թվում՝ այն եղանակը, որով երեխան պատշաճ կերպով մասնակցում է որոշումների կայացման գործընթացներին,
- բոլոր գործոնների հավասարակշռում՝ լավագույն տարբերակը գնահատելու և առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար կայուն լուծումներ գտնելու համար. ժամանակավոր խնամքի կազմակերպում, ընտանիքի հնարավոր վերամիավորում, խնամատար ծնողներից կամ ուղեկցող մեծահասակներից բաժանում, եթե կա շահագործման, վատ վերաբերմունքի կամ թրաֆիքինգի վտանգ, օրինակ՝ այլ վայր տեղափոխություն:

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՊՐԱԿՏԻԿԱ

Եվրոպական ապաստանի աջակցության գրասենյակը (ԵԱԱԳ) մշակել է երեխայի լավագույն շահերի ապահովման տարրերի (ԵԼԾ) և դրանց երաշխիքների ցանկ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային պաշտպանության ժամանակ: Ստուգաթերթիկի տեսքով այն կարելի է գտնել ապաստանի ընթացակարգերում երեխայի լավագույն շահերի վերաբերյալ նրանց գործնական ուղեցույցում[20]:

Բոլոր որոշումները և գործողությունները պետք է ակտիվորեն խրախուսեն, աջակցեն և խթանեն երեխաների կյանքի, խնամքի, պաշտպանության և զարգացման իրավունքը:

ՄԱՌԻԼԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է հաշվի առնեն համատեքստի, երեխաների կոնկրետ իրավիճակի և դրանց նկատմամբ իրենց

20 https://euaa.europa.eu/sites/default/files/Practical_Guide_on_the_Best_Interests_of_the_Child_EN.pdf :

սեփական արձագանքի ազդեցությունը. ա) երեխաների կյանքի և գոյատևման իրավունքի պահպանման, բ) նրանց ֆիզիկական, հոգեբանական, հուզական, սոցիալական և հոգևոր զարգացման վրա: Անհրաժեշտ է օգտագործել երեխաների ուժեղ կողմերն ու դիմադրողականությունը, մեծացնել նրանց գոյատևման և զարգացման հնարավորությունները, ինչպես նաև խրախուսել կայուն, անվտանգ և հոգատար հարաբերություններ և խնամքի միջավայր՝ ճիշտ լծակներ և կապեր ձևավորելու համար (ՄԱԿ ԵԻԿ-ի 6-րդ հոդված):

Երեխաները պետք է օգտվեն իրենց իրավունքներից՝ առանց խտրականության

ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները իրավական պարտավորություն են կրում պաշտպանելու երեխաների իրավունքները՝ ապահովելով, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր երեխաները կարողանան վայելել այդ իրավունքները առանց խտրականության (ՄԱԿ ԵԻԿ-ի 2-րդ հոդված): Այն ենթադրում է.

- ծագման, ռասայի, մաշկի գույնի, սեռի, գենդերի, սեռական կողմնորոշման, տարիքի, հաշմանդամության, ազգության, կրոնի, լեզվի, քաղաքական հայացքների, էթնիկական կամ սոցիալական ծագման, գույքի, ծննդյան ներգաղթային կարգավիճակի կամ որևէ այլ պատճառով խտրականության բացահայտում և արգելում,
- կանխարգելիչ միջոցների ձեռնարկում՝ հավասար հնարավորություններ, ռեսուրսների մատչելիություն և մասնակցություն ապահովելու, ինչպես նաև խոցելի խմբերին չարաշահումներից պաշտպանելու համար,
- պոզիտիվ գործողությունների ձեռնարկում անհավասրությունը մեղմելու և շտկելու համար՝ հարգելով յուրաքանչյուր երեխայի արժանապատվությունը և ինքնատիպությունը, եթե և երբ դրանք փաստացի առկա են:

Ինչպես ընդգծում է ԵՊՆՉ-ը, այդ սկզբունքը ենթադրում է մեր սեփական ինքնաբուխ մտածողական խեղաթյուրումները գիտակցելը և դրանք հաղթահարելը՝ բացառման և խտրականության ցիկլն ակամա չվերարտադրելու եթե և երեխաների հիմնարար իրավունքների իրագործմանը չխոչընդոտելու համար:

ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է ապահովեն, որ երեխաները ժամանակ և հնարավորություն ունենան իրենց վերաբերող որոշումների կայացմանը իմաստալից մասնակցելու համար:

Արդյունավետ մասնակցությունն իրականացվում է տարիքին համապատասխան

և յուրաքանչյուր երեխայի սեռին, զարգացմանը, հասունությանը, հաղորդակցման կարողություններին և համատեքստին, ներառյալ մշակութային և լեզվական առանձնահատկություններին հարմարեցված ձևով (ՄԱԿ ԵԻԿ-ի 12-րդ հոդված):

Ըստ Եվրոպայի խորհրդի՝ երեխաների մասնակցության վերաբերյալ՝ երեխաների համար և երեխաների հետ աշխատող մասնագետների համար ձեռնարկի Հավելված 1-ի, արդյունավետ և բարոյական երեխաների մասնակցությունն ապահովելու համար սահմանված է 9 հիմնական պահանջ: Մասնակցությունը պետք է լինի թափանցիկ և տեղեկացված, կամավոր, հարգալից, համարժեք, երեխայակենտրոն, ներառական, ուսուցմամբ կամ վերապատրաստմամբ աջակցվող, անվտանգ և ռիսկերի նկատմամբ զգայուն, ինչպես նաև հաշվետու[21]: Մասնակցությունը պետք է նաև ապահովվի և՛ երեխաների, և՛ խնամողների/խնամատար ծնողների/խնամակալների տեղեկացված համաձայնությամբ:

Երեխաների կարծիքը պետք է հարգվի, և նրանց ներդրումը պետք է օգտագործվի հատկապես որոշումների կայացման գործընթացում՝ մշտապես հաշվի առնելով երեխաների կյանքում տեղի ունեցող փոփոխությունները կամ համայնքի դինամիկան: Իդեալում՝ մասնակցությունից հետո պետք է ապահովվի հետագա հետևողականություն՝ իրական հաշվետվողականությունն ապահովելու համար: Ոչ պակաս կարևորը, մասնակցությունը պետք է ապահովի երեխայի լավագույն շահերին և «մի՛ վնասիր» սկզբունքը:

Մասնավորապես՝ որտեղ հնարավոր է, ՄԱՈՒԸԱ երեխաները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն իրենց լավագույն շահերը պաշտպանելու որոշման գործընթացում:

2.2 Խնամակալների և խնամատար ընտանիքների համար առաջնորդող սկզբունքներ

Եվրոպական միության Հիմնարար իրավունքների գործակալությունը (ՀԻԳ) տրամադրում է ընդարձակ ուղեցույցներ և շրջանակներ ապաստան հայցող երեխաներին մատուցվող ծառայությունների, այդ թվում՝ խնամակալության համակարգերի որակի վերաբերյալ:

Ի լրումն արդեն իսկ ներկայացված խտրականության բացառման և մասնակցության սկզբունքի, ՀԻԳ-ն[22] առաջարկում է հետևյալ լրացուցիչ սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն խնամակալության բոլոր տեսակների համար.

- Նշանակված խնամակալները և օրինական ներկայացուցիչները պետք է կարողանան ցուցաբերել անկախություն և անաչառություն իրենց որոշումներում, գնահատականներում, գործողություններում և

21 Այս հավելվածը կարող եք գտնել հետևյալ հասցեով՝ https://cp4europe.org/sites/default/files/2023-06/CoE%20 HANDBOOK%20-%20 ANNEX%201.pdf:

22 Ծնողական խնամքից զրկված երեխաների խնամակալության ձեռնարկում (2014 թ):

հայտարարություններում:

- Նշանակված խնամակալները և օրինական ներկայացուցիչները պետք է լինեն որակավորված և երեխաների պաշտպանության, երեխաների բարեկեցության ոլորտներում վերապատրաստված մասնագետներ, զգայուն լինեն կոնկրետ/անհատական կարիքները, ռիսկերը (օրինակ՝ թրաֆիքինգը) հայտնաբերելու համար և ունենան բավարար գիտելիքներ ու փորձ համապատասխան թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են տրավմաները:
- Պետք է գործի խնամակալության պաշտոնական օրինական մարմին, որը կսահմանի խնամակալների պարտականությունները, գործառույթները և ներկայացուցչությունը, կլինի պատասխանատու և հաշվետու, կապահովի խնամակալության համակարգի և խնամակալների գործողությունների վերահսկումը:
- Խնամակալության մեխանիզմները պետք է լինեն կայուն և բավարար ռեսուրսներով (ֆինանսական և մարդկային) ապահովված՝ երկարաժամկետ արդյունավետության համար:



Source: FRA

Որոշ երկրներ մշակել են վարքագծի կանոններ և/կամ էթիկայի խարտիաներ ՄԱՌԻԲԱ երեխաների հետ աշխատող մասնագետների համար: Այդ կանոնները, որոնք մասնագետը ստորագրում է աշխատանքի ընդունման գործընթացում, լավ միջոց են մասնագետի աշխատանքը վերահսկելու և վերահսկողություն իրականացնելու համար: Կարող եք տեսնել Իտալիայում մշակված էթիկայի խարտիայի օրինակը Հավելված 1-ում, ինչպես նաև ծանոթանալ այս ուղեցույցի մշտադիտարկմանը նվիրված բաժնին:

2.3 Առանց ուղեկցության և ըմտանիքից անջատված երեխաներին ուղղված ծառայությունների և միջամտությունների ուղղորդող սկզբունքներ

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Այս բաժնում ներկայացված պաշտպանության սկզբունքները վերցված են ոչ պարտավորեցնող աղբյուրներից: Սակայն դրանք համարվում են լավագույն պրակտիկա՝ ուրվագծելու և ձևավորելու գործառնական ծառայություններ և գործնական միջամտություններ, որոնք ՄԱՈՒԸԱ երեխաների համար տրամադրվում են ապահով ձևով:

Գործողությունները և միջամտությունները չպետք է ավելորդ վնաս հասցնեն կամ սրեն առկա խնդիրները:

Մարդասիրական աշխատանքի «Մի վնասիր» ավանդական էթիկական սկզբունքին հետևելով՝ ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է քայլեր ձեռնարկեն՝ նվազեցնելու ընդհանուր ռիսկերն ու խոցելիությունը, ներառյալ խնամակալության ծրագրերի, ընթացակարգերի և որոշումների հնարավոր բացասական ազդեցությունները:

«Մարդասիրական միջամտությունների շրջանակում երեխաների պաշտպանության նվազագույն չափանիշները» (ԵՊՆՉ) ձեռնարկում,որը պահպանում է երեխաների պաշտպանության այն չափանիշները, որոնք ընդհանուր համաձայնեցվել են ՄԱԿ-ի գործակալությունների, ինչպես նաև երեխաների պաշտպանության ոլորտում աշխատող տեղական և միջազգային ՀԿ-ների կողմից, առաջարկվում է ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով.

- վերլուծել ռիսկերի միտումները
- խուսափել ֆիզիկական, հուզական կամ հոգեբանական վնասից,
- մշտադիտարկել խոցելիությունները, վտանգները, սոցիալական նորմերի պահպանումը, համատեքստում տեղի ունեցող փոփոխությունները,
- վերահսկել գործողությունները՝ գիտակցելով որոշումների հնարավոր հետևանքները,
- հարմարեցվել համատեքստին և մշակույթին
- նվազեցնել ոչ դիտավորյալ կողմնակի հետևանքները,
- գնահատել օգուտները,
- կիրառել անվտանգության ապահովման ընթացակարգերր և մեխանիզմներ[23]:

23 ԵՊՆՉ, 2019թ.:

ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է երաշխավորեն մատչելիությունը և ներառականությունը:

ՄԱԿ անդամ պետությունների կողմից 2018 թ. ընդունված «Անվտանգ, կարգավորված և կանոնավոր միգրացիայի գլոբալ համաձայնագրի»[24] (ՄԳՀ) 15 և 16 նպատակներին համահունչ այս առաջարկվող սկզբունքը ենթադրում է օգնության մատուցման խոչընդոտների և սահմանափակումների հայտնաբերում և վերացում, ինչպիսին են սոցիալական կամ գենդերային նորմերի խոչընդոտները, լեզվական և մշակութային սահմանափակումները՝ ապահովելով թարգմանություն, միջնորդների ներգրավում, երեխայակենտրոն լեզվի և մեթոդների կիրառում, ծառայությունների մատչելիության վերաբերյալ համարժեք տեղեկատվության տրամադրում, ֆինանսական բեռի վերացում, պայմանների հարմարեցում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար հասանելիություն ապահովելու նպատակով, ինչպես նաև ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետների գենդերային հավասարակշռության ապահովում, տարիքին և դեռահասների կարիքներին համապատասխան ծառայությունների մատուցում և այլն:

Աջակցել երեխաներին՝ միգրացիայի, տեղահանությունների և ընտանիքների բաժանման ֆիզիկական և հոգեբանական հետևանքներից անվտանգ վերականգնվելու համար:

ՄԳՀ-ն ապահովում է միգրացիայի համատեքստում երեխաների խոցելիությունները հասցեագրելու շրջանակ՝ սատարելով միգրացիայի և բաժանման հետևանքով առաջացած տրավմայից վերականգնվելու համար երեխաների համար մատչելի աջակցությանը: ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է անհապաղ և շարունակական աջակցություն ցուցաբերեն այդ երեխաներին և ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց անվտանգությունը, արժանապատվությունը, բարեկեցությունը և իրավունքները վերականգնելու համար: Դա նաև ներառում է իրավաբանական օգնությունը՝ երբ և որտեղ այն անհրաժեշտ է:

Օգնություն առանց ուղեկցության և ընտանիքից անջատված միգրանտ երեխաներին պաշտպանելու իրենց իրավունքները

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված՝ Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության մասին CM/Rec(2019)11 հանձնարարականի սկզբունք 1-ի իրականացման համար առաջարկվող ստուգաթերթում անդրադարձ է կատարվում այն հարցին, թե ինչպես պետք է ապահովել երեխայի աջակցությունը՝ նրա երկրում, ճանապարհորդության ընթացքում կամ ընդունող պետությունում կրած ցանկացած տրավմայից վերականգնման

24 A/CONF.231/3

համար: ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է երեխաներին և նրանց խնամատարներին տրամադրեն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, փաստաթղթերը, թարգմանությունները և լուծումները (օրինակ՝ իրավաբանական աջակցություն, ԸՀՎ ծառայություններ), որ նրանք կարողանան օգտվել իրենց իրավունքներից:

Խուսափել անհարկի փոփոխություններից և միջոցառումներից

Երեխաների պաշտպանության միջազգային և ազգային իրավական շրջանակները ենթադրում են, որ առանց ուղեկցության երեխայի նկատմամբ ցանկացած միջամտություն կամ գործողություն պետք է լինի բացարձակապես անհրաժեշտ՝ կիրառվելով միայն այն դեպքում, երբ դա կենսական է երեխայի պաշտպանության, անվտանգության կամ բարեկեցության համար: Ապահովել, որ ՄԱՈՒԸԱ երեխաներն ենթարկվեն միայն այնպիսի միջոցառումների, տեղահանումների, փոփոխությունների կամ սահմանափակումների, որոնք իսկապես անհրաժեշտ են, պաշտպանել նրանց՝ զարգացմանը վնաս հասցնող, ազատությունները սահմանափակող, իրավունքներին վնասող կամ պարզապես նորմալության և անվտանգության զգացումը խաթարող գործողություններից:

Խնամքի հարմարեցում ՄԱՈՒԸԱ երեխաների հատուկ կարիքներին

ՄԱԿ ՓԳՀ-ի «Առանց ուղեկցության ապաստան հայցող երեխաների հետ աշխատանքի քաղաքականության և ընթացակարգերի ուղեցույցը» (1997թ.) ընդգծում է, որ խնամակալությունը, կացությունը և աջակցությունը պետք է համապատասխանեն յուրաքանչյուր երեխայի տարիքին, սեռին, մշակութային նախապատմությանը և հատուկ խոցելիություններին, որոնք էապես տարբերվում են ինչպես մեծահասակների, այնպես էլ ընտանիք ունեցող անչափահասների կարիքներից:

Անվտանգության ապահովման մեխանիզմների ներդնում գործընթացներում, ծրագրերում և գործողություններում՝ ապահովելով բարձր որակի ծրագրավորում:

«Անվտանգության ապահովում» հասկացությունը վերաբերում է այն բոլոր գործողություններին, որոնք պետք է ձեռնարկվեն՝ կանխելու և արձագանքելու այն վնասներին, որոնք կարող են հասցվել ցանկացած անձի՝ ծառայություններից օգտվելու կամ կազմակերպությունների, ինչպես նաև դրանց անձնակազմի, գործընկերների, մատակարարների և ծառայություններ մատուցող անձանց աշխատանքի արդյունքում[25]:

25 Ինչպես նշվեց, «մի վնասիր» սկզբունքը առաջնային կարևորություն ունի անվտանգության ապահովման համար, թեև այդ 2 հասկացությունները տարբեր են: Այս մասին ավելին տե՛ս Հավելված 2-ում (ՅՈՒՆԻՍԵՖ-ի քաղաքականություն, 2024.):

2.4 Համապարփակ համակարգային մոտեցման ուղղորդող սկզբունքներ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Զարգացնելով Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար արդյունավետ խնամակալության վերաբերյալ CM/Rec(2019)11 հանձնարարականի սկզբունք 8-ը, որը շեշտադրում է ընթացակարգերի, քաղաքականությունների, ծառայությունների և մասնագետների անհրաժեշտությունը՝ ՄԱՈՒԸԱ երեխաների շարունակական բարեկեցությունն ապահովելու համար, այս բաժնում ներկայացված սկզբունքները հիմնված են երեխաների պաշտպանության մարդասիրական գործողությունների նվազագույն չափանիշների վրա:

Երեխաների պաշտպանության համակարգերի ամրապնդում[26]

ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները պետք է ձգտեն բարելավել ծառայությունների որակն ու հասանելիությունը և նորարար լուծումներ առաջարկեն համակարգերում՝ երեխաների պաշտպանության արդյունքները բարձրացնելու համար: Դրա համար անհրաժեշտ է ակտիվ համագործակցություն միմյանց հետ, հարմարվողականություն փոփոխվող համատեքստերին, կապերի ձևավորում համայնքահեն ոչ ֆորմալ կազմակերպությունների և տեղական իշխանությունների հետ, քարոզչություն ներպետական օրենսդրության փոփոխությունների ուղղությամբ՝ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված միգրանտ երեխաներին ապաստան տրամադրելու համար, համապատասխան արձագանքման գործողությունների ստանդարտ ընթացակարգերի մշակում, հաստատությունների արձագանքման կարողությունների և միջոցների ամրապնդում, սեփական կարողությունների զարգացում, ՄԱՈՒԸԱ երեխաների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում և համապատասխան վարքագծի ձևավորում և այլն: Երեխաների պաշտպանութան համակարգը պետք է ապահովի երկու սեռերի հավասարակշռված ներկայացվածությունը մասնագետների շրջանում՝ հեշտացնելու համար երեխաների հետ շփումը, մասնավորապես՝ բռնությունից հնարավոր տուժող երեխաների հետ:

Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված միգրանտ երեխաների հոգեսոցիալական կայունության ամրապնդում

ՄԱՈՒԸԱ երեխաների հետ աշխատող մասնագետները պետք է խրախուսեն

26 Համակարգ ասելով նկատի ունենք մարդկանց, գործընթացները, օրենքները, հաստատությունները, կարողությունները և վարքագիծը:

երեխաների պատասխանատվության զգացումը, մասնակցությունը, ներդրումը, հմտությունները, պաշտպանիչ գործոնները, բարեկեցությունը, ուժեղ կողմերը և դրական հարաբերությունները՝ նպաստելով նրանց դիմակայունության զարգացմանը և ամրապնդմանը:

2.5 Մասնակից պետություններին ուղղված առաջնորդող սկզբունքներ՝ ապահովելու համար, որ իրենց իրավասության ներքո գտնվող առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին արդյունավետորեն տրամադրվի խնամակալություն

Այս բաժնում ամփոփ ներկայացված են անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)11 հանձնարարականում ամրագրված՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության առաջնորդող սկզբունքները: Յուրաքանչյուր սկզբունքի ավելի մանրամասն նկարագրության համար տե՛ս Հավելված 3-ը:

2022 թվականի հունիսի 15-ին Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունեց CM/Rec(2019)11 հանձնարարականի վերաբերյալ բացատրական հուշագիր, որն ուղղված է անդամ պետություններին՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության ապահովման հարցում ուղեցույց տրամադրելու նպատակով: Փաստաթուղթը ներկայացնում է ինը առաջնորդող սկզբունք՝ արդյունավետ խնամակալության համակարգի ստեղծման համար, ինչպես նաև կիրառելի ուղեցույցներ և ստուգաշարեր՝ քաղաքականություն մշակողների, իշխանությունների և խնամակալների համար՝ երաշխավորելու երեխաների իրավունքների պահպանումը միգրացիայում:

Պետությունները պետք է պաշտպանեն միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքները՝ խնամակալության և նրանց լավագույն շահերի ապահովման միջոցով:

Այս սկզբունքն ընդգծում է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար խնամակալության համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը՝ նրանց իրավունքները պաշտպանելու, լավագույն շահերին առաջնահերթություն տալու և նրանց հատուկ կարիքներին արձագանքելու նպատակով: Այն կոչ է անում հետևել երեխաների իրավունքների ոլորտում միջազգային պարտավորություններին՝ պաշտպանելով երեխաներին խտրականությունից, բռնությունից և այլ ռիսկերից, միաժամանակ խթանելով կայուն լուծումները, այդ թվում՝ ընտանիքի հետ վերամիավորումը՝ անհրաժեշտության

դեպքում:

Պետությունները պետք է ընդունեն և ներդնեն համարժեք իրավական, քաղաքականության, կարգավորող և/կամ վարչական շրջանակներ ՄԱՈՒԸԱ երեխաների համար:

Այս սկզբունքն ընդգծում է ամուր իրավական և կանոնակարգային շրջանակների անհրաժեշտությունը՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված (ՄԱՈՒԸԱ) երեխաների համար արդյունավետ խնամակալություն ապահովելու նպատակով: Այն կոչ է անում մշակել համապարփակ չափանիշներ, որոնք կներառեն խնամակալի պարտականությունները, աշխատանքի ընդունման և վերապատրաստման գործընթացը, հսկողությունն ու աջակցությունը, գերատեսչական համագործակցությունը, ինչպես նաև այն մեխանիզմները, որոնք երեխաներին հնարավորություն կտան արտահայտելու իրենց մտահոգությունները: Համակարգը պետք է առաջնահերթություն տա երեխաների լավագույն շահերին՝ ապահովելով կայունություն, շարունակականություն և իրավական պաշտպանություն՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով դատական վերահսկողություն:

Պետությունները պետք է ապահովեն, որ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների առանց անհարկի ուշացման հասանելի լինի խնամակալ:

Այս սկզբունքն ընդգծում է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար խնամակալի ժամանակին և անհատականացված նշանակման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում աջակցության շարունակումը 18 տարին լրանալուց հետո: Անկախ ներգաղթի կարգավիճակից՝ յուրաքանչյուր հայտնաբերված ԱՈՒԸԱ երեխան պետք է ունենա անհապաղ խնամակալության հնարավորություն՝ երաշխավորված շարունակական պաշտպանությամբ: Խնամակալի դերը պետք է պահպանվի մինչև ծնողական պատասխանատվության հաստատումը կամ մինչև երեխայի չափահաս դառնալը, իսկ երիտասարդներին պետք է տրամադրվի անցումային աջակցություն՝ ըստ անհրաժեշտության:

Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն խնամակալներին լիազորելու համար՝ **տեղեկացնել, օժանդակել, աջակցել և, օրենքով**

նախատեսված դեպքերում, ներկայացնել միգրացիայի համատեքստում **առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին:**

Այս միջոցները միտված են պաշտպանելու միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքներն ու լավագույն շահերը՝ ապահովելով, որ խնամակալները հանդես գան որպես միավորող օղակ իշխանությունների և համապատասխան ծառայությունների միջև: Խնամակալները պետք է լինեն անկախ և անաչառ՝ լիազորված տեղեկատվություն տրամադրելու, աջակցելու և օգնելու երեխային իրավական և անձնական կարիքների հարցում, ներառյալ՝ իր իրավունքների իրազեկումը, բարեկեցությունը և անցումը չափահասություն: Նրանց դերը նախատեսում է նաև երեխայի լավագույն շահերի պաշտպանություն, որոշումների կայացման նպաստում/խթանում և ապահովում, որպեսզի երեխան լիարժեք պաշտպանված և իրազեկված լինի բոլոր ընթացակարգերում: Խնամակալները պետք է պահպանեն կանոնավոր կապը երեխայի հետ, ապահովեն գաղտնիության պահպանումը և համագործակցեն շահագրգիռ կողմերի հետ՝ անկախ մնալով արտաքին ազդեցություններից:

Տեղեկատվություն, արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների մատչելիություն, ներառյալ երեխաների համար գանգատների բարենպաստ ընթացակարգեր

Այս հանձնարարականը կոչ է անում պետություններին ապահովել, որ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին հասանելի լինի կարևոր տեղեկատվությունը, անաչառ բողոքարկման համակարգը և իրենց իրավունքները պահպանելու արդյունավետ պաշտպանության մեխանիզմները: Երեխաները պետք է ստանան հստակ, երեխայի ընկալմանը հարմար ուղեցույց՝ իրենց իրավունքների և խնամակալի դերի վերաբերյալ, որն ընդունված և հաստատված լինի խնամակալի կողմից: Բողոքարկման անկախ և հասանելի մեխանիզմները, այդ թվում՝ այլընտրանքային վեճերի կարգավորման եղանակները (օրինակ՝ հաշտեցումը), պետք է կիրառելի լինեն՝ մտահոգությունները վերացնելու նպատակով: Ընթացակարգերը պետք է իրականացվեն երեխայակենտրոն, գաղտնի ձևով և ժամանակին՝ երաշխավորելով երեխայի շահերի պաշտպանությունը:

Պետությունները պետք է ապահովեն իրավասու մարմնի ձևավորումը, որը պատասխանատու է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության

և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման համար:

Այս սկզբունքը կոչ է անում պետություններին ստեղծել լիազորված մարմին, որը պատասխանատու է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման և վերահսկման համար: Այդ մարմինը պետք է զբաղվի խնամակալների հավաքագրմամբ, ստուգմամբ և վերապատրաստմամբ, սահմանի վարքագծի չափանիշներ և կիրառի երեխաների պաշտպանության քաղաքականություններ: Խնամակալության կառավարումը պետք է ներառի երեխայակենտրոն ռեսուրսներ, աջակցություն և հաղորդակցման ուղիներ՝ ապահովելու համար, որ խնամակալները ունենան կառավարելի բեռնվածություն անհատական ուշադրություն ցուցաբերելու նպատակով: Անհրաժեշտ է նաև մշտադիտարկում և պարբերական արձանագրում՝ միջազգային տվյալների պաշտպանության չափանիշներին համապատասխան՝ ապահովելու խնամակալների հաշվետվողականությունն ու երեխաների բարեկեցությունը:

Պետությունները պետք է համապատասխան ռեսուրսներ հատկացնեն՝ երաշխավորելով, որ խնամակալները պատշաճ կերպով ընտրված և ստուգված են, հուսալի են և որակավորված՝ արդյունավետ խնամակալություն իրականացնելու համար:

Պետությունները պետք է պարբերաբար տվյալներ հավաքագրեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների վերաբերյալ՝ գնահատելու նրանց կարիքները և ռեսուրսների բաշխումը: Այս տվյալները պետք է օգտագործվեն՝ խնամակալության միջոցառումները համապատասխանեցնելու նպատակով, ներառյալ՝ արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչպես նաև՝ ապահովելու անհրաժեշտ կայուն ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսներ, չափանիշներ, գաղտնիության և անձեռնմխելիության պահպանում:

Այս սկզբունքն ընդգծում է հուսալի ազգային համագործակցության և համակարգման կարևորությունը, որը հստակ սահմանում է խնամակալների և իշխանությունների դերերը՝ ապահովելով ներգրավված բոլոր գործակալությունների պատասխանատվությունը և թափանցիկությունը: Մեխանիզմներն ու ընթացակարգերը պետք է առաջնահերթ համարեն ԱՈՒԸԱ երեխաների անվտանգությունը և բարեկեցությունը, հատկապես անհետացման, բռնության կամ շահագործման դեպքերում՝ միաժամանակ ապահովելով, որ տեղեկատվության փոխանակումը լինի գաղտնիության

և երեխայի լավագույն շահերի պահպանման շրջանակում: Հատուկ միջոլորտային վերապատրաստումները և մշտադիտարկումը կարևոր են շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար:

Պետությունները պետք է երաշխավորեն միջազգային համագործակցությունը՝ ԸՀՎ-ի և կայուն, իրավունքների վրա հիմնված խնամակալության լուծումների հայտնաբերման և իրականացման համար:

Այս սկզբունքն ընդգծում է միջազգային համագործակցության անհրաժեշտությունը՝ ընտանիքի հայտնաբերման, իրավունքների վրա հիմնված կայուն լուծումների և խնամակալական մարմինների ներգրավման հարցերում: Պետությունները պետք է հստակ սահմանեն խնամակալի դերը՝ ընտանիքի հայտնաբերման, խնամքի փոխանցման, երեխաների թրաֆիքինգի կանխման և անհետացումների դեպքերում, հաստատեն իրավական շրջանակներ և հստակ հաղորդակցման ուղիներ՝ երեխայի լավագույն շահը առաջնահերթ դարձնելու համար: Պետությունների, խնամակալների և հաստատությունների միջև արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև լավագույն փորձի պարբերական փոխանակումը, կարևոր նշանակություն ունի միգրանտ երեխաների խնամակալության մակարդակի բարձրացման և նրանց բարեկեցության ապահովման համար՝ նույնիսկ երկրի սահմաններից դուրս:

Բացի այդ, Եվրոպական միության Հիմնարար իրավունքների խարտիայի 7-րդ հոդվածին և ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածին համահունչ՝ կարելի է ավելացնել ևս մեկ սկզբունք.

Ընտանեկան միասնությունը պետք է հարգվի և միշտ դիտվի որպես առաջնահերթություն:

Երեխայի լավագույն շահերին համապատասխանելու դեպքում պետությունները պետք է հայտնաբերեն նրա ընտանիքը, հնարավորության դեպքում կազմակերպեն առանց ուղեկցության երեխայի փոխանցումը և վերամիավորումը, ինչպես նաև հաշվի առնեն այլ անդամ պետություններում ընտանեկան կապերի առկայությունը:

3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԸ

3.1 Խնամակալության և այլընտրանքային խնամքի տեսակ

Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցները միջազգային շրջանակ են, որը հաստատվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 2009 թվականին՝ նպատակ ունենալով ապահովել, որ յուրաքանչյուր երեխա, ով ժամանակավորապես կամ մշտապես զրկված է ծնողական խնամքից, ստանա համապատասխան պաշտպանություն և խնամք: Դրանք ծառայում են որպես ուղղորդող փաստաթուղթ՝ կառավարություններին, հաստատություններին և խնամակալներին օգնելու՝ համապատասխան այլընտրանքային խնամք ապահովելու հարցում:

Դրանք, մասնավորապես, ընդգծում են այլընտրանքային խնամքի որակի կարևորությունը և այն անհրաժեշտությունը, որ երեխաները պետք է տեղավորվեն ապահով, հոգատար և ընտանիքի նման միջավայրում, որն ապահովում է կայուն, սիրալիր և անվտանգ մթնոլորտ: Համաձայն այդ ուղեցույցների՝ նման խնամքը կարող է ունենալ մի քանի ձևեր.

- **Բարեկամական խնամք.** ընտանեկան հիմքով խնամք՝ երեխայի ընդլայնված ընտանիքի շրջանակներում կամ ընտանիքի այն մոտ ընկերների կողմից, որոնք հայտնի են երեխային, անկախ նրանից՝ բնույթով պաշտոնական է, թե ոչ պաշտոնական է:
- **Խնամակալություն.** այն իրավիճակները, երբ երեխաները տեղավորվում են իրավասու մարմնի կողմից՝ այլընտրանքային խնամք տրամադրելու նպատակով երեխաների կենսաբանական ընտանիքներից տարբերվող ընտանիքահեն միջավայրում, որոնք ընտրվել, որակավորվել, հաշվառվել և վերահսկվել են նման խնամք ցուցաբերելու նպատակով:
- **Ընտանիքահեն կամ ընտանեկան խնամքին նման խնամքի այլ ձևեր** (օրինակ՝ վերահսկվող կենսապայմաններ):
- **Խնամք հաստատությունում.** ցանկացած խմբային միջավայր, որը չի հանդիսանում ընտանեկան (արտակարգ իրավիճակներում տարանցիկ կենտրոններ, խմբային տներ, մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ), անկախ նրանից՝ դրանք կարճաժամկետ են, թե երկարաժամկետ:

Առաջնահերթությունը պետք է միշտ տրվի համայնքային հիմքով, ընտանիքի նման պայմաններով երկարաժամկետ լուծումներին, որոնք հիմնված են առկա սոցիալական կառուցվածքների վրա: Երբ ընտանիքահեն խնամքը հնարավոր չէ, կարող է կիրառվել ժամանակավոր հաստատությունում խնամք և պաշտպանություն՝ որպես վերջին միջոց և հնարավորին չափ կարճ ժամանակով:

Ըստ Առանց ուղեկցության և անջատված երեխաների վերաբերյալ միջգործակալական ուղղորդող սկզբունքների[27], **խնամակալությունը՝** նշանակում է «պատասխանատվության վերապահում չափահաս անձի կամ կազմակերպության՝ ապահովելու համար, որ երեխայի լավագույն շահերը լիովին ներկայացված լինեն»: Խնամակալություն սահմանելու գործընթացը կարող է լինել վարչական կամ դատական:

Այս համատեքստում **խնամակալը** այն ֆիզիկական կամ իրավաբանական պատասխանատու չափահաս անձն է, որն ընտրվել, պատրաստվել և օրենքով լիազորվել է՝ աջակցելու, խնամելու, պաշտպանելու և ներկայացնելու երեխային նրա հետ կապված բոլոր գործընթացներում, նպատակ ունենալով ապահովել երեխայի լավագույն շահերը և անհրաժեշտության դեպքում իրականացնելու նրա իրավական կարողությունը: CM/Rec (2019)11 հանձնարարականում նշվում է, որ երբ հաստատությունը կամ կազմակերպությունը նշանակվում է որպես օրինական խնամակալ, պետք է նշանակվի նաև մի ֆիզիկական անձ՝ խնամակալի մյուս պարտականությունները կատարելու համար:

27 ՄԿԿԿ, ՄԱԿ ՓԳՀ, ՅՈՒՆԻՍԵՖ և այլք, 2004 թ.:

3.2 Աջակցության և ներկայացուցչության տեսակ

Իրավական դրույթները՝ աջակցության ծավալների և ձևերի առումով, տարբեր պետություններում տարբեր են: Գործառույթները ոչ մի տեղ հստակ ձևակերպված չեն, բացառությամբ ներկայացուցչության իրավական մասի, որն ամենասահմանափակվածն է:

ՀԻԳ–ը[28] սահմանում է խնամակալի համար երեք հստակ տարբերվող գործառույթ.



Այս տեսանկյունից, դատական գործընթացներում ներկայացուցչությունը կամ երեխայի սահմանափակ իրավունակության լրացումը, անհրաժեշտության դեպքում, զուգորդվում է երեխայի բարեկեցության և լավագույն շահերի պաշտպանության և ամրապնդման հետ:

Ընդհանուր պատկերացմամբ, խնամակալները կարող են պատասխանատու լինել՝

- պաշտպանելու երեխաների լավագույն շահերը, բարեկեցությունն ու զարգացումը,
- աջակցելու երեխաների իրավունքների իրագործմանը,
- ապահովելու, որ միգրացիոն քաղաքականության շրջանակներում նրանց նկատմամբ և նրանց համար կիրառվի իրավունքների վրա հիմնված՝ իրավահեն մոտեցում[29],
- ապահովելու երեխայի մասնակցությունը բոլոր փուլերում,
- երեխային ժամանակին, պարբերաբար և արդյունավետ տեղեկացնելու և աջակցելու բոլոր իրավական, վարչական, քրեական, միգրացիոն և դատական գործընթացներում (յուրաքանչյուր երեխայի խոցելիությունների,

28 ՀԻԳ , 2014 թ. :
29 CM/Rec (2019)11 հանձնարարական

ռիսկերի և կարիքների գնահատում, տարիքի գնահատում, լավագույն շահերի գնահատում, խնամակալության գործընթացներ, ընտանիքի հայտնաբերման գործընթացներ30, ընտանեկան կապերի գնահատում, բնակության վայրի փոփոխություն, անհետ կորած երեխաների հայտնաբերում, փաստաթղթերի հավաքագրում, հարցազրույցի նախապատրաստում) և որոշումների կայացման գործընթացներում,
- բռնության, շահագործման, թրաֆիքինգի, անտեսման, մարմնավաճառության կամ ցանկացած այլ չարաշահման կամ բռնության դեպքերի մասին հաղորդելու և երեխային դրանցից պաշտպանելու համար,
- աջակցելու նրանց կայուն խնամքի, կեցության, բավարար կենսապայման-ների, առողջապահության, կրթության և մասնագիտական վերապատրաստման մատչելիությանը[31],
- նպաստելու անհրաժեշտ սոցիալական շփումներին, կրոնական գործառնություններին, հանգստի հնարավորություններին, ինչպես նաև երեխայի նյութական կամ հուզական պայմաններին (ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի 14-րդ և 31-րդ հոդվածներ),
- աջակցելու չափահասության և անկախ կյանքի անցման հարցում:

Այս ամենը՝
- լսելով երեխայի կարծիքը,
- լինելով հասանելի և մատչելի,
- ձևավորելով վստահելի և հոգատար հարաբերություններ,
- վերաբերվելով երեխային հարգանքով և արժանապատվությամբ,
- պահպանելով և խրախուսելով բաց և մշակութայնորեն զգայուն հաղորդակցությունն ու արտահայտումը՝ ապահովելով գաղտնիություն,
- ստեղծելով նորմալության, ռեժիմի, հարմարավետության և անվտանգության զգացում,
- հանդիսանալով կապող օղակ երեխայի և բոլոր շահակից կողմերի, ներառյալ՝ իշխանությունների միջև[32]:

Անկախ նրանից, թե որքան լայն է խնամակալի պատասխանատվությունը, կարևոր է, որ խնամակալը նշանակվի հնարավորինս արագ՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր առանց ուղեկցության երեխայի տրամադրվի անհատականացված աջակցություն, կայացվեն որոշումներ, և պահպանվեն վարչական գործընթացների և ընթացակարգային քայլերի ժամանակացույցները (օրինակ՝ ապաստանի տրամադրման կամ բնակության վայրի փոփոխության դեպքում): Այն իրավիճակներում, երբ ժամանումները մեծանում են և նախատեսվում են ուշացումներ, կարելի է նշանակել ժամանակավոր խնամակալներ՝ այդ բացը լրացնելու համար[33]:

30 Անդրազգային ընթացակարգերի և ԸՀՎ-ի պարտականությունների ավելի մանրամասն նկարագրության համար տե՛ս ԵՄԱԳ «Միջազգային պաշտպանության շրջանակներում միջազգային ընթացակարգերը», 2024 թ.:

31 ԵՄԱԳ, 2024 թ. :

32 ԵՄԱԳ, 2023, «Սեյվ դը չիլդրեն», 2011 թ. :

33 ՀԻԳ, 2020 թ. :.

3.3 Խնամակալների ընտրության չափանիշները, պրոֆիլավորումը և ընտրությունը

Համաձայն ՀԻԳ-ի, խնամակալության գործառույթներ իրականացնելու իրավունք ունեն **երեք տեսակի անձինք՝** 1) ազգական և (կամ) երեխայի հետ կապված այլ անձ, 2) խնամակալության և հոգաբարձության մարմիններում աշխատող մասնագետ, 3) կամավոր ֆիզիկական անձ, որը երեխայի ազգականը չէ և որը խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից նշանակվել է որպես խնամակալ[34]:

Համաձայն ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի ուղեցույցների (2009 թ.) առաջարկության՝ առաջնահերթությունը սովորաբար տրվում է նախևառաջ մերձավոր ազգականներին կամ երեխայի ավելի լայն ընտանեկան միջավայրի մարդկանց, երկրորդ՝ երեխաների տեղավորմանը իր սեփական փախստական/միգրանտ համայնքում: Խնամակալությունը սովորաբար շնորհվում է ուղեկցող ընտանիքի չափահաս անդամին կամ ընտանիքից անջատված երեխայի դեպքում ոչ հիմնական խնամակալին, եթե չկան ապացույցներ, որ դա չի հակասի երեխայի լավագույն շահերին: Խնամակալության պիտանիության մանրակրկիտ քննություն անհրաժեշտ է, երբ երեխային ուղեկցում է չափահաս կամ խնամակալ, որը նրա ազգականը չէ: Լրացուցիչ միջոցներ (օրինակ՝ խորհրդատուի կամ օրինական ներկայացուցչի նշանակում) ձեռնարկվում են, եթե երեխայի խնամակալը կարող է և ցանկանում է մշտապես հոգ տանել երեխայի մասին, սակայն անկարող է արդյունավետորեն ներկայացնել երեխայի շահերը նրա կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր մակարդակներում: Ապաստանի ստացման գործընթացներում ներգրավված լինելիս ԱՈՒԸԱ երեխաների պետք է կարողանան օգտվել իրավաբանական ներկայացուցչի ծառայություններից:

Բոլոր դեպքերում, խնամակալները պետք է լինեն համապատասխանաբար վերապատրաստված, որակավորված և կարողանան լավ կողմնորոշվել ապաստանի, միգրացիայի և երեխաների պաշտպանությանը վերաբերող բարդ օրենքներում և ընթացակարգերում: Նրանց որակավորման պահանջները պետք է սահմանվեն ներպետական օրենսդրությամբ, ինչպես նաև հավաքագրման, վերապատրաստման և վերահսկողության քաղաքականությամբ՝ ապահովելու, որ խնամակալներն ունենան անհրաժեշտ փորձագիտություն, ներառյալ երեխաների բարեկեցության, հոգեբանության, մշակութային և գենդերային հարցերի, ինչպես նաև իրավական շրջանակի և երեխաների պաշտպանության ազգային համակարգի վերաբերյալ գիտելիքներ:

34 ՀԻԳ (2015) :

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը սահմանել է ցուցիչների մի շարք՝ գնահատելու համար, արդյոք խնամակալը պատշաճ կերպով օժտված է համապատասխան մասնագիտական գիտելիքներով: Նրանք պետք է ունենան աշխատանքային գիտելիքներ մի շարք ոլորտներում, ներառյալ՝ երեխաների իրավունքների, միգրացիայի և ապաստանի իրավունքի (միջազգային պաշտպանություն), մանկական զարգացման/հոգեբանության, հոգեկան տրավմայի, թրաֆիքինգի, միջմշակութային հաղորդակցության, երեխաների պաշտպանության, սոցիալական բարեկեցության և երեխայի ծագման երկրի իրավիճակի մասին: Խնամակալները պետք է նաև գիտակցեն իրենց անձնական և մասնագիտական սահմանները, ձգտեն շարունակական կատարելագործման և ակտիվորեն բացահայտեն և արձագանքեն իրենց ուսումնառական կարիքներին: Արդյունավետ գործերի կառավարումը, կազմակերպումը, հաշվետվողականությունը, ռեսուրսների (ներառյալ՝ ֆինանսական) կառավարումը և մեթոդաբանության պահպանումը պարտադիր են: Խնամակալները պետք է ստանան և փնտրեն համապատասխան աջակցություն, պարբերաբար կիսվեն իրենց փորձով գործընկերների կամ մասնագիտական համայնքի հետ, բաց լինեն վերահսկման նկատմամբ և մշտապես վերլուծեն իրենց գործողությունները, պարտականությունների կատարումը և մոտիվացիայի մակարդակը:

Նրանք նաև պետք է պատրաստ լինեն արդյունավետորեն արձագանքելու ՄԱՈՒԸԱ երեխաների կարիքներին և խոցելիություններին: Շատ հաճախ, երբ խնամակալները աշխատում են խնամակալության պետական մարմիններում, նրանք ունեն համապատասխան որակավորում՝ որպես սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, հոգեբան կամ իրավաբան մասնագետ: Երբ խնամակալները հանդես են գալիս որպես ֆիզիկական անձինք, ՀԻԳ-ի կողմից արձանագրված առավել տարածված նախապայմաններն են[35]՝

- լինել չափահաս (որոշ դեպքերում կարող են սահմանվել նվազագույն կամ առավելագույն տարիքային շեմեր),
- ունենալ իրավունակություն,
- հայտնել հստակ համաձայնություն,
- չլինել լիովին կամ մասնակիորեն զրկված ծնողական իրավունքներից օգտվելու իրավունքից,
- չլինել դատապարտված ծանր հանցագործությունների համար,
- լինել ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ (կարող է պահանջվել հոգեբուժական եզրակացություն),

35 ՀԻԳ, 2015 թ.:

- չլինել սնանկ ճանաչված,
- չունենալ շահերի բախում[36]:

Ցանկալի է, որ նշված չափանիշները հաշվի առնեն նաև խնամակալի և երեխայի անձնական կապերը, ինչպես նաև կրոնական և մշակութային գործոնները (օրինակ՝ երեխայի և խնամակալի միջև ընդհանուր լեզվի առկայությունը, երեխայի ազգային մշակույթի վերաբերյալ գիտելիքները և այլն):

Խնամակալության արդյունավետ իրականացման ապահովման նպատակով՝ նշանակման ենթակա անձը պետք է անցնի համապարփակ ստուգման գործընթաց, որը ներառում է երաշխավորագրերի և դատվածության ստուգում, հարցազրույց, ֆիզիկական և հոգեբանական առողջության վերաբերյալ բժշկական եզրակացություններ, ինչպես նաև վերապատրաստման փուլ՝ ընդգրկելով մշակութային զգայունության վրա հիմնված կարողությունների, վերաբերմունքի, մասնագիտական հմտությունների և հաղորդակցության վերաբերյալ ուսուցում: Լրացուցիչ փուլ է հանդիսանում աշխատանքի պայմաններին ծանոթացման գործընթացը, որի ընթացքում պետք է հստակեցվի ֆինանսական կողմը: Նպատակահարմար է, որ խնամակալն օգտվի համապատասխան վարձատրության իրավունքից: Դա կարող է իրականացվել ինչպես հաստատության կողմից որպես պաշտոնապես աշխատակցի կարգավիճակում, այնպես էլ՝ որպես կամավոր կամ ինքնազբաղված անձ: Բոլոր դեպքերում պետք է երաշխավորվի ծախսերի փոխհատուցում և սահմանվի պարգևավճար կամ արտոնությունների տրամադրում՝ խնամակալի կողմից իրականացվող գործառույթների դիմաց: Անշուշտ, այս պահանջներն ու ընտրության մեխանիզմները չեն կիրառվում այն պարագայում, երբ որպես խնամակալ նշանակվում է երեխայի ազգականը: Այս դեպքում առաջնահերթությունը երեխայի լավագույն շահն է, ինչպես նաև կենսաբանական կամ զգացմունքային կապերի առկայությունը, որոնք գերակայում են վերը նշված պահանջներին և ընթացակարգերին:

3.4 Ծնողական իրավունքներ

Խնամակալի նշանակումը, մասնավորապես՝ առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաների դեպքում, հիմնականում պաշտպանիչ միջոց է, որը նախատեսված է երեխայի բարեկեցությունն ապահովելու և նրա լավագույն շահերը իրավական և վարչական հարցերում ներկայացնելու համար (Ընդունման պայմանների մասին 2013/33/ԵՄ հրահանգի 24-րդ հոդված): Սակայն դա չի նշանակում, որ ծնողները ավտոմատ կերպով զրկվում են ծնողական իրավունքներից: Խնամակալությունը կարող է ժամանակավոր բնույթ կրել, եթե ծնողները հետագայում հայտնաբերվեն, կարողանան վերամիավորվել

36 ՀԻԳ, 2015 թ.:.

երեխաների հետ և հոգ տանել նրանց մասին:

Սակայն եթե ծնողները հայտնաբերվում են, և առկա են բավարար հիմքեր կարծելու, որ երեխան կարող է վտանգի տակ լինել, ենթարկվել բռնության, անտեսման, կամ եթե ծնողները չեն կատարում իրենց ծնողական պարտականությունները, կամ չեն կարողանում հոգ տանել երեխայի մասին[37], դատարանը կարող է որոշում կայացնել ծնողական իրավունքների դադարեցման և մշտական խնամակալության վերականգնման մասին, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից (ՄԱԿ ԵԻԿ 9-րդ հոդված): Լինում են նաև դեպքեր, երբ խնամակալ է նշանակվում երեխայի կյանքի որոշակի կողմերը կառավարելու համար, ինչպիսիք են իրավական հարցերը կամ կրթությունը, մինչդեռ ծնողները պահպանում են այլ պարտականություններ:

3.5 Երեխաներին տեղեկատվության տրամադրում և մասնակցություն

Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից՝ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների կենսապայմանների և իրավական ընթացակարգերի վերաբերյալ, ԵՄ 12 անդամ պետություններում անցկացված լայնածավալ հարցման համաձայն, ընդունող երկրում երեխաների համար ընթացակարգերի կամ հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության պակաս կա: Դա խնդրահարույց է, քանի որ երեխաները դիմում են «հնարավոր է՝ անվստահելի տեղեկատվական աղբյուրների, ինչպիսիք են՝ հայրենակիցները, հասակակիցները կամ նույնիսկ նրանք, ովքեր նրանց անօրինական ճանապարհով տեղափոխել են»[38] :

Այնուամենայնիվ, ժամանակին և անհրաժեշտ տեղեկատվություն ունենալը կարևոր է տեղեկացված որոշումներ կայացնելու և հասանելի ծառայություններից ու աջակցությունից օգտվելու համար, քանի որ այն կենսական նշանակություն ունի իրավունքների պաշտպանության և իրավունքների խախտումների ռիսկերը հաղթահարելու համար: Այն ներառում է հետևյալի մասին տեղեկություններ՝

- խնամակալների և ցանկացած այլ ներգրավված կողմերի և շահագրգիռ կողմերի գործառույթները, իրավունքները, պարտականությունները և հասանելիությունը,
- դրանց նկատմամբ կիրառվող սկզբունքները, ներառյալ հաղորդակցության, գաղտնիությունը և տվյալների պաշտպանության պարտավորությունները,
- մատչելի գանգատարկման մեխանիզմները,
- դրանց գծով վարույթները,

37 Ծանր հոգեկան հիվանդության, թմրամիջոցներից կախվածության կամ անաշխատունակության պատճառով:
38 ՀԻԳ, 2023թ. :

- պաշտպանության միջոցները և իրավունքները (CM/Rec(2019)11 հանձնարարական):

Տարբեր համապատասխան փաստաթղթերում շեշտվում է այս տեղեկատվության կարևորությունը, որը պետք է լինի.

- բավարար,
- դյուրըմբռնելի,
- երեխայակենտրոն,
- ժամանակին,
- համապատասխան յուրաքանչյուր դեպքի համար,
- համապատասխանեցված և հարմարեցված երեխայի հանգամանքներին (կարդալու կարողության, տարիքին, հասունությանը, լեզվի իմացությանը և այլն),
- գենդերազգայուն և մշակութազգայուն:

3.6 Մշտադիտարկման համակարգ, խնամակալների վերահսկողություն և հսկողություն

Համաձայն Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամքի վերաբերյալ անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)11 հանձնարարականի, կարելի է կազմակերպել մշտադիտարկման երեք տարբեր մակարդակներ.

ա. խնամակալների մշտադիտարկում,
բ. խնամակալական միջոցների մշտադիտարկում,
գ. խնամակալության համակարգի/գործընթացի մշտադիտարկում:

Խնամակալների մշտադիտարկման շրջանակներում կարելի է տարբերակել ինչպես անձի ուղղակի մշտադիտարկումը, այնպես էլ խնամակալների պարտականությունների և գործառույթների իրականացման նկատմամբ մշտադիտարկումը: Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր մակարդակի մշտադիտարկման համար մի շարք օրինակներ.

I. <u>Խնամակալների մշտադիտարկում՝</u> որակավորումներ, զտման կամ բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության ընթացակարգեր, քրեական անցյալի պարբերական ստուգումներ, նախկին գործատուների/գործընկերների կողմից տրվող երաշխավորագրերի ստուգում, նշանակման ՍԳԸ, էթիկական վարքագծի կանոնագիրք, հոգեկան առողջության աջակցության մատչելիություն, շահերի բախման գնահատում և այլն:
   Խնամակալների պարտականությունների և գործառույթների նկատմամբ մշտադիտարկում՝ վերապատրաստման և մասնագիտական կարողությունների զարգացման մշտադիտարկում,

հստակ ձևավորված կարողությունների շրջանակ կամ տեխնիկական առաջադրանքներ, աշխատատեղում վերահսկողություն, տարեկան արդյունավետության գնահատում, կամայական որոշումների կամ պարտականությունների չկատարման դեմ արդյունավետ կարգապահական ընթացակարգեր, գործողությունների արձանագրում և այլն:

ii. Խնամակալության կազմակերպման նկատմամբ մշտադիտարկում՝ երեխաների համար անհատական գանգատարկման մեխանիզմներ, տարեկան գնահատումների գործընթացներ, ֆինանսական վերահսկում, որակի ստուգաթերթեր, երեխաների պաշտպանության ներքին հաշվետվական ընթացակարգեր, ամսական հաշվետվություններ անհատական դեպքերի վերաբերյալ, կանոնավոր վիճակագրություն և առաջընթացի ցուցանիշներ, տեսչական ստուգումներ և այլն:

iii. Խնամակալության համակարգի/գործընթացի ինքնին մշտադիտարկում՝ ստանդարտներ, համակարգային ՍԳԸ-ներ, համապատասխանության մոնիթորինգ (օրենքների և կանոնակարգերի պահպանման տեսանկյունից), դիագնոստիկ մշտադիտարկում (ապահովելու համար, որ ՄԱՈՒԸԱ երեխաներն իրականում ստանում են այն պաշտպանական ծառայությունները, որոնք պետք է ստանան), կատարողականի մշտադիտարկում (ինստիտուցիոնալ արդյունքների գնահատում) և այլն[39]:

Հանձնարարականն անդրադառնում է նաև վերահսկողությանը և ուղղորդմանը: Մշտադիտարկումը, վերահսկողությունը և ուղղորդումը փոխկապակցված են և միտված են ապահովելու, որ խնամակալությունը ճիշտ ձևով իրականացվի, սակայն դրանք տարբերվում են ծավալով, կենտրոնացվածությամբ և իրականացման ձևով:

Մշտադիտարկումը ենթադրում է պարբերական, շարունակական, չընդմիջող և կոնկրետ հետևում, դիտարկում և տվյալների հավաքագրում՝ նպատակ ունենալով համոզվելու, որ գործընթացները, համակարգերը կամ գործողությունները ընթանում են ըստ ծրագրի կամ չափանիշների, ինչպես նաև՝ առաջընթացի և արդյունավետության հետևում[40]: **Ուղղորդումը** վերաբերում է ուղղակի, տեղում իրականացվող, իրական ժամանակում կատարվող և անմիջական աջակցությանը, առաջնորդությանը և օժանդակությանը, որը տրամադրվում է աշխատողներին և գործառույթների իրականացմանը՝ ապահովելու համար, որ վերջիններս ստանան իրենց առաջադրանքները կատարելու համար անհրաժեշտ աջակցությունն ու հետադարձ կապը, ինչպես նաև՝ ենթակա լինեն զննման, վերահսկման և գնահատման[41]: **Վերահսկողությունն** ըստ ՏՀԶԿ-ի սահմանման՝ «գործա-

39 ՅՈՒՆԵՍԿՈ, 2011 թ.:
40 ՏՀԶԿ, 2022 թ.:
41 ՅՈՒՆԵՍԿՈ, 2011 թ. 2011 թ.:

ռույթ է, որի շրջանակներում տվյալ առաջադրանքը կատարող մարմնից անկախ գործող լիազոր մարմինն իրավունք ունի գնահատելու, ուղղորդելու կամ կարգավորելու աշխատանքը», ինչն ընդգծում է այդ գնահատման գործընթացի ավելի բարձր մակարդակը, լայնածավալ և ռազմավարական բնույթը, թիրախավորելով գործընթացները, քաղաքականությունը կամ հաստատությունը՝ հաշվետվողականությունը և պատշաճ կառավարումն ապահովելու համար: Այս մակարդակում վերահսկող մարմինը, որը մշակում է ինստիտուցիոնալ միջոցառումներ, պետք է լինի մասնագիտացված և զբաղվի բացառապես խնամակալությամբ:

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ՀԱՅԱՑՔՈՎ

Ներգրավվածության մակարդակ.

- Մշտադիտարկումը հաճախ իրականացվում է ավտոմատացված կամ համակարգային եղանակով՝ նվազագույն անմիջական միջամտությամբ:
- Ուղղորդումը ներառում է ակտիվ մասնակցություն և անհապաղհետադարձ կապ:
- Վերահսկողությունը համեմատաբար հեռավոր է՝ միջամտությունները կատարվում են խախտումների մասին հաղորդումների հիման վրա:

Նպատակ.

- Մշտադիտարկման նպատակը կատարողականին հետևումն է:
- Ուղղորդման նպատակը գործառույթների արդյունավետ իրականացումն է:
- Վերահսկողության նպատակը՝ բարձր մակարդակով հաշվետվողականության և բարեվարքության ապահովումն է:

Հարկ է նշել, որ մշտադիտարկումը կարող է լինել անկախ (արտաքին, որն իրականացվում է դատարանների, իշխանությունների, անկախ փորձագետների կողմից) կամ ներքին ղեկավարմամբ (վերահսկիչ խորհուրդ, սոցիալական ապահովության գրասենյակներ, քաղաքային մարմին, միգրացիոն ծառայություններ, սոցիալական հարցերի և ընտանիքի նախարարություն և այլն)[42]:

Այս դեպքում կրկին, մասնակցության սկզբունքին համապատասխան, երեխաների հետ պետք է խորհրդակցել, և նրանք պետք է ակտիվորեն մասնակցեն մշտադիտարկմանը. տե՛ս մշտադիտարկմանը երեխաների

42 ՀԻԳ, 2014 թ.:

մասնակցության մի քանի օրինակ[43]:

3.7 Ուղղորդման ընթացակարգեր

Ուղղորդման մեխանիզմը (ՈՒՄ) կառուցակարգված համակարգ է, որը գործում է ներպետական մակարդակում և միտված է աջակցելու երկրի իշխանություններին՝ իրենց պարտավորությունը կատարելու՝ խոցելի անձանց, այդ թվում՝ ՄԱՈՒԸԱ երեխաների պաշտպանությունը և իրավունքների առաջխաղացումն ապահովելու ուղղությամբ: Այն գործում է համակարգված մոտեցմամբ, ապավինելով քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը՝ նպատակ ունենալով արդյունավետ կերպով ուղեգրել խոցելի անձանց առավել համապատասխան և նպատակահարմար աջակցման ծառայությունների[44]:

Երեխաների պաշտպանության համար պատասխանատու պետական մարմինները կամ երրորդ երկրների քաղաքացիների և ապաստանի դիմող անձանց ընդունման համար պատասխանատու գործակալությունները սովորաբար վերահսկում են Ազգային ուղղորդման մեխանիզմների (ԱՈՒՄ-ների) գործունեությունը: Այդ մեխանիզմները հաճախ իրականացվում են ազգային խնամակալության մարմնի հետ համագործակցությամբ[45]:

Որոշ դեպքերում այս մեխանիզմը կազմակերպվում է ՍԳԸ-ների հավաքածուի տեսքով, որոնք կարող են գործադրվել ցանկացած պահի: Նույն տրամաբանությամբ՝ այս մոտեցման հիմքում ընկած է արագ և համակարգված արձագանքման ապահովումը, ինչպես նաև ծառայությունների փոխգործունակությունը՝ խոցելի կամ ռիսկի ենթակա երեխաներին պաշտպանելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ նրանց կապելով համապատասխան ծառայությունների հետ՝ անհրաժեշտ խնամք և պաշտպանություն ստանալու համար:

ՄԱՈՒԸԱ երեխաներին առավել հաճախ հայտնաբերում է ոստիկանությունը կամ միգրացիոն մարմինները՝ նույնականացման ստուգումների կամ սահմանային միգրացիոն գործընթացների ընթացքում: Դա կարող են անել նաև միգրացիայի ոլորտի առաջնագծում աշխատող մասնագետները, երեխաների պաշտպանության ոլորտի անձնակազմը, սոցիալական աշխատողները, հասարակական կազմակերպությունների

43 ՀԻԳ, 2014 թ.: Երեխաների հետ տարբեր մակարդակներով իրականացվող վերահսկման վերաբերյալ Ավելի մանրամասն մեթոդաբանական տեղեկատվության համար կարող եք դիմել «CREATE – Երեխաների իրավունքների կրթություն Արևելյան Աֆրիկայում» առցանց մոդուլներին, հատկապես Մոդուլ 5-ին՝ «Մոդուլ 5 - Երեխաների իրավունքներ. պլանավորում, մշտադիտարկում և գնահատում», որը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://www.open.edu/openlearncreate/mod/oucontent/view.php?id=53774&section=2.5.1:

44 Frontex, 2019 թ. 20 :Տես Frontex-ի առաջարկությունները արդյունավետ ուղեգրման մեխանիզմների սահմանման վերաբերյալ՝ Հավելված 5-ում, Frontex, 2019 թ. 20:

45 Նույն աղբյուրը:

աշխատակիցները կամ նույնիսկ ֆիզիկական անձինք:

ՄԱՈՒԸԱ երեխային հայտնաբերելուց հետո (կամ եթե կան ողջամիտ կասկածներ, որ երեխան ուղեկցվում է անձանց կողմից, ովքեր նրա հարազատները չեն և չունեն պաշտոնական իրավասություն նրա նկատմամբ, կամ հիմնավոր կասկածներ, որ երեխան կարող է լինել վտանգի մեջ, կամ ռիսկային վիճակում՝ նույնիսկ երբ ուղեկցվում է իր ծնողների կողմից), նախքան որևէ որոշման կայացումը նա պետք է անմիջապես ուղղորդվի՝ կիրառելի ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Երեխան կարող է ուղղորդվել դատարան, երեխաների պաշտպանության մարմին կամ սոցիալական ծառայություններ: Իդեալական տարբերակով ուղղորդման մեխանիզմը պետք է ապահովի խնամակալի ժամանակին նշանակումը և երեխայի պաշտպանությունը: Այս ընթացակարգը, ինչպես նաև հետագա ՄԱՈՒԸԱ երեխաների համար և կարող են լրացվել՝ ընդգրկելով ուղղորդում դեպի համապատասխան ծառայություններ (բուժօգնության, կացության ապահովման, հոգեկան առողջության, սոցիալական ծառայություններ, իրավաբանական աջակցության և այլն):

Ուղղորդման ընթացակարգն առավել արդյունավետ դարձնելու նպատակով խորհուրդ է տրվում յուրաքանչյուր հասանելի ծառայության համար ունենալ հստակորեն որոշված, հայտնի և ճանաչելի կոնտակտային անձ և նրա տվյալները՝ փոխանցման ժամանակահատվածը կրճատելու և ուղեգրողից ընդունող ծառայության փոխանցման ընթացքում բուժման կամ աջակցման ուշացումները նվազեցնելու նպատակով[46]:

3.8 Տարիքի գնահատման ընթացակարգեր

Բոլոր երեխաները՝ հատկապես առավել խոցելի խմբերը, ինչպիսիք են՝ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաները, իրավունք ունեն երաշխավորված պաշտպանության, իսկ պետությունները պարտավոր են հարգել և պաշտպանել նրանց ինքնությունը՝ ներառյալ երեխայի անուն ունենալու, քաղաքացիության և ընտանեկան կապերի իրավունքը: Երբ առկա են երեխայի փաստացի տարիքին առնչվող անորոշություններ, օրինակ՝ ԱՈՒԸԱ երեխաները չունեն համապատասխան և հավաստի նույնականացման, գրանցման կամ փաստաթղթավորման հնարավորություն, անհրաժեշտ է նրանց ուղղորդել հավաստագրված **տարիքի գնահատման մեխանիզմի՝** ապահովելու նրանց իրավունքների և պաշտպանության պատշաճ իրագործումը:

Ըստ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված CM/Rec(2022)22 հանձնարարականի՝

46 Նույն աղբյուրը:

միգրացիայի համատեքստում տարիքի գնահատման վերաբերյալ մարդու իրավունքների սկզբունքների և ուղեցույցների մասին, տարիքի գնահատումը վերաբերում է ցանկացած գործընթացի, որը իրականացվում է իրավասու մարմնի կողմից՝ անձի տարիքն անուղղակիորեն գնահատելու նպատակով: Նման գնահատումն և համապատասխան որոշումը պետք է հաշվի առնի ոչ միայն տվյալ անձի ֆիզիկական արտաքինը, այլև հոգեբանական հասունությունը: Տարիքի գնահատումը պետք է իրականացվի գիտականորեն հիմնավորված, անվտանգ, երեխայակենտրոն, գենդերազգայուն և արդար եղանակով՝ բացառելով երեխայի ֆիզիկական անձեռնմխելիությանը վնաս հասցնելու ցանկացած ռիսկ և լիովին հարգելով մարդու արժանապատվությունը: Տարիքի գնահատման նպատակով ցանկացած բժշկական զննում պետք է իրականացվի միայն այն դեպքում, երբ այլ բոլոր միջոցները սպառվելուց հետո դեռևս առկա են ողջամիտ կասկածներ տվյալ անձի ենթադրյալ տարիքի վերաբերյալ:

Համաձայն Երեխայի իրավունքների կոմիտեի՝ «Իրենց ծագման երկրից դուրս գտնվող առանց ուղեկցության և ընտանիքից բաժանված երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին» թիվ 6 ընդհանուր մեկնաբանության, մինչ այդ գնահատման պատշաճ կատարումը կամ անորոշության պահպանման դեպքում, անձին պետք է տրվի կասկածի նախապատվության իրավունք, քանի որ անչափահասության կանխավարկածի սկզբունքը պետք է գերակայի, և անձին պետք է վերաբերվել որպես այդպիսին[47]:

3.9 Ապաստանի ընթացակարգեր

Ապաստանի իրավունքը հետապնդումների ենթարկվող անձանց թույլ է տալիս պաշտպանություն հայցել իրենց ծագման երկիր չհանդիսացող որևէ այլ երկրում, ինչպես համաձայնեցված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (ՄԻՀՀ) (հոդված 14-ի 1-ին մաս) և Փախստականների մասին կոնվենցիայում: Այս վերջին փաստաթուղթը նաև սահմանում է պետությունների պարտականությունները ապաստան տրամադրելու հարցում, մասնավորապես՝ ապաստան հայցողներին կամ փախստականներին այն երկիր վերադարձնելու արգելքը, որտեղ նրանց կյանքը կարող է վտանգված լինել, ինչը հայտնի է որպես **չվերադարձելիության սկզբունք**:

Այս սկզբունքները հիմք են հանդիսանում փախստականների և տեղահանված անձանց միջազգային պաշտպանության, անվտանգության և արժանապատվության համար: Դրանք, անշուշտ, կիրառելի են ՄԱՈՒԸԱ երեխաների նկատմամբ: Երեխայի երկիր ժամանելուն պես և ապաստանի ընթացակարգի ողջ ընթացքում նշանակված խնամակալը (նույնիսկ ժամանակավոր) պարտավոր է.

47 ԵԻԿ/ՄՊ/2005/6, 2005 թ. կետ 31(ա):

- Երաշխավորել երեխայի՝ երկրի տարածքում կացության իրավունքը մինչև ապաստանի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը (և ապահովել համապատասխան և անվտանգ կացարան):
- Ուղեկցել երեխային հարցազրույցի և փաստաթղթերի ձևակերպման ամբողջ գործընթացում:
- Պաշտպանել երեխայի լավագույն շահերը և ապահովել նրա լիարժեք մասնակցությունը վարույթի բոլոր փուլերում:
- Տրամադրել երեխայի հարմար բարենպաստ, սեռին, տարիքին և համատեքստին համապատասխանող բացատրություններ՝ երեխային հասկանալի լեզվով[48]:

Միևնույն ժամանակ, երբ «խնամակալությունը» վերաբերում է երեխայի խնամքի պարտականություններ ստանձնող մեծահասակներին (օրինակ՝ խնամատար ծնողներին), նրանք սովորաբար չեն մասնակցում ապաստանի գործընթացներին: Նույնը վերաբերում է նաև լավագույն շահերի որոշման գործընթացներին[49]:

3. 10 Իրավաբանական օգնության և արդարադատության հասանելիություն

Եվրոպայի խորհուրդը երեխայակենտրոն արդարադատությունը սահմանում է որպես «արդարադատության համակարգ, որը երաշխավորում է բոլոր երեխաների իրավունքների հարգանքը և արդյունավետ իրականացումը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով երեխայի հասունության և ըմբռնման մակարդակին, ինչպես նաև գործի հանգամանքներին: Այն ներառում է մատչելի, տարիքին համապատասխան, արագ, ջանասիրաբար, արձագանքող և երեխայի կարիքներին ու իրավունքներին կենտրոնացած արդարադատություն, որը հարգում է երեխայի իրավունքները՝ ներառյալ պատշաճ դատավարության, դատավարություններին մասնակցելու և հասկանալու, անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի, ինչպես նաև արդարության և արժանապատվության իրավունքները»[50]:

Ընդհանուր առմամբ, ՄԱՌԸԱ երեխաների համար իրավաբանական օգնության համար կարելի է դիմել մի քանի պատճառով.

- Անշուշտ, ապաստան տալու ընթացակարգը ենթադրում է օրենքի հետ առնչություն մինչև երեխայի վարչական կարգավիճակի որոշումը: Այն նախատեսում է նաև լրացուցիչ ընթացակարգեր, օրինակ՝ տարիքի գնահատում:

Միգրացիոն համակարգերը պետք է հարմարեցվեն երեխաներին և հարգեն նրանց

48 ՀԻԳ, 2023 թ.:
49 ՄԱԿ ՓԳՀ-ն, 2008 թ.:
50 Երեխաներին համար բարենպաստ արդարադատության մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի ուղեցույցներ, հոդված II ա:

իրավունքները, հաշվի առնեն նրանց հատուկ կարիքները և հանգամանքները, և ապահովեն, որ երեխան լինի գործընթացի հավասար և ակտիվ գործընկեր[51]:

- Խնամակալությունը կարող է պաշտոնապես հաստատվել դատարանի կամ դատավորի կողմից:

Դա կարող է լինել արդյունավետ պաշտպանության մի մասը և նպաստել ՄԱՌԻԱ երեխաների համար երկարաժամկետ լուծում գտնելուն՝ նրանց լավագույն շահերից ելնելով:

- Գանգատների դեպքում (մշտադիտարկման գործընթացների շրջանակներում, տե՛ս 3.6 բաժինը):

Խնդիրների առաջացման դեպքում առանց ուղեկցության երեխաները և/կամ նրանց խնամակալը պետք է կարողանան անհապաղ տեղեկացնել այդ մասին իրավական խորհրդատուներին՝ մատչելի, արդյունավետ և օգտագործման համար պարզ գանգատարկման մեխանիզմների միջոցով[52]: Երեխաները նաև պետք է կարողանան օգտվել գանգատարկման մեխանիզմի կողմից կայացված որոշման դեմ պաշտպանության միջոցներից՝ դիմելով իրավասու, անաչառ և անկախ մարմնի այն դեպքերում, երբ գանգատարկման մեխանիզմն Եվրոպայի խորհրդի վերոնշյալ հրահանգի 5-րդ սկզբունքի բաժին 2.5-ի համաձայն՝ չի հանդիսանում դատական մեխանիզմ:

- Երբ ՄԱՌԻԱ երեխան հանցագործության տուժող, վկա կամ մեղադրյալ է:

Խառը միգրացիոն հոսքերում երեխաները, մասնավորապես՝ ՄԱՌԻԱ երեխաները հատկապես խոցելի են շահագործման և քրեական զոհականացման այլ ձևերի նկատմամբ, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգի: Նրանց խոցելիությունը կարող է պահպանվել նաև միգրացիայի նպատակակետ երկրում հաստատվելուց հետո, որտեղ այդ երեխաները կարող են տարբեր ձևերով ենթարկվել քրեական զոհականացման, այդ թվում՝ մեծահասակների կողմից քրեական գործունեության մեջ նրանց ներգրավմամբ: Ինչ վերաբերում է տվյալ երկրի երեխաներին, լավագույն տարբերակն է, որ պետություններն ապավինեն անչափահասների արդարադատության հիմնարար սկզբունքներին և սահմանեն նվազագույն տարիք, որից սկսած անչափահասների նկատմամբ կարող է դատական վարույթ իրականացվել՝ հարմարեցված, առանձնացված և մասնագիտացված իրավական համակարգի կողմից:

Երբ երեխան մեղավոր է ճանաչվում հանցագործության մեջ, պատժի փոխարեն պետք է նախընտրել վերականգնողական միջոցները՝ առաջնահերթությունը տալով երեխայի լավագույն շահերին՝ անկախ այլ նկտառումներից, միևնույն ժամանակ ապահովելով, որ հանցագործություն կատարած երեխան իր տարիքին և

51 Նույն աղբյուրը :
52 Նույն աղբյուրը :

փոփոխության ունակությանը համապատասխանեցված պատասխանատություն կրի իր արարքների համար վերականգնողական մոտեցման միջոցով: Առաջնահերթ պետք է կիրառվեն կալանավորմանն այլընտրանք հանդիսացող միջոցներ, և միայն ծայրահեղ դեպքերում և հնարավորինս կարճ ժամանակով կարելի է երեխաներին կալանավորել, ձերբակալել կամ ազատազրկել: Երեխաները չպետք է պահվեն մեծահասակների հետ նույն քրեակատարողական հիմնարկում և պետք է ունենան իրենց ընտանիքի հետ կապ պահպանելու հնարավորություն: Պետությունները պետք է վերահսկեն իրավական համակարգը, որը նպաստում է օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների վերահնտեգրմանը հասարակության մեջ՝ ինչպես ամրագրված է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայում (37-րդ և 40-րդ հոդվածներում):

- Երբ երեխան հատուկ կարիքներ ունի

«Հատուկ կարիքներ» ասելով նկատի ունենք ցանկացած տեսակի խոցելիություն կամ իրավիճակ, որը պահանջում է հատուկ աջակցություն, օրինակ՝ թրաֆիքինգի/մարդու մաքսանենգության իրավիճակներ, գենդերային հիմքով բռնություն և ռիսկեր (սեռական շահագործում, հղիություն, սեռական օրգանների խեղում, հարկադրական և վաղ ամուսնություններ և այլն), մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն, շահագործվող երեխաներ, ընտանիքի հաց վաստակող հանդիսացող երեխաներ, քաղաքացիություն չունեցող երեխաներ, պատանեկության տարիքում ծնող դարձած երեխաներ, զինված խմբերում ներգրավված երեխաներ, լուրջ հիվանդություններով տառապողներ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներ, տարբեր սեռական կողմնորոշում կամ գենդերային ինքնություն ունեցող երեխաներ, ինչպես նաև անտեսված երեխաներ:

Ցանկացած ՄԱՌԸԱ երեխա պետք է արժանանա հարգալից և պատշաճ վերաբերմունքի և իրավասու լինի ստանալ անվճար և շուտափույթ իրավաբանական օգնություն, այդ թվում՝ իրավական ներկայացուցչի կողմից և այլ համապատասխան աջակցության: Նման իրավաբանական օգնությունն անհրաժեշտ է արդարադատության մատչելիությունը, արդար դատաքննության գործընթացը, նրանց իրավունքների հարգումը և արդյունավետ պաշտպանությունը ապահովելու համար: Այն պետք է լինի հարմարեցված, ապահով, գաղտնի և երեխայի համար բարենպաստ՝ ինչպես մատնանշված է Եվրոպայի խորհրդի հանձնարարականի 5-րդ սկզբունքի, բաժին 2.5-ում:

Ինչպես ընդգծում է ԵՄ Փախստականների և վտարանդիների հարցերով եվրոպական խորհուրդը, ներկայումս գոյություն չունի ամբողջական և միասնական «ստուգացանկ»՝ համապատասխան ցուցիչներով, որոնք ցույց կտան, թե ինչն է համարվում որակյալ օգնություն առանց ուղեկցության երեխաների համար նախատեսված իրավաբանական օգնության համակարգերում, սակայն գոյություն ունեն ընդհանուր սկզբունքներ. աջակցությունը պետք է հարգի երեխաների իրավունքները, նպաստի երեխայի պաշտպանության համակարգին,

լինի հնարավորինս արագ և արդյունավետ, ապահովի ՄԱՌԸԱ երեխայի մասնակցությունն ու ներգրավվածությունը, ճիշտ չափավորված լինի (ժամանակի, որակավորման, գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի, ֆինանսական և մարդկային ռեսուրսների տեսանկյունից), ենթարկվի մշտադիտարկման և գնահատման, և, անհրաժեշտության դեպքում, ներկայացվի որակյալ թարգմանիչների կողմից՝ այն երեխաների համար հասանելի և մատչելի դարձնելու նպատակով[53]:

Յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքներին համակարգված արձագանք ապահովելու համար իրավական խորհրդատուները և խնամակալները պետք է փոխլրացնեն միմյանց աշխատանքը, պահպանեն կանոնավոր հաղորդակցություն և կառուցողական փոխհարաբերություններ[54]:

53 2014թ. :
54 Նույն աղբյուրը

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (ՈՒՂԻ)

4.1 Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար ապաստանի ընթացակարգի տեսողական սխեմա

1. ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Իրավասու մարմինների (սահմանի հսկողություն, ոստիկանություն, միգրացիոն ծառայողներ) կամ ՀԿՀ-ների, սոցիալական աշխատողների, անհատների կողմից նույնականացում

2. ԳՐԱՆՑՈՒՄ

Երեխայի մասին հիմնական տեղեկատվության (անուն, տարիք, քաղաքացիություն և այլն) և փաստաթղթերի հավաքագրում

3. ՈՒՂԵԳՐՈՒՄ

Ուղեգրում ԵՊ ծառայություններ /մարմիններ/դատարան

4. ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԽՆԱՄՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Անհետաձգելի պաշտպանություն՝ օրինական խնամակալի և/կամ սոցիալական աշխատողի նշանակում առանց անհարկի ուշացման

5. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ

Իրավական կարգավիճակի որոշում; տարիքի գնահատում; պաշտպանություն վերադարձից

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Կրթություն, առողջապահություն, հոգեսոցիալական աջակցություն, ինտեգրման աջակցություն, իրավաբանական օգնություն

7. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Կարգավիճակի որոշում

8. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԽՆԱՄՔԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ընտանիքի որոնում, հաստատում և վերամիավորում (երկրի ներսում կամ սահմաններից դուրս). խնամակալություն վերատեղաբերում. որդեգրում՝ միայն որպես վերջին միջոց:

4.2 Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներ՝ խնամակալության գործընթաց



Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաները (ԱՈՒԸԱ) իրավունք ունեն միջազգային պաշտպանության՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային իրավունքի, փախստականների մասին միջազգային իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի և տարբեր տարածաշրջանային փաստաթղթերի:

1951 թվականի Փախստականների մասին կոնվենցիան և 1967 թվականի արձանագրությունը (Փախստականների կարգավիճակի վերաբերյալ) սահմանում են չափանիշներ, որոնք հավասարապես վերաբերում են երեխաներին և մեծահասակներին:

1. «Հիմնավորված հետապնդման վախ ունեցող» երեխան համարվում է «փախստական»:

2. Այն երեխան, ով ունի փախստականի կարգավիճակ, չի կարող հարկադրաբար վերադարձվել ծագման երկիր (չվերադարձելիության սկզբունք)[55]:

3. Սոցիալական բարեկեցության և իրավական իրավունքների առումով երեխաների և մեծահասակների միջև տարբերություն չի դրվում[56]:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (ՄԱԿ ԵԻԿ) և դրա կամընտիր արձանագրությունները[57] հանդիսանում են մարդու իրավունքների հիմնական միջազգային փաստաթղթերը՝ ապահովելով առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար կարևոր պաշտպանություն և սահմանելով ամենալայնածավալ չափանիշները: Կոնվենցիան պարունակում է հոդվածներ, որոնք հատկապես կարևոր են միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար: Ստորև ներկայացվում է հիմնական համապատասխան հոդվածների ցուցակը: Մանրամասների համար կարող եք ծանոթանալ Հավելված 4-ին:

- **4-րդ հոդված.** Պաշտպանության իրավունք
- **7-րդ հոդված.** Ծննդյան գրանցման, անվան և քաղաքացիության իրավունք
- **8-րդ հոդված**. Ինքնության իրավունք
- **9-րդ հոդված**. Ընտանիքի միասնության իրավունք
- **10-րդ հոդված.** Ընտանիքի վերամիավորման իրավունք

55 Այս սկզբունքի բացատրությունը տե՛ս 3.4 բաժնի 23-րդ էջում:
56 ՄԱԿ ՓԳՀ, 2001 թ.:
57 Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն, Զինված հակամարտություններում երեխաների ներգրավման մասին կամընտիր արձանագրություն, Հաղորդակցության ընթացակարգի մասին կամընտիր արձանագրություն:

- **13-րդ հոդված**. Տեղեկատվության հասանելիության իրավունք
- **14-րդ հոդված.** Մտքի և կրոնի ազատություն
- **16-րդ հոդված.** Անձնական կյանքի անձեռնմխելիություն
- **19-րդ հոդված.** Բռնությունից պաշտպանված լինե;ու իրավունք
- **20-րդ հոդված.** Ալընտրանքային խնամքի իրավունք
- **22-րդ հոդված.** Փախստականի՝ հատուկ պաշտպանության և օգնության իրավունք
- **23-րդ հոդված.** Հաշմանդամության դեպքում հատուկ խնամքի և աջակցության իրավունք
- **24-րդ հոդված.** Բարձրորակ, անվտանգ առողջապահական ծառայությունների, ջրի, սննդի, շրջակա միջավայրի և տեղեկատվության իրավունք
- **25-րդ հոդված.** Երեխայի տեղավորման վերանայման իրավունք
- **28-րդ հոդված.** Անվճար նախնական կրթության իրավունք
- **29-րդ հոդված.** Հարմարեցված և հարգալից կրթության իրավունք
- **30-րդ հոդված.** Փոքրամասնությունների մշակույթի, լեզվի և կրոնի իրավունք
- **32-36-րդ հոդված.** Պաշտպանություն վնասակար աշխատանքից, թմրամիջոցներից, սեռական շահագործման և բռնության բոլոր ձևերից
- **37-րդ հոդված.** Ազատությունից զրկված լինելու դեպքում իրավունքները
- **38-րդ հոդված.** Պաշտպանություն պատերազմի դեպքում
- **39-րդ հոդված.** Վերականգնման և վերաինտեգրման իրավունք
- **40-րդ հոդված.** Իրավաբանական օգնության և արդարադատության գործընթացում արդար վերաբերմունքի իրավունք
- **42-րդ հոդված.** Իր իրավունքների մասին իմանալու իրավունք:

Այս հոդվածները ապահովում են ԱՈՒԸԱ երեխաների համար անհրաժեշտ երաշխիքներ և պաշտպանություն՝ ապահովելով նրանց բարեկեցությունը, անվտանգությունը և իրավունքների հարգանքը միգրացիոն ճանապարհորդության ընթացքում և ընդունող երկիր ժամանելուց հետո:

2. ՏԱՐԱԾԱԾՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Եվրոպայի խորհրդի **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան** եվրոպական մարդու իրավունքների իրավունքի հիմնաքարն է: Այն երաշխավորում է քաղաքացիական, քաղաքական և սոցիալական իրավունքների լայն շրջանակ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների անհատների համար: Երեխաների պաշտպանության համար հատկապես կարևոր են մի քանի առանցքային հոդվածները, մասնավորապես՝ խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների դեպքում, ինչպիսիք են առանց ուղեկցության կամ ապաստան հայցող երեխաները:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (Եվրոպական կոնվերցիա) հիմնական հոդվածները և դրանց ազդեցությունը միգրանտ երեխաների վրա.

1. **Խոշտանգումների արգելքը (3-րդ հոդված)** հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայի հիմնարար դրույթներից մեկը, որն արգելում է խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը, կամ պատիժը:

– Այս դրույթը բացարձակ է, այսինքն՝ այն չունի բացառություններ՝ անկախ հանգամանքներից (օրինակ՝ ազգային անվտանգության հարցեր կամ արտակարգ իրավիճակներ): Արգելքը տարածվում է վատ վերաբերմունքի բոլոր ձևերի վրա՝ ներառյալ ֆիզիկական, հոգեբանական և նվաստացնող պայմաններին, ինչը հատկապես կարևոր է խոցելի անձանց, այդ թվում՝ առանց ուղեկցողի միգրանտ երեխաների հանդեպ կալանավայրերում ցուցաբերվող վերաբերմունքի համատեքստում:

2. **Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը (5-րդ հոդված)** երաշխավորում է, որ «յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք» և սահմանում է այն կոնկրետ պայմանները, որոնց դեպքում կարող է տեղի ունենալ ազատազրկում (օրինակ՝ քրեական մեղադրանքով օրինական կալանավորում):

– Այս հոդվածը հատկապես կարևոր է միգրանտ երեխաների համար, քանի որ սահմանում է անչափահասների կալանավորման սահմանափակումները և պահանջում, որ ցանկացած կալանավորում լինի **օրինական** և համահունչ՝ դատական ընթացակարգի երաշխիքներին: **Առանց ուղեկցողի** անչափահասների դեպքերում, 5-րդ հոդվածը պաշտպանում է երեխաներին անօրինական կալանավորումից՝ լինի դա միգրացիոն կենտրոններում, թե

ապաստանի գործընթացի շրջանակներում: Անչափահասների կալանավորումը պետք է կիրառվի բացառապես որպես **վերջին միջոց,** իսկ պայմանները պետք է համապատասխանեն նրանց տարիքին և կարիքներին:

3. **Անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը (8-րդ հոդված)** սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք»:

– Այս հոդվածը հատկապես կարևոր է միգրացիայի ընթացքում ԱՈՒԸԱ երեխաների **ընտանիքների վերամիավորման** դեպքերում: Այն պարտադրում է երեխաների և իրենց ընտանիքների հարաբերությունների պաշտպանություն, ներառյալ՝ ընտանիքների բաժանումը կանխելու և հնարավորության դեպքում վերամիավորումը խթանելու ջանքեր: Այն նաև երաշխավորում է, որ երեխաներն **իրավունք ունեն ապրելու արժանապատվորեն** և այնպիսի պայմաններում, որոնք հարգում են նրանց **անձնական կյանքը և անձեռնմխելիությունը,** այդ թվում՝ խնամքի կամ կալանքի վայրերում:

4. **Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը (13-րդ հոդված)** ապահովում է, որ այն անհատները, ում իրավունքները խախտվել են Եվրոպական կոնվենցիայի համաձայն, պետք է ունենան իրավական գործընթացի հասանելիություն՝ իրենց իրավունքների խախտումների համար հատուցում պահանջելու նպատակով:

– Այս հոդվածը կարևոր նշանակություն ունի ԱՈՒԸԱ երեխաների համար, ովքեր միգրացիայի հետ կապված իրավական գործընթացներում կարող են չունենալ իրավական հարցերով ներկայացուցչություն կամ աջակցություն: Այն երաշխավորում է, որ նրանք կարող են օգտվել իրավական պաշտպանության միջոցներից՝ վիճարկելու այն որոշումները, որոնք կարող են խախտել իրենց իրավունքները (օրինակ՝ ապօրինի կալանավորում կամ ապաստանի խնդրանքի մերժում): Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի պահանջը նշանակում է, որ իշխանությունները պարտավոր են ապահովել երեխայի համար մատչելի և համարժեք դատական պաշտպանության միջոցներ՝ երաշխավորելով, որ նրա գործը լսվի և լուծվի արագ և արդար ձևով:

Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության վերաբերյալ Նախարարների կոմիտեի՝անդամ պետություններին ուղղված CM/Rec(2019)11 հանձնարարական

Միգրացիայի համատեքստում ԱՈՒԸԱ երեխաների արդյունավետ խնամակալության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականը նշանակալի «փափուկ իրավունքի» գործիք է, որը հիմնված է մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների վրա: Այն շեշտը դնում է **խնամակալության միջոցով միգրացիայում գտնվող երեխաների պաշտպանության, օգնության և անվտանգության հստակ առաջնորդող սկզբունքների վրա:** Բացատրական հուշագիրը ուրվագծում է անդամ պետություններում խնամակալության կազմակերպման տարբեր մոտեցումներ՝ տեղաշարժի մեջ գտնվող երեխաների կոնկրետ կարիքները բավարարելու համար:

Հանձնարարականի առանցքային շեշտադրումները.

1. **Խնամակալության հետևողական շրջանակային համակարգի հաստատում.** անհրաժեշտ է, որ անդամ պետությունները ԱՈՒԸԱ երեխաների համար ստեղծեն խնամակալության համակարգ, որը կհամապատասխանի ազգային կառուցվածքներին, միաժամանակ պահպանելով ճկունությունը և համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

2. **Հանձնարարականի լայն տարածում.** պետական մարմինները, մասնագետները և շահագրգիռ կողմերը (քաղաքական գործիչները, սոցիալական աշխատողները, իրավաբանները, ՀԿ-ները) պետք է տեղեկացված լինեն Հանձնարարականի վերաբերյալ՝ իրազեկվածության և պատասխանատվության բարձրացման նպատակով:

3. **Փորձագիտական համաեվրոպական հարթակի ստեղծում.** պետք է ձևավորվի համաեվրոպական փորձագիտական հարթակ՝ խնամակալության համակարգերի լավագույն փորձի, ուղեցույցների և տեխնիկական աջակցության փոխանակումն ապահովելու նպատակով:

4. **Կանոնավոր առաջընթացի դիտարկում.** արդյունավետությունն ապահովելու և առկա մարտահրավերները լուծելու նպատակով Նախարարների կոմիտեն պետք է յուրաքանչյուր երեք տարին մեկ դիտարկի իրականացվող գործընթացների առաջընթացը:

5. **Խնամակալների համար առաջնորդող սկզբունքները**

1. **Խնամակալի անհապաղ նշանակում.** Կարևոր է, որ ԱՈՒԸԱ երեխաներին անհապաղ նշանակվեն խնամակալներ, քանի որ դա կարևոր է երեխաների իրավունքների և լավագույն շահերի պաշտպանությունն ապահովելու համար՝ երկիր ժամանելու պահից սկսած: Խնամակալները կարևոր դեր են խաղում երեխաների անվտանգությունը պաշտպանելու, հուզական և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև նրանց կարիքները հոգալու գործում:

2. **Հստակ ընթացակարգեր և իրավական որոշակիություն**. անդամ պետությունները պետք է մշակեն խնամակալության վերաբերյալ հստակ ընթացակարգեր և քաղաքականություն, ինչն իրավական որոշակիություն կապահովի գործընթացում ներգրավված բոլոր կողմերի համար: Դրանում պետք է ներկայացվեն խնամակալների, երեխաների և համապատասխան մասնագետների դերերն ու պարտականությունները: Այդ քաղաքականությունները պետք է անդրադառնան մի քանի կարևոր ոլորտների՝

- **Խնամակալների ստուգում և հավաքագրում.** ապահովել, որ խնամակալներ դառնալու համար ընտրվեն միայն որակավորված անձինք:

- **Խնամակալների վերապատրաստում.** առաջարկվում են վերապատրաստման ծրագրեր՝ խոցելի երեխաների խնամքի համար խնամակալներին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով օժտելու համար:

- **Նշանակման ընթացակարգեր և աջակցություն.** հստակ ուղեցույցներ այն մասին, թե ինչպես են նշանակվում խնամակալները և ինչ աջակցություն նրանք պետք է ստանան իրենց լիազորությունների ողջ ընթացքում:

- **Հսկողություն և վերահսկողություն.** մեխանիզմներ՝ խնամակալների աշխատանքը վերահսկելու և նրանց պարտականությունները պատշաճ կերպով կատարելու ապահովման համար:

- **Գանգատներ և կարգապահական ընթացակարգեր**. գործընթացների սահմանում, որոնց միջոցով հնարավոր է արդյունավետ արձագանքել խնամակալի կողմից երեխայի նկատմամբ ցանկացած չարաշահում կամ խախտում:

- **Ազգային և միջազգային համագործակցություն.** ԱՈՒԸԱ երեխաների պաշտպանության բարելավման նպատակով իշխանությունների

միջև ազգային և միջազգային մակարդակով համագործակցության խրախուսում:

Ուղեցույցների կիրառման առավելությունները.

- **Համապատասխանություն և թափանցիկություն.** հստակ մշակված արձանագրությունների և քաղաքականությունների սահմանումը կապահովի անդամ պետությունների մոտեցումների միասնականությունը՝ երաշխավորելով, որ ԱՈՒԸԱ երեխաների նկատմամբ վերբերմունքը լինի արդար, կանխատեսելի և թափանցիկ:

- **Հաշվետվողականություն.** վերահսկողության, բողոքարկման և կարգապահական ընթացակարգերի վերաբերյալ մանրամասն ուղեցույցների առկայությունը հնարավորություն կտա ապահովել, որ խնամակալության համար պատասխանատու անձինք հաշվետու լինեն իրենց գործողությունների համար:

- **Երեխաների պաշտպանություն.** առաջնահերթություն տալով երեխայի լավագույն շահերին՝ Հանձնարարականն երաշխավորում է, որ ԱՈՒԸԱ երեխաների իրավունքները մշտապես լինեն ցանկացած որոշում կայացնելու գործընթացի առանցքում՝ ապահովելով երեխաների անվտանգությունն ու պաշտպանվածությունը:

2.1 Դատական պրակտիկա

Ռահիմին ընդդեմ Հունաստանի գործով[58], Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրեց, որ եղել է խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքի, ինչպես նաև ազատության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների խախտում:

Գործը վերաբերում էր 15 տարեկան տղայի, ով Հունաստան էր ժամանել Աֆղանստանից՝ որպես առանց ուղեկցության անչափահաս: Ժամանելուն պես նա ձերբակալվել էր և տեղափոխվել էր ապաստան հայցողների պահման ճամբար, որտեղ սպասում էր արտաքսման: Իր պահման ընթացքում նրան իրեն հասկանալի լեզվով որևէ տեղեկություն չէր տրամադրվել ապաստան հայցելու հնարավորության կամ այլ իրավունքների վերաբերյալ: Ընդ որում, նա պահվում էր չափահասների հետ միասին՝ կացարանային, հիգիենիկ և ենթակառուցվածքային անբավարար պայմաններում: Քանի որ ազատ արձակվելուց հետո նրան չէր նշանակվել խնամակալ և որևէ այլ աջակցություն չէր տրամադրվել, բողոքատուն հայտնվել էր անօթևան մինչև այն պահը, երբ տեղական հասարակական կազմակերպությունները նրան օգնություն տրամադրեցին:

58 Rahimi ընդդեմ Հունաստանի - 8687/08, ՄԻԵԴ, 05.04.2011թ. վճիռ, https://hudoc.echr.coe.int/eng?i=002-550:

«Դիմումատուի պահման պայմանները կենտրոնում, ինչպես նաև նրան, որպես առանց ուղեկցության մնացած անչափահասի, ազատ արձակվելուց հետո իշխանությունների կողմից խնամք չցուցաբերելը հավասար էին նվաստացնող վերաբերմունքի: Ազգային իշխանությունները հաշվի չեն առել դիմումատուի՝ որպես անչափահասի լավագույն շահերը կամ նրա՝ որպես առանց ուղեկցության մնացած անչափահասի անհատական իրավիճակը: Բացի այդ, նրանք չեն ուսումնասիրել՝ արդյոք դիմումատուին պահման կենտրոնում տեղավորելը եղել է որպես ծայրահեղ միջոց, թե ավելի մեղմ եղանակներով հնարավոր կլիներ ապահովել նրա արտաքսումը»:

... Պահման կենտրոնի պայմանները, հատկապես՝ կացարանի, հիգիենայի և ենթակառուցվածքների առումով, եղել են այնքան նողկալի, որ խաթարել են մարդկային արժանապատվության բուն իմաստը: Դիմումատուն փաստացի չի կարողացել կապ հաստատել փաստաբանի հետ: Բացի այդ, առկա որոշ իրավական միջոցների վերաբերյալ տեղեկատվական գրքույկը կազմված էր մի լեզվով, որը նա չէր կարող հասկանալ, թեև հարցազրույցը նրա հետ անցկացվել էր իր մայրենի լեզվով: Դիմումատուին նաև գրանցել էին որպես ուղեկցվող անչափահաս, չնայած նրան, որ նա չէր ունեցել որևէ խնամակալ, որը կարող էր գործել որպես նրա օրինական ներկայացուցիչ: Հետևաբար, անգամ ենթադրելով, որ իրավական միջոցներն արդյունավետ էին, Դատարանի համար անհնար էր պատկերացնել, թե դիմումատուն ինչպես կարող էր օգտվել դրանցից:»:[59]

Մեկ այլ գործով՝ Մուբիլանձիլա Մայեկան և Կանիկի Միտունգան ընդդեմ Բելգիայի[60], Մարդու Իրավունքների եվրոպական Դատարանը վճռեց, որ Բելգիայի կառավարությունը խախտել է Եվրոպական կոնվենցիան՝ հինգամյա երեխային իր ընտանիքից անջատ պահելով մեծահասակների համար նախատեսված տարանցիկ կենտրոնում և հետագայում նրան արտաքսելով իր հայրենիք: Երեխան, Կոնգոյից ճանապարհվելով իր հորեղբոր հետ՝ առանց անհրաժեշտ ճանապարհորդական փաստաթղթերի՝ նպատակ ունենալով միանալ մորը Կանադայում, երկու ամիս պահվել է մեծահասակների համար նախատեսված հաստատությունում՝ առանց համապատասխան խնամքի, կրթության կամ հոգեբանական աջակցության: Չնայած իր խոցելի վիճակին՝ պայմանավորված փոքր տարիքով, ապօրինի ներգաղթի կարգավիճակով և ընտանիքի ուղեկցության բացակայությամբ, երեխան չի ստացել բավարար աջակցություն: Թեև դատավորը որոշում էր կայացրել, որ նրա պահումը հակասում է Երեխայի իրավունքների կոնվենցիային և պահանջել էր անմիջապես ազատ արձակել նրան, երեխային այդուամենայնիվ

59 Նույն աղբյուր:
60 Mubilanzila Mayeka և Kaniki Mitunga ընդդեմ Բելգիայի, https://hudoc.echr.coe.int/eng?i=002-3083:

արտաքսել էին: Նրան օդանավակայանում չի ուղեկցել որևէ սոցիալական աշխատող և թռիչքի ընթացքում նա չի խնամվել օդանավի ուղեկցորդի կողմից: Նրա ժամանման պահին ընտանիքի ոչ մի անդամ չէր սպասում նրան:

Թեև իշխանությունները կարող էին կանխել կամ շտկել ստեղծված իրավիճակը, նրանք չապահովեցին երեխայի համար անհրաժեշտ խնամքը, ինչի հետևանքով տեղի ունեցավ մարդու իրավունքների խախտում և արձանագրվեց անմարդկային վերաբերմունք (Հոդված 3-ի խախտում): Դատարանը նաև եզրակացրեց, որ իր դստեր կալանավորման հետևանքով մոր կողմից կրած սթրեսը և տագնապը ևս հանդիսացել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդված խախտում, քանի որ Բելգիայի իշխանությունների միակ գործողությունն այն էր, որ մայրիկին տեղեկացրել էին երեխայի կալանավորման մասին և տրամադրել էին մի հեռախոսահամար, որով հնարավոր էր կապ հաստատել: Երեխան արտաքսվել էր առանց պատշաճ խնամքի կամ նրա բարեկեցությունը հաշվի առնող վերաբերմունքի, ինչը համարվել էր անմարդկային վերաբերմունք (Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդված խախտում): Պետությունը չի տեղեկացրել մայրիկին արտաքսման մասին, խախտելով պոզիտիվ պարտավորությունները: Երկու դիմումատուներն էլ ենթարկվել են իրենց ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի անհամաչափ միջամտության (8-րդ հոդված խախտում): Երեխան պահվել էր այն օրենքի հիման վրա, որն առանձին դրույթներ չէր նախատեսում անչափահասների համար, և նրա ազատության իրավունքը բավարար ձևով չի պաշտպանվել (Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում):

Երեխան արտաքսվել էր՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ նա ներկայացրել էր ազատ արձակման վերաբերյալ դիմում, որը հաստատվել էր: Այդպիսով, դիմումը դարձել էր անարդյունավետ (Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի (4)-րդ մասի խախտում)[61]:

Դարբոեն և Կամարան ընդդեմ Իտալիայի (5797/17) գործով, որը վերաբերում էր առանց ուղեկցության ապաստան հայցող անչափահասի, որին տեղավորել էին չափահասների համար նախատեսված ընդունման կենտրոնում և որի նկատմամբ տարիքի գնահատման գործընթացում չէին կիրառվել նվազագույն ընթացակարգային երաշխիքներ, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանը, ի թիվս այլնի, հղում էր կատարել Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)11 հանձնարարականի համապատասխան կետերին՝ որպես արդյունավետ խնամակալության համակարգի համար առաջնորդող սկզբունքներ[62]:

61 Նույն աղբյուր:

62 Darboe և Camara ընդդեմ Իտալիայի, (5797(17),պարբ.66, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-218424:

3. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը լայն շրջանակ է սահմանում երեխաների իրավունքների պաշտպանության համար.

- Ծնողների իրավունքները և պարտականությունները. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար: (36-րդ հոդվածի 1-ին մաս):
- Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն օրենքով, դատարանի որոշմամբ՝ երեխայի կենսական շահերն ապահովելու նպատակով: (36-րդ հոդվածի 2-րդ մաս):
- Մասնակցության իրավունք. Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում (37-րդ հոդվածի 1-ին մաս):
- Երեխայի լավագույն շահեր: Երեխային վերաբերող հարցերում նրա շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան (37-րդ հոդվածի 2-րդ մաս):
- Ընտանեկան շփումների իրավունք: Յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին (37-րդ հոդվածի 3-րդ մաս):
- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պետական պաշտպանություն: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են (37-րդ հոդվածի 4-րդ մաս):
- Կրթության իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է (38-րդ հոդվածի 1-ին մաս):

Հայաստանը վավերացրել է մի շարք կարևոր միջազգային պայմանագրեր, որոնք պաշտպանում են երեխաների իրավունքները.

- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ԵԻԿ). Հայաստանը միացել է ԵԻԿ-ին 1992 թվականին, և այն կազմում է ՀՀ օրենսդրության անբաժան մասը:
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա (1951 թ.) և դրա 1967 թվականի արձանագրությունը. վավերացվել է 1993 թվականին՝ ապահովելով փախստական երեխաների իրավունքների պաշտպանությունը:
- Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա (1954 թ.) և Ապաքաղաքացիության կճատման մասին կոնվենցիա (1961 թ.). վավերացվել են 1994 թվականին՝ երաշխավորելով քաղաքացիություն

չունեցող երեխաների իրավունքները:

Եթե Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանվում են երեխայի իրավունքները կարգավորող այլ նորմեր, քան նախատեսված են ներպետական օրենսդրությամբ, ապա գերակայում են միջազգային պայմանագրի նորմերը:

«Երեխայի իրվունքների մասին» ՀՀ օրենք. Սահմանում է երեխաների համար հատուկ իրավունքներ և պաշտպանություններ, ներառյալ՝

- Խտրականության բացառում: Երեխաների իրավունքները պետք է պաշտպանվեն անկախ ռասայից, ազգությունից կամ սոցիալական ծագումից (4-րդ հոդված, կամ «Երեխայի իրավունքների և երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի (Օրենքի նախագիծ) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):
- Փախստական երեխաների իրավունքներ: Հակամարտությունների հետևանքով տեղահանված փախստական երեխաներն ունեն իրենց շահերի պաշտպանության իրավունք, և պետությունը պատասխանատու է համապատասխան հաստատություններում անհրաժեշտ խնամքն ու կացարանն ապահովելու համար (30-րդ հոդված):
- Պաշտպանություն արտակարգ իրավիճակներում: Պետությունն ապահովում է անհապաղ և անվճար օգնություն արտակարգ իրավիճակներում հայտնված երեխաներին՝ առաջնահերթ համարելով նրանց անվտանգությունը, ընտանիքի վերամիավորումը և սոցիալական պաշտպանությունը (28-րդ հոդված, կամ օրենքի նախագծի 18-րդ հոդված)
- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած) երեխաները գտնվում են պետության խնամքի և պաշտպանության ներքո: Պետությունը ապահովում է նրանց խնամքը, դաստիարակությունը և պաշտպանությունը՝ որդեգրման, խնամակալության, հոգաբարձության կամ խնամատար ընտանիքում կամ հաստատությունում տեղավորելու միջոցով (24-րդ հոդված, կամ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 4-8-րդ մասեր):

Լրացուցիչ իրավունքներ և պաշտպանություններ

- Կյանքի իրավունք: Օրենքը երաշխավորում է յուրաքանչյուր երեխայի կյանքի իրավունքը (5-րդ հոդված)
- Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան իրավունք (6-րդ հոդված):
- Անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք (8-րդ հոդված, կամ օրենքի նախագծի 6-րդ հոդված):
- Բռնությունից պաշտպանության իրավունք: Յուրաքանչյուր երեխա ունի ցանկացած (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության

իրավունք (9-րդ հոդված, կամ օրենքի նախագծի 7-րդ հոդված):

- Թրաֆիքինգից պաշտպանություն. Պետության խնդիրն է ապահովել երեխաների անվտանգությունն ու պաշտպանությունը՝ կանխելով անօրինական տեղափոխումը, առևանգումը կամ մարդկանց առևտուրը: (23-րդ հոդված):

«Երեխայի իրավունքների և երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի 36-րդ հոդվածը սահմանում է, որ ռազմական գործողությունների, այլ ընդհարումների, տարերային կամ տեխնածին աղետների կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական, տեղահանված կամ ապաստան հայցող երեխան ունի պաշտպանության իրավունք: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց կազմակերպությունները միջոցներ են ձեռնարկում երեխայի ծնողների կամ այլ մերձավոր ազգականների որոնման ուղղությամբ, ցուցաբերում են նյութական, բժշկական, հոգեբանական և այլ օգնություն, անհրաժեշտության դեպքում նրան տեղավորում են բուժական հաստատություններում կամ կազմակերպում երեխայի այլընտրանքային խնամքը և ինտեգրումը հասարակությունում: Նման երեխաների իրավունքների պաշտպանությունը, նրան տրամադրվող սոցիալական և այլ աջակցությունը տրամադրվում է՝ համագործակցելով պետական մարմինների և միջազգային ու հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշվի առնելով «Փախստականների և ապաստանի մասին» օրենքով նախատեսված կարգավորումները, ինչպես նաև միջազգային այլ պարտավորությունները:

Ինչպես նշված է Օրենքի նախագծում, երեխայի իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքներն են.

1. **Խտրականության արգելքը:** Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի խտրականության՝ իր անձնական կամ սոցիալական հանգամանքներից ելնելով:

2. **Երեխայի լավագույն շահերի առաջնահերթություն:** Երեխայի լավագույն շահը պետք է մշտապես լինի առաջնային:

3. **Երեխայի կարծիքի հարգում:** Երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի՝ ելնելով նրա տարիքից և հասունության մակարդակից:
4. **Կայունություն և շարունակականություն:** Երեխայի խնամքը, դաստիարակությունը և կրթությունը պետք է լինեն հետևողական և կայուն:

5. **Ընտանեկան միջավայրի առաջնահերթություն:** Երեխան պետք

է ապրի ընտանեկան միջավայրում, իսկ բաժանումը պետք է դիտարկվի միայն որպես ծայրահեղ միջոց:

Օրենքի նախագիծը սահմանում է **երեխայի լավագույն շահերը** հաշվի առնելու պարտավորությունը բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են նրան, այդ թվում՝ որդեգրման և խնամատար խնամքի գործընթացներում, ինչպես նաև նախատեսում է դրա իրագործման մեխանիզմները: Բացի այդ, հստակեցվել է երեխայի կարծիքը գրավոր, բանավոր կամ տեսագրությամբ ներկայացնելու դրույթը, և բացատրվել է, որ երբ իրականացվում է երեխայի կարծիքի լսում կամ տեսագրության դիտում, ապա խնամակալության և հոգաբարձության մարմինը, դատարանը կամ այլ մարմինները և կազմակերպությունները, որոնք ապահովում են երեխայի կարծիքի արտահայտման իրավունքը կամ պարտավոր են լսել այդ կարծիքը, պետք է ներգրավեն մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի:

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի համաձայն՝ 18 տարին չլրացած անձը, ով Հայաստան մուտք է գործել առանց չափահաս ուղեկցողի, համարվում է **առանց ուղեկցողի երեխա** (Հոդված 8.1 (2)): Եթե երեխան բաժանվել է ծնողներից, բայց ուղեկցվում է որևէ չափահասի կողմից, ապա համարվում է **ընտանիքից անջատված երեխա** (Հոդված 8.1 (2-3)): Հայաստանի ՄՔԾ-ն աջակցում է ԱՈՒԸԱ երեխաներին՝ տրամադրելով կացություն և խնամք՝ համաձայն ներպետական օրենսդրության: ***Աջակցությունը համապատասխանեցվում է երեխայի տարիքին, սեռին, ընտանեկան կապերին և լավագույն շահերին:*** Ծառայությունը նաև ապահովում է, որ ԱՈՒԸԱ երեխաները կարողանան լիարժեք օգտվել Հայաստանի օրենսդրությամբ երաշխավորված բոլոր իրավունքներից:

ՀՀ «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտպանի գրասենյակը ոչ միայն տրամադրում է իրավաբանական օգնություն քրեական գործերով կասկածյալներին կամ մեղադրյալներին, այլ նաև անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում խոցելի խմբերին, ներառյալ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, փախստականներին և ապաստան հայցողներին: Դա ապահովում է, որ խոցելի երեխաները պաշտպանված լինեն և իրենց իրավունքները պահպանվեն իրավական գործընթացներում: Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է **հայցերի և դատավարական փաստաթղթերի վերաբերյալ խորհրդատվություն, ինչպես նաև ներկայացուցչություն քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:**
Օրենքի նախագծի համաձայն՝ արդարադատության համակարգում երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետները պետք է անցնեն մասնագիտացված վերապատրաստում: Քրեական վարույթներում պետք է ներգրավվի որակավորված հոգեբան՝ երեխայի լավագույն շահերը և

հոգեկան ու ֆիզիկական առողջությունը պաշտպանելու, վնասակար մասնակցությունը կանխելու համար:
Չվերադարձելիության սկզբունքն ապահովում է, որ փախստական երեխաները չվերադարձվեն այն վայրեր, որտեղ նրանք կարող են ենթարկվել բռնության, հալածանքների կամ այլ ռիսկերի (ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդված, «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդված, «Օտարերկրացիների մասին» օրենքի 32-րդ հոդված):

Ընտանեկան օրենսգիրքն ամրագրում է երեխաների **խնամքի մի շարք այլընտրանքային ձևեր, այդ թվում՝ որդեգրումը, խնամակալությունը և հոգաբարձությունը, խնամատարությունը, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում խնամքը:**

Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության իրավական կարգավորումը համապարփակ և ամուր է՝ ներառելով ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներ: Սահմանադրությունը, մի շարք միջազգային պայմանագրեր և ներպետական օրենսդրական ակտեր համատեղ կերպով երաշխավորում են երեխաների համակողմանի պաշտպանությունը՝ առաջնահերթություն տալով երեխայի լավագույն շահերին, խտրականության բացառմանը, ինչպես նաև խնամքի, կրթության և անվտանգության ապահովմանը:

Գ. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագծի՝ Հայաստանի երեխայի պաշտպանության համակարգը ներառում է իրավական նորմերի, գործառույթների և քաղաքականության համադրություն, որոնք ուղղված են՝

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերմանը և աջակցության տրամադրմանը,
- երեխաների պաշտպանության հետ կապված խնդիրների կանխարգելմանը և դրանց արձագանքմանը,
- երեխաների նկատմամբ բռնության հայտնաբերմանը, վերացմանը և կանխարգելմանը,
- բռնության դեպքերին արդյունավետ արձագանքման ապահովմանը, և
- երեխայի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը:

Հայաստանի՝ երեխայի պաշտպանության համակարգում առանցքային դերակատարներ են՝

- Երեխաների պաշտպանության հարցերով ազգային հանձնաժողովը, որը գործելու է որպես խորհրդատվական մարմին՝ նպաստելով երեխաների իրավունքների պաշտպանության պետական քաղաքականությունների մշակմանը: Ներկայում հանձնաժողովը կարևոր դեր ունի երեխայի պաշտպանության ոլորտում: Նոր օրենքի նախագծով այն կդառնա պետության կողմից լիազորված մարմին կից խորհրդատվական կառույց: Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական միասնական քաղաքականությանն ապահովմանը նպաստելն է՝ երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի գործունեության և երեխայի լավագույն շահերի պաշտպանության ապահովման համար:
- ՀՀ մարզպետների աշխատակազմերի առողջապահության և սոցիալական հարցերի վարչությունները, որոնք գործում են տարածաշրջանային մակարդակում, և Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը՝ Երևանում:
- Խնամակալության և հոգաբարձության մարմինները (ԽՀՄ-ներ) մարզերում, ինչպես նաև վարչական շրջանների ղեկավարները՝ Երևանի քաղաքապետարանի անունից՝ համայնքային մակարդակում:

Օրենքի նախագծի ընդունումը և դրան հաջորդող կառավարության որոշումները ենթադրում են երեխայի պաշտպանության համակարգում որոշ փոփոխություններ, որոնք դեռևս պետք է սահմանվեն: Օրենքի նախագծի համաձայն՝ համայնքի ղեկավարը երեխայի պաշտպանության ոլորտում իր լիազորությունները իրականացնում է տվյալ ոլորտում մասնագիտացված սոցիալական աշխատողների միջոցով: Վերջիններիս խորհրդատվության և կարծիքների հիման վրա են կայացվում համապատասխան որոշումները:

1.1 Ազգային մակարդակ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) հիմնական մարմինն է, ազգային մակարդակում պատասխանատու է երեխաների ընդունման և այլընտրանքային խնամքի ուղղորդման քաղաքականության համար:

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով ազգային հանձնաժողովը, որի նախագահողն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հանդիսանում է խորհրդատվական մարմին՝ ուղղված երեխաների իրավունքների և բարեկեցության ոլորտում միասնական պետական քաղաքականության մշակմանը: Հանձնաժողովի հիմնական լիազորություններն են՝

- երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված գործունեության համակարգումը,
- երեխայի պաշտպանության քաղաքականության իրականացման աջակցությունը,
- երեխայի պաշտպանության համակարգում առկա խնդիրների վերհանումը և դրանց արձագանքումը,
- պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և երեխաների խնամքի կազմակերպությունների համագործակցության խթանումը,
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնդիրների լուծմանն աջակցությունը՝ խրախուսելով երեխաների խնամքի և պաշտպանության ոլորտում ներգրավված տարբեր կազմակերպությունների միջև համագործակցությունը[63]:

1.2 Մարզային մակարդակ

Մարզային մակարդակում երեխայի պաշտպանության քաղաքականության իրականացման պատասխանատվությունն ընկած է **մարզպետների աշխատակազմերի վրա**: Մարզպետների աշխատակազմերի հիմնական նպատակներն են՝

- երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը,

63 ՀՀ վարչապետի N1295-Ն որոշում :

- երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրագործմանն աջակցելը,
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնդիրների վերլուծությունը,
- «ՄԱՆՈՒԿ» տվյալների բազայի վարումը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ,
- տեղական ինքնակառավարման համակարգում գործող ԽՀՄ-ների գործունեության մշտադիտարկումն ու գնահատումը,
- երեխաների խնամքի կազմակերպման համակարգումը, այդ թվում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում տեղավորման գործընթացը,
- խնամատարության կազմակերպումը, խնամատար ծնող դառնալու եզրակացություն,
- խնամատար ընտանիքների հետ պայմանագրերի կնքման իրականացումը և այդ ընտանիքներում երեխաների տեղավորման մշտադիտարկումը:

Մարզպետների աշխատակազմերի համապատասխան վարչությունները հաստատում են երեխային այլընտրանքային խնամքում տեղավորման համար ուղղորդումը: Թեև պետական քաղաքականության իրականացումը մարզային մակարդակում պարտադիր է, այդ քաղաքականության կիրառումն ապահովելու համար պատասխանատու են մարզպետարանները: **Երևանում** երեխայի պաշտպանության հարցերը վերահսկում է **Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը:** Թեպետ համայնքները մարզերում ունեն տեղական քաղաքականության ընդունման ինքնավարություն, այդ քաղաքականությունը պետք է համահունչ լինի երեխայի պաշտպանության պետական քաղաքականությանը:

Օրենքի նախագծով նախատեսվում է ստեղծել երեխաների պաշտպանության բազմամասնագիտական հանձնաժողովներ՝ նպատակ ունենալով նպաստել մարզպետների աշխատակազմերի կողմից, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից երեխայի պաշտպանության գործառույթների իրականացմանը: Երեխաների պաշտպանության ոլորտում բազմամասնագիտական հանձնաժողովների գործունեությունը, ինչպես նաև նախկինում գործած նմանատիպ մարմինների գործունեության հետ կապված բացերի վերացումը կկարգավորվի ենթաօրենսդրական ակտով:

1.3 Համայնքային մակարդակ

Համայնքային մակարդակում, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է համայնքային մակարդակում գործող **խնամակալության և հոգաբարձության մարմիններին** (ԽՀՄ-ներին), իսկ Երևանում՝ **վարչական շրջանների ղեկավարներին՝** Երևանի քաղաքապետարանի անունից: Խնամակալության և հոգաբարձության մարմինները (ԽՀՄ-ներ) հանդիսանում են տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց գործառույթներն են՝

- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերումն ու հաշվառումը,
- երեխայի իրավունքների պաշտպանությունը այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են՝ ծնողների մահը, ծնողական իրավունքների զրկումը կամ սահմանափակումը, ծնողների անգործունակությունը, բացակայությունը, պարտավորություններից խուսափելը կամ խնամքի բացակայությունը,
- առանց ծնողական խնամքի երեխաների ռեեստրի վարումը, երեխայի ընտանիքից հեռացման պատճառների փաստաթղթավորումը և՝ կոնկրետ դեպքից ելնելով, համապատասխան այլընտրանքային խնամքի տեսակի որոշումը:

Օրենքի նախագծի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման հիմնական պատասխանատվությունը կրում է համայնքային սոցիալական աշխատողը: Համապատասխանաբար, խնամակալության և հոգաբարձության մարմինները գրանցում են նման երեխաների մասին տվյալները՝ համապատասխան տեղեկատվությունը մուտքագրելով տեղեկատվական համակարգ: Այս համակարգը հասանելի կլինի մարզպետների աշխատակազմերին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին: Բացի այդ, տեղական մակարդակում երեխաների պաշտպանության ոլորտում մասնագիտացված ստորաբաժանումների հստակ գործառույթներ են սահմանվել, ինչը ապահովում է խնամակալության և հոգաբարձության մարմինների ղեկավարների գործունեությունը տեղական մակարդակում՝ մասնագիտական հիմքով:

Նման կառույցները, ինչպիսիք են նախադպրոցական կրթական կենտրոնները, հանրային դպրոցները, բուժհաստատությունները և նմանատիպ այլ կառույցներ, պարտավոր են անհապաղ հաղորդել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքերի մասին խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ ելնելով երեխայի ներկայիս գտնվելու վայրից: Հաղորդում ստանալուց հետո, խնամակալության և հոգաբարձության մարմինները պետք է երեք

օրվա ընթացքում գնահատեն երեխայի կենսապայմանները: Եթե պարզվում է, որ երեխան բավարար խնամք չի ստանում ծնողներից կամ հարազատներից, մարմինները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ երեխայի իրավունքների պաշտպանությունն ապահովելու և նրա բարեկեցությունն երաշխավորելու համար, մինչև երեխայի խնամքի և դաստիարակության համար համապատասխան պայմաններ ձևավորվելը[64]:

Բացի այդ, խնամակալության և հոգաբարձության մարմինների ներքո ձևավորվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ (ԽՀՀ-ներ)՝ վերջիններիս աշխատանքին օժանդակելու նպատակով: ԽՀՀ-ները խորհրդատվական մարմիններ են, գործում են կամավոր սկզբունքով և բաղկացած են 3-ից 9 անդամներից: Նրանց կազմը հաստատվում է համայնքի ղեկավարի կողմից: ԽՀՀ-ների կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի աշխատակիցներ, ՏԻՄ-ների համայնքային աշխատողներ, առողջապահության աշխատողներ, ոստիկանության ներկայացուցիչներ, համայնքային մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, իրավաբաններ և ՀԿ-ների ներկայացուցիչներ (նրանց համաձայնությամբ)[65]:

1.4 Հայաստանում խնամքի տեսակները

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են որդեգրության, խնամակալության և հոգաբարձության կամ խնամատար ընտանիքում տեղավորման միջոցով: Եթե այդ տարբերակները հասանելի չեն, ապա երեխաները կարող են տեղավորվել կրթական, բժշկական կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, ինչպես նաև երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված այլ կազմակերպություններում, որոնք տրամադրում են շարունակական շուրջօրյա աջակցություն: Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելիս կարևոր է հաշվի առնել նրա էթնիկական ծագումը, կոնկրետ կրոնական և մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն և դաստիարակության ու կրթության շարունակականության հնարավորությունը:

Օրենքի նախագիծը սահմանում է (հոդված 16(6)), որ երեխայի այլընտրանքային խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի խնամքի, դաստիարակության կայունության և հաջորդականության ապահովման անհրաժեշտությունը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլ հանգամանքներ: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի խնամքի

64 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 110-րդ հոդված:
65 ՀՀ կառավարության N631-N որոշում, 2016թ.:

պայմանների պարբերական վերանայման, որի ընթացքում ապահովվում է նրա կարծիքի և լավագույն շահերի հաշվի առնելը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման բոլոր որոշումները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով և հիմնվեն նրա կարիքների բազմաբնույթ գնահատման վրա: Այս որոշումները պետք է համապատասխանեն հետևյալ հիմնական նպատակներին՝

1. Երեխայի խնամքն ու դաստիարակությունը հնարավորության, դեպքում, կազմակերպել ընտանեկան միջավայրում, իսկ անհնարինության դեպքում՝ այնպիսի միջավայրում, որն առավելագույնս նման է ընտանիքին:

2. Ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի կրթության, խնամքի և դաստիարակության համար, ներառյալ՝ սոցիալական և բժշկական աջակցությունը և օժանդակ ծառայությունները:

Մինչ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունը ընտանիքներում կամ կազմակերպություններում կազմակերպելը, այս երեխաների խնամակալի (իսկ 14-ից 18 տարեկանների դեպքում՝ հոգաբարձուի) պարտականությունները ժամանակավորապես վերապահվում են խնամակալության և հոգաբարձության մարմիններին (ԽՀՄ-ներին)[66]:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության ապահովման առաջնային տարբերակը որդեգրումն է: Սակայն ԱՈՒԸԱ փախստական երեխաների դեպքում որդեգրումը պետք է դիտարկվի միայն այն ժամանակ, երբ բոլոր հնարավոր միջոցները՝ ծնողներին, ընդլայնված ընտանիքի անդամներին կամ այլ օրինական խնամակալներին գտնելու ուղղությամբ, լիովին սպառված են:

Երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու նպատակով խնամակալության և հոգաբարձության մարմինները շարունակական աշխատանք են իրականացնում երեխայի կենսաբանական ծնողների կամ հարազատների հետ և, անհրաժեշտության դեպքում, համագործակցում են մարզպետարանների կամ Երևանի քաղաքապետարանի և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ գնահատելով նրանց սոցիալական և տնտեսական, առողջական, բարոյական և հոգեբանական խնդիրները և ձեռնարկելով այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ[67]:

66 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդված:
67 ՀՀ կառավարության N1044-Ն որոշում, 2015 թ.:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ, ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԵՐԸ

Քաղաքականության մշակման մակարդակում Հայաստանի կառավարությունը կրում է քաղաքականության մշակման, բյուջեի պլանավորման և ժամանակավոր տեղավորման կենտրոնների ստեղծման համար **հիմնական պատասխանատվությունը:** Կառավարությունը նաև պատասխանատու է այս կենտրոնների գործունեության ընթացակարգերի սահմանման և ապաստան հայցողների և փախստականների համար անձը հաստատող փաստաթղթերի ձևերը, այդ թվում՝ ճանապարհորդական փաստաթղթերը հաստատելու համար[68]:

ՀՀ ներքին գործերի նախարարության կազմում գործող Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄՔԾ) հանդիսանում է միգրացիայի ոլորտում քաղաքականության համար պատասխանատու հիմնական լիազոր մարմինը: Դրա գործունեությունը ներառում է՝

- ապաստան հայցողների դիմումների ընդունում,
- փախստականի կարգավիճակի որոշում,
- փախստականների ինտեգրման աջակցում գործընկեր ծրագրերին ուղղորդման միջոցով,
- սոցիալական, իրավական և այլ աջակցությունների տրամադրում,
- փախստականի կարգավիճակ ստացած անձանց անձնագրերի և ճանապարհորդական փաստաթղթերի տրամադրում[69]:

Ազգային անվտանգության ծառայությունը կարևոր դեր է կատարում ապաստան հայցողների ինքնության հաստատման և ռիսկերի գնահատման գործում: Որոշումներին աջակցելու համար այն ներկայացնում է անհրաժեշտ տեղեկավություն ապաստան հայցողների կողմից ազգային անվտանգության հնարավոր սպառնալիքի վերաբերյալ, այդ թվում՝ փախստականի կարգավիճակի չեղարկման կամ դադարեցման, ինչպես նաև **չվերադարձելիության սկզբունքից** բացառությունների հիմքերի վերաբերյալ[70].

Ազգային անվտանգության ծառայության ենթակայությամբ գործող **Սահմանապահ զորքերը** Հայաստան օրինական մուտք գործած և միջազգային պաշտպանություն փնտրող անձանց ՄՔԾ ուղղորդելու, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու համար: Եթե ապաստան հայցողները մուտք են գործել երկիր ապօրինի ճանապարհով, Սահմանապահ զորքերը գրանցում են ապաստանի վերաբերյալ դիմումը և տեղեկացնում ինչպես ՄՔԾ-ին, այնպես էլ ոստիկանությանը: Սահմանապահ զորքերը նաև լիազորված են ապաստան հայցողներին

68 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված:
69 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված:
70 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս:

պահելու սահմանի անցակետում գտնվող ժամանակավոր տեղավորման կենտրոնում[71]:

Ոստիկանությունը փոխանցում է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը (ՄՔԾ) տեղեկատվություն, որը վերաբերում է ապաստան հայցողների դիմումներին, հաստատում է վերջիններիս ինքնությունը և տրամադրում տվյալներ՝ փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերի վերաբերյալ: Ոստիկանությունն ունի նաև արտաքսման գործընթացի վերահսկման դեր այն անձանց նկատմամբ, որոնց ապաստանի դիմումները մերժվել են, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք պաշտպանված են չվերադարձելիության սկզբունքով[72]:

Արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ) կարևոր դեր է խաղում Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը աջակցելու հարցում՝ ապաստան հայցողների, այդ թվում՝ առանց ուղեկցողի ապաստան հայցող երեխաների ինքնության և քաղաքացիության հաստատման գործընթացում: Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունները վավերացնում են իրենց իրավասության տակ գտնվող կառույցների կողմից տրամադրված փաստաթղթերը՝ ապաստան ստացած փախստականների համար: Բացի այդ, հյուպատոսական ծառայությունները նպաստում են Հայաստանում փախստականի կարգավիճակ ստացած անձանց ընտանիքների վերամիավորման գործընթացին[73]:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ապահովում է ապաստան հայցողների և փախստականների կրթության իրավունքը: Ինչ վերաբերում է ԱՈՒԸԱ երեխաներին, ապա նրանց կրթական հաստատություններ ընդունման գործընթացը կազմակերպվում է խնամակալության մարմնի դիմումի հիման վրա՝ վերջինիս հետ համագործակցությամբ[74]:

Արդարադատության նախարարությունը պատասխանատու է օրենսդրական մշակման, օրենսդրական գործընթացների որակի ապահովման, ինչպես նաև արտահանձնման գործընթացների և արտասահմանում դատապարտված անձանց փոխանցման վերահսկման համար[75]:

Երեխաների համար արդարադատության մատչելիության հարցերով խորհուրդը բազմոլորտ հարթակ է, որը նպաստում է համակողմանի և համակարգված մոտեցմանը՝ յուրաքանչյուր երեխայի համար

71 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մաս:
72 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված:
73 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված:
74 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված:
75 Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրության 10-11-րդ կետեր:

արդարադատությանը հավասար հասանելիության հետ կապված հարցերի լուծման համար: Այն ստեղծվել է Արդարադատության նախարարության ենթակայությամբ՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) հետ համագործակցությամբ: Այս խորհրդատվական մարմինը քննարկում է այն գործերը, որոնք ներառված են օրակարգում պետական մարմինների կամ գործակալությունների կողմից:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները պատասխանատու են ԱՈՒԸԱ երեխաների համար խնամակալների նշանակման գործընթացի համար: Մարզպետարաններն ու Երևանի քաղաքապետարանը, համագործակցելով խնամակալության մարմինների հետ, կազմակերպում են ԱՈՒԸԱ երեխաների տեղավորման և խնամքի գործընթացը[76]:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) իրականացնում է ծրագրեր, որոնք նպաստում են ապաստան հայցողների և փախստականների՝ աշխատաշուկային, սոցիալական ապահովության համակարգին և առողջապահական ծառայություններին հասանելիության ընդլայնմանը: ԱՍՀՆ-ը համակարգում է ԱՈՒԸԱ երեխաների համար տեղավորման և աջակցության ծառայությունները և աջակցում է նրանց ինտեգրմանը հայաստանյան հասարակության մեջ՝ համագործակցելով մարզպետարանների աշխատակազմերի և **խնամակալության և հոգաբարձության մարմինների** (ԽՀՄ) հետ[77]:

Դատախազությունը պատասխանատու է միջազգային համաձայնագրերի համաձայն և փոխադարձության սկզբունքի հիման վրա մինչդատական վարույթին վերաբերող գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու համար[78]:

Քրեակատարողական ծառայությունն ու կալանավայրերի վարչական անձնակազմը հարցաքննում են միջազգային պաշտպանության կարիք հայցող անձանց, այդ թվում՝ առանց ուղեկցողի ապաստան հայցող երեխաներին: Նրանք գրանցում են ապաստանի դիմումները, տեղեկացնում են դիմումատուներին իրենց իրավունքների մասին, այդ թվում՝ անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ և փոխանցում են դիմումները ՄՔԾ-ին (Միգրացիոն և քաղաքացիության ծառայություն)[79]:

Առողջապահության նախարարությունն ապահովում է, որ փախստականները և ապաստան հայցողները հասանելիություն ունենան անվճար բժշկական զննման, կանխարգելիչ խնամքի և անհրաժեշտ առողջապահական միջոցների՝ ապահովելով նրանց առողջապահության

76 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված:
77 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդված:
78 ՀՀ դատախազության կանոնադրության 2-րդ կետ:
79 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված:

իրավունքը[80].

Հայաստանի փաստաբանների պալատին կից Հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում, այդ թվում՝ իրավաբանական խորհրդատվություն և դատական ներկայացուցչություն, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ապաստան հայցողներին, փախստականներին և Հայաստանում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց[81]:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչները կարող են ցանկացած պահի կապ հաստատել ապաստան հայցողների կամ փախստականների հետ, այդ թվում՝ ձերբակալված կամ բանտարկված անձանց, և մասնակցել ապաստան հայցողների հետ հարցազրույցներին[82]:

ՀԿ-ները կարող են հանրային վերահսկողություն իրականացնել ժամանակավոր տեղավորման կենտրոնների գործունեության նկատմամբ՝ ապահովելով ապաստան հայցողների բարեկեցությունը: Այն ներառում է կենսապայմանների մոնիթորինգ, ներքին կարգապահական կանոնների պահպանման վերահսկում, ինչպես նաև ապաստան հայցողների իրավունքների պաշտպանություն: ՀԿ-ները տրամադրում են նաև հիմնական ծառայություններ, այդ թվում՝ կացարան, հոգեբանական աջակցություն, բժշկական օգնություն, իրավաբանական օգնություն և հմտությունների զարգացման դասընթացներ երեխաների համար[83]:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ընդունում է բողոքներ ցանկացած անձանցից, այդ թվում՝ երեխաներից և նրանց խնամակալներից, եթե նրանց իրավունքները խախտվել են Հայաստանի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Բողոքները կարող են ներկայացվել գրավոր, բանավոր (այդ թվում՝ մասնավոր զրույցների միջոցով) կամ թեժ գծի միջոցով[84]: Այնուամենայնիվ, առկա է անհրաժեշտություն երեխայակենտրոն բողոքարկման մեխանիզմների մշակման՝ երեխաների համար այդ իրավունքներին արդյունավետ հասանելիություն ապահովելու համար:

80 Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդված:
81 Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված:
82 Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդված:
83 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 31.1-րդ հոդված:
84 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2.3, 15 հոդվածներ:

3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Թեև ԱՈՒԸԱ երեխաների ապաստանի գործընթացում **ուղեգրման ընթացակարգերը** լիովին սահմանված չեն, Հայաստանում երեխաների ուղեգրման համար կան մի քանի գործող ընթացակարգեր.

1. **ՀՀ կառավարության թիվ 1112-Ն որոշում (2015 թ. սեպտեմբերի 10):** Այս որոշմամբ սահմանվում են երեխաների, տարեց անձանց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման պայմաններն ու կարգը: Այն կարգավորում է երեխաների ուղեգրումը խնամքի հաստատություն և նպաստում է տարբեր շահառու կողմերի՝ այդ թվում՝ ԽՀՄ-ների, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ոստիկանության և այլ համապատասխան մարմինների միջև տեղեկատվության փոխանակմանը: Որոշումը նաև ընդգծում է երեխայի և նրա ծնողների կամ օրինական խնամակալների հաղորդակցության ապահովումը, երեխայի լավագույն շահերի որոշումը և խնամքի չափանիշների ու մատուցման ապահովումը:

2. **ՀՀ կառավարության թիվ 1044-Ն որոշում (2015 թ. սեպտեմբերի 10)**: Միջգերատեսչական սոցիալական համագործակցության մասին այս որոշումը սահմանում է սոցիալական աջակցության տրամադրման ոլորտում համագործակցության շրջանակը: Այն սահմանում է տարբեր գերատեսչությունների միջև համագործակցության սկզբունքները, պարտականություններն ու ընթացակարգերը, ներառյալ՝ տեղեկատվության փոխանակումը, աջակցության կարիք ունեցող անձանց հայտնաբերումը, ինչպես նաև անհատական սոցիալական ծրագրերի մշակումը և մշտադիտարկումը: Համագործակցությունը իրականացվում է տեղեկատվության փոխանակման, վարչական կազմակերպման, համակարգող մարմինների ձևավորման և բազմամասնագիտական թիմերի միջոցով սոցիալական գործերով աշխատանքի շրջանակներում: Քաղաքացիներին՝ այդ թվում ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին և անչափահասների այլ օրինական ներկայացուցիչներին, տրամադրվում են տարբեր տեսակի սոցիալական ծառայություններ՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային և սոցիալ-իրավական: Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները վերահսկում և գնահատում են համագործակցությունը՝ սոցիալական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

3. **ՀՀ կառավարության N551-Ն որոշում (2016 թվականի մայիսի 26):** Այս որոշումը սահմանում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամքի այլընտրանքային ձևերի ուղեգրման սկզբունքներն ու չափանիշները: Այն սահմանում է ուղղորդման գործընթացը, այլընտրանքային մանկական խնամքի տարբեր տեսակները, ուղղորդման և որոշումների կայացման գործընթացում ներգրավված շահագրգիռ կողմերը: Որոշման մեջ ընդգծվում է, որ նախընտրելի տարբերակը ընտանեկան տիպի խնամքն է, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքը համարում է ծայրահեղ միջոց, որը պետք է կրի ժամանակավոր բնույթ և ունենա հնարավորինս կարճատև տևողություն:

4. **ՀՀ կառավարության N479-Ն որոշում (2024 թվականի ապրիլի 4):** Այս որոշումն սահմանում է բռնություն վերապրած երեխաների դեպքերի ուղղորդման կարգը: Այն մանրամասնում է, թե ինչպես պետք է նման դեպքերն արձանագրվեն համապատասխան մարմինների կողմից՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով: Այն նաև սահմանում է դեպքի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ձևերը, երեխայի տեղավորման գործընթացը աջակցության կենտրոնում կամ ցերեկային խնամքի հաստատությունում, ներգրավված կողմերի համագործակցության պայմանները, ինչպես նաև երեխային տրամադրվող աջակցության ձևերը, ներառյալ՝ ինչպես է այդ աջակցությունը տրամադրվելու:

Օրենքի նախագիծը ներկայացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման և նույնականացման շրջանակը: Այն սահմանում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների լիազորությունները այս գործընթացում և այդ երեխաների մասին հաշվետվությունների ներկայացման և տեղեկատվության փոխանակման ընթացակարգը:

4. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ

4.1 ՄԱՈՒԸԱ երեխաների համար ներկայացուցիչ նշանակելու ընթացակարգը և պայմանները

Ապաստանի ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ-ն նշանակում է **ներկայացուցիչ՝** ապահովելու ԱՈՒԸԱ երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը: Քանի դեռ ներկայացուցիչ չի նշանակվել, երեխայի ապաստանի դիմումի առնչությամբ որևէ վարչարարություն չի կարող իրականացվել: Ներկայացուցիչը նշանակվում է ՄՔԾ-ի որոշմամբ:

Եթե ապաստան հայցողը չունի իր **տարիքը** հավաստող փաստաթուղթ, ապա նրա հայտնած տեղեկությունն իր տարիքի վերաբերյալ համարվում են ճշգրիտ:

Երեխայի ներկայացուցիչ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության ցանկացած չափահաս քաղաքացի, օրինական հիմքերով երկրում բնակվող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ով համապատասխանում է սահմանված չափորոշիչներին: Թեկնածուն պետք է ունենա համապատասխան հմտություններ և գիտելիքներ երեխաների պաշտպանության, փախստականների իրավունքի և ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ և պետք է անցած լինի պարտադիր վերապատրաստում: Սակայն պահանջվող կոնկրետ իրավասությունները օրենքում հստակորեն սահմանված չեն:

Ներկայացուցիչներն առաջադրվում են փախստականների հարցերով մասնագիտացած ՀԿ-ների կողմից: Երեխայի ապաստանի դիմումը ստանալուց հետո, ՄՔԾ-ն հաջորդ աշխատանքային օրը պաշտոնապես դիմում է ՀԿ-ներին թեկնածուներ առաջադրելու առաջակով: Առաջադրումները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ՄՔԾ-ն նշանակում է ներկայացուցիչ՝ առաջնահերթություն տալով երեխաների պաշտպանության ոլորտում փորձագիտություն ունեցող թեկնածուներին: Ներկայացուցիչն իր գործունեությունն իրականացնում է կամավորության հիմունքներով:

Եթե երեխան արդեն ունի խնամակալ կամ հոգաբարձու, ապա այդ անձը ավտոմատ կերպով նշանակվում է որպես երեխայի ներկայացուցիչ: Եթե երեխան տեղավորվել է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում (օրինակ՝ մանկատուն կամ երեխայի պաշտպանության կենտրոն), ապա այդ հաստատության ներկայացուցիչը նշանակվում է որպես երեխայի ներկայացուցիչ: Այսպիսի դեպքերում ներկայացուցիչը նշանակվում է ՄՔԾ-ի կողմից՝ հաստատության դիմումի ներկայացումից

հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Երեխայի ներկայացուցիչը նշանակվում է՝ երեխայի լավագույն շահերը ներկայացնելու նպատակով **ապաստանի ընթացակարգի շրջանակներում:** Եթե ապաստանի դիմումի ուսումնասիրման ընթացքում երեխան վերամիավորվում է իր ընտանիքի հետ, ապա ներկայացուցչի լիազորությունները կարող են դադարեցվել: Ներկայացուցիչի լիազորությունները կարող են դադարեցվել նաև այն դեպքում, երբ երեխան հասնում է 18 տարեկանի[85]:

4.2 Խնամատարություն

Գործող Ընտանեկան օրենսգիրքը խնամատարությունը սահմանում է որպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպումն է այլ ընտանեկան միջավայրում իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված, որակավորված անձի միջոցով մինչև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի վերացումը:

«Ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծում առաջարկվում է. խնամատարությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և այլընտրանքային խնամքի կարիք ունեցող, ներառյալ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպումն է այլ ընտանեկան միջավայրում: Խնամքն իրականացվում է իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված անձի միջոցով մինչև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի վերացումը, երեխայի որդեգրումը, կամ երեխայի լավագույն շահից ելնելով, երեխայի այլընտրանքային խնամքի ձևի փոփոխությունը: Ճգնաժամային խնամատաության դեպքում, մերձավոր ազգականները կարող են չանցնել վերապատրաստում, սակայն մյուս բոլոր դեպքերում այն պետք է անցնեն վեց ամսվա ընթացքում: Բացի այդ, կառավարությունը կընդունի խնամատար ծնողների ընտրության, վերապատրաստման, գրանցման, երեխայի խնամքի և երեխայի-ծնող համապատասխանեցման չափանիշներն ու ընթացակարգերը:

Խնամատարության վերաբերյալ կանոնակարգերը համապատասխանում են ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի ուղեցույցների հիմնական դրույթներին: Այս դրույթները ներառում են տարբեր հայեցակարգեր (ասպեկտներ), ինչպիսիք են խնամատար ծնողների ընտրությունը, գրանցումը, որակավորումը և վերապատրաստումը, խնամատար ընտանիքի

85 ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N239-Ն որոշման N1 հավելվածի 1-15-րդ կետեր:

ներսում խնամքի և կրթության կազմակերպումը, խնամատարության մշտադիտարկումը, խնամատար ընտանիքների ֆինանսական աջակցությունը և համաձայնագրերի շրջանակը[86]:

Ընտանեկան օրենսգիրքը խնամատար ընտանիքները դասակարգում է չորս հիմնական տեսակի.

Ընդհանուր խնամատար ընտանիք. որտեղ երեխայի խնամքը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել այն դեպքում, երբ չկա մասնագիտացված, ճգնաժամային կամ արձակուրդային խնամատար ընտանիք ընտրելու հիմք: Այն այլընտրանքային խնամքի կարիք ունեցող երեխաներին տրամադրում է ընդհանուր խնամք և դաստիարակություն:

Մասնագիտացված խնամատար ընտանիք. որտեղ խնամք են ստանում հաշմանդամություն կամ ծանր առողջական խնդիրներ ունեցող, դաստիարակության դժվարություններ ունեցող, հոգեկան կամ վարքի խանգարումով տառապող, խոր սթրես ապրած, հոգեցնցման (հոգեկան տրավմայի) ենթարկված երեխաները, ինչպես նաև անչափահաս մայրերը կամ նրանց երեխաները.

Ճգնաժամային խնամատար ընտանիք. Կիրառվում է, երբ երեխային անհրաժեշտ է ժամանակավորապես հեռացնել տնից՝ որոշակի հանգամանքների պատճառով, այդ թվում՝

- ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի ծանր հիվանդության,
- ծնողի կամ օրինական ներկայացուցչի կալանավորման կամ ազատազրկման դեպքում՝ առանց պայմանական պատժի կամ վաղաժամկետ ազատ արձակման որոշման,
- ծնողի գործողության կամ անգործության հետևանքով երեխայի կայնքին կամ առողջությանը սպառնացող անմիջական վտանգի դեպքում,
- բնական կամ տեխնածին աղետի դեպքում, որի պատճառով ծնողը կամ այլ օրինական խնամակալը չի կարողանում խնամք իրականացնել,
- ծնողի կամ օրինական խնամակալի կողմից երեխայի պատշաճ խնամքը և դաստիարակությունը չապահովելու դեպքում,
- ծնողների միջև վեճի դեպքում՝ երեխայի բնակության կամ տեսակցությունների կազմակերպման շուրջ համաձայնություն ձեռք չբերելու պարագայում:

Արձակուրդային խնամատար ընտանիք. Խնամատար ընտանիքի այս տեսակը նախատեսում է ժամանակավոր խնամք՝ շարունակական հիմքով/անընդմեջ կամ որոշակի ժամանակահատվածներում, ինչպես

86 ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն որոշում:

օրինակ՝ շաբաթ օրերին, տոներին կամ այլ ոչ աշխատանքային օրերին: Այն նախատեսված է դաստիարակության դժվարություններ, առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ աջակցություն ցուցաբերելու նպատակով ծնողներին կամ այլ օրինական խնամակալներին:

Խնամատարությունը կարող է դասակարգվել երկու յտարակարգի (կատեգորիաի)՝ դրա տևողությունից ելնելով. 1) **կարճաժամկետ**՝ մինչև մեկ ամսվա ժամկետով, որը կարող է երկարաձգվել ևս մեկ ամսով, և 2) **երկարաժամկետ՝** մեկ տարի կամ ավելի ժամկետով, որը կարող է շարունակվել մինչև երեխայի չափահաս դառնա :

Երեխայի խնամքն ու դաստիարակությունը խնամատար ընտանիքում իրականացվում է խնամատար ընտանիքի հետ կնքված պայմանագրով սահմանված ժամկետով, որը չի կարող գերազանցել երեխայի 18 տարին, սակայն անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել մինչև նրա 23 տարեկանը: Երեխայի խնամքն ու դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու հնարավորությունը դիտարկվում է՝ նախքան նրան կրթական, բժշկական կամ բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ հաստատությունում
տեղավորելու տարբերակը:

Արգելվում է եղբայրների և քույրերի խնամքը և դաստիարակությունը տարբեր խնամատար ընտանիքներում կազմակերպելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է նրանց կամ նրանցից մեկի շահերից[87]:

Խնամատար ծնող կարող է լինել Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացին, բացառությամբ՝ դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց, ամուսինների, որոնցից մեկին դատարանը ճանաչել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված անձանց, խնամակալի պարտականություններից հեռացված անձանց, նախկին որդեգրողների, եթե որդեգրումը դատական կարգով վերացվել է, և անձանց, ովքեր դատապարտվել են ծանր հանցագործություն կատարելու համար ունեն դատվածություն ծանր հանցագործություն կատարելու համար կամ կախվածություն ունեն ալկոհոլից, թմրանյութերից: Խնամատար ծնողները հոգեզավակի նկատմամբ ձեռք են բերում խնամակալի իրավունքներ ու պարտականություններ[88]:

Խնամատար ընտանիքների **ընտրությունն** իրականացվում է

87 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 139-րդ հոդված:
88 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մաս:

մարզպետարանների համապատասխան վարչությունների կողմից՝ մարզերում, և Երևանի քաղաքապետարանի համապատասխան վարչության կողմից՝ Երևանում: Ընտրության գործընթացն իրականացվում է՝ առաջնահերթ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Խնամատար ընտանիքում խնամքի կազմակերպումը պաշտոնապես ձևակերպվում է պայմանագրով՝ խնամատար ընտանիքի և մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժնի միջև:

Մարզպետարաններն ու Երևանի քաղաքապետարանը պատասխանատու են խնամատար ընտանիքների հաշվառման, խնամքի կարիքների գնահատման (ինչպես ընտանիքների, այնպես էլ երեխաների համար), խնամքի տեսակի և տևողության որոշման, ինչպես նաև երեխայի բարեկեցության վերահսկման համար: Այս գործընթացում ԽՀՄ-ները համագործակցում են համայնքային սոցիալական աշխատողների հետ՝ գնահատելու խնամատար ընտանիքները, առաջարկելու տեղավորման տարբերակներ և պարբերաբար մշտադիտարկում իրականացնելու խնամքի գործընթացի նկատմամբ[89]:

Խնամատար ծնողի ստանձնած պարտականությունների և հոգեզավակի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում մարզպետարանների, իսկ Երևան քաղաքում Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է խնամատար ընտանիքում տեղավորված երեխայի կյանքի, առողջության, դաստիարակության և կենսապայմանների վերահսկողություն: Վերահսկողությունը նպատակ ունի ապահովելու, որ խնամատարության միջավայրը լինի անվտանգ, հոգատար և համապատասխանի երեխայի լավագույն շահերին[90]:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է խնամատար ընտանիքների համար վերապատրաստման ծրագրերի կազմակերպման, նրանց՝ երեխաներին արդյունավետորեն խնամելու համար անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ փոխանցելու համար:

Խնամատար ընտանիքներին իրենց խնամքի տակ գտնվող յուրաքանչյուր երեխայի համար խնամքի համար տրամադրվում է ամսական աշխատավարձ: Այդ գումարը ներառում է երեխայի խնամքի և դաստիարակության համար նախատեսված նվազագույն ծախսերը, ինչպես նաև երեխայի խնամքի և դաստիարակության դիմաց տրվող վարձատրություն: Պայմանագրի հիման վրա տրամադրվող ֆինանսական

89 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մաս:
90 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մաս:

աջակցության տևողությունը կախված է խնամքի տրամադրման ժամանակահատվածից[91]:

Ներկայումս խնամատարության համար որևէ ֆորմալ բողոքների ներկայացման մեխանիզմ սահմանված չէ:

4.3 Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ (խնամք հաստատություններում)

Երեխայի տեղավորումը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում (մանկատներում) դիտարկվում է որպես ծայրահեղ միջոց և պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ ընտանիքում այլընտրանքային խնամքի ձևերը՝ օրինակ՝ խնամակալությունը, հոգաբարձությունը, խնամատար ընտանիքոըմ խնամքը կամ որդեգրումը, հասանելի չեն: Խնամքը մանկատներում, օրինակ՝ մանկատանը, պետք է դիտարկվի միայն այն ժամանակ, երբ բոլոր մյուս տարբերակները արդեն դիտարկվել են: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում գտնվելու ընթացքում անհրաժեշտ է պահպանել երեխայի և նրա ծնողների կամ մերձավոր ազգականների միջև կապը, եթե դատարանի որոշմամբ այդ կապը չի հակասում երեխայի լավագույն շահերին[92]:

Դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ խնամակալ (հոգաբարձու) չի նշանակվում: Սակայն, **խնամակալների կողմից** երեխաներին բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում ժամանակավորապես տեղավորելը չի դադարեցնում այդ երեխաների նկատմամբ խնամակալի պարտականությունները[93]:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունները պարտավոր են պարբերաբար կազմակերպել **վերապատրաստման դասընթացներ և բժշկական ստուգումներ** այն անձնակազմի համար, ովքեր անմիջականորեն աշխատում են երեխաների հետ: Դա ապահովում է, որ անձնակազմը պատրաստված լինի հոգալու երեխաների ֆիզիկական և հոգեբանական կարիքները[94]:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների կանոնադրությունները նախատեսում են երեխաների համար բողոքների

91 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 140-րդ հոդված:
92 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 136-րդ հոդված:
93 ՀՀ ընտանեկան օրենսգրքի 136-րդ հոդված:
94 ՀՀ կառավարության N 1324-Ն որոշում, 05.08.2004թ.:

ներկայացման գրավոր մեխանիզմների ստեղծում: Սակայն այդ մեխանիզմները միշտ չէ, որ հարմարեցված են երեխաների համար և կարող են հետագա բարելավման կարիք ունենալ՝ ապահովելու համար, որ երեխաների ձայնը լսվի և համապատասխան ձևով արձագանք ստանա:

Երեխայի կենսապայմաններն ու այս հաստատությունների գործունեությունը պարբերաբար մշտադիտարկվում են ԽՀՄ-ների և ՀՀ ոստիկանության անչափահասների հետ տարվող աշխատանքների բաժնի կողմից: Այս վերահսկողության նպատակը երեխայի լավագույն շահերի պաշտպանությունն է և խնամքի պայմանների ապահովումը՝ նպաստելով նրա լիարժեք զարգացմանը: ԽՀՄ-ները, համագործակցելով տարածքային սոցիալական կենտրոնների, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և այլ գերատեսչությունների հետ, ակտիվորեն աշխատում են երեխաներին վերադարձնելու իրենց կենսաբանական ընտանիքներ հնարավորության դեպքում: Այս գործընթացը ներառում է ծնողների գտնվելու վայրի պարզում, սոցիալ-տնտեսական, առողջական, բարոյական և հոգեբանական պայմանների գնահատում, ինչպես նաև անհրաժեշտ միջամտությունների իրականացում՝ ընտանիքի վերամիավորմանը նպաստելու համար: Բացի այդ, ԽՀՄ-ները պարբերաբար կապ են պահպանում խնամատար ընտանիքների, խնամակալների, հոգաբարձուների, երեխաների և ընտանիքների աջակցության կենտրոնների և սոցիալական պաշտպանության հաստատությունների հետ՝ հետևելու երեխայի բարեկեցությանը, կենսապայմաններին և հատուկ կարիքներին: Նրանք նաև ուսումնասիրում են այլընտրանքային խնամքի տարբերակներ, որոնք ապահովում են ընտանիքանման միջավայր այն դեպքերում, երբ վերամիավորումը հնարավոր չէ[95]:

Հասարակական կազմակերպություններին թույլատրվում է երեխաներին խնամք և ծառայություններ տրամադրել միայն ԱՍՀՆ-ի թույլտվությամբ: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների վերահսկողությունն իրականացվում է ԱՍՀՆ-ի կողմից՝ ծառայությունների որակի ապահովման նպատակով:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն ու սոցիալական խնամքի ցերեկային կենտրոնները սերտ համագործակցում են լիազոր պետական մարմինների, ոստիկանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների և բժշկական կազմակերպությունների հետ: Այս համագործակցությունը նպատակ ունի ապահովելու երեխայի խնամքի բոլոր կողմերի՝ ներառյալ կրթական և առողջապահական կարիքների լիարժեք լուծումը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և ցերեկային խնամքի կենտրոնները պարտավոր են

95 ՀՀ կառավարության 26.05.2016թ. N 551-Ն որոշում:

անհրաժեշտության դեպքում տրամադրել համապատասխան պետական մարմիններին տեղեկություն՝ իրենց կողմից իրականացվող խնամքի վերաբերյալ[96]:

4.4 Խնամակալություն և հոգաբարձություն (ազգակցական խնամք)

Հայաստանում 0-ից 14 տարեկան երեխաների նկատմամբ սահմանվում է խնամակալություն, մինչդեռ 14-ից 18 տարեկան դեռահասների համար՝ հոգաբարձություն: Կարևոր է, որ երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ բոլոր որոշումները կայացվեն երեխայի հետ խորհրդակցելով՝ հնարավորության դեպքում հաշվի առնելով նրա նախընտրությունները:

Խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս հաշվի են առնվում մի շարք գործոններ, այդ թվում՝

- Անձի բարոյական և անհատական հատկանիշները:
- Խնամակալության կամ հոգաբարձության պարտականությունները կատարելու ունակությունը:
- Խնամակալի/հոգաբարձուի և երեխայի միջև առկա հարաբերությունները:
- Խնամակալի կամ հոգաբարձուի ընտանիքի անդամների վերաբերմունքը երեխայի նկատմամբ:
- Երեխայի համաձայնությունն ու նախընտրությունները, եթե նա ի վիճակի է դրանք արտահայտելու:

Որոշակի կատեգորիայի անձանց արգելվում է նշանակվել որպես խնամակալներ և հոգաբարձուներ, մասնավորապես՝

- Քրոնիկ ալկոհոլիզմով կամ թմրամոլությամբ տառապող անձինք:
- Կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք:
- Անձինք, ովքեր նախկինում հեռացվել են խնամակալների կամ հոգաբարձուների պարտականություններից, ինչպես նաև նախկին որդեգրողները՝ որդեգրումը վերացված լինելու դեպքում:
- Ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք:
- Անձինք, ում առողջական վիճակը խանգարում է խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները պատշաճ իրականացնելուն[97]:

96 ՀՀ կառավարության N 1112-Ն որոշում, 25.09.2015թ.:
97 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-38-րդ հոդվածներ (1998թ.) և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 134-136-րդ հոդվածներ (2004թ.):

խնամակալները և հոգաբարձուները պատասխանատու են երեխայի խնամքի, բուժման, կրթության, դաստիարակության և նրա իրավունքների և շահերի պաշտպանության համար: Այս պարտականությունները կատարվում են **անհատույց:**

Տեղական/քաղաքացու բնակության վայրի ԽՀՄ-ները վերահսկում են խնամակալների և հոգաբարձուների գործունեությունը՝ ապահովելով, որ նրանք պատշաճ կերպով կատարեն իրենց պարտականությունները: ԽՀՄ-ները իրավասու են ազատել խնամակալին կամ հոգաբարձուին իր պարտականություններից, եթե երեխան վերադարձվել է ծնողներին, որդեգրվել է կամ տեղավորվել է շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունում: Եթե խնամակալը կամ հոգաբարձուն չի կատարում իր պարտականությունները՝ օրինակ՝ թմրամիջոցներ է օգտագործում կամ անտեսում է երեխային, նա կարող է **հեռացվել աշխատանքից:** Նրա դեմ կարող են հարուցվել դատական գործընթացներ՝ պատասխանատվության ենթարկելու նպատակով: **Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրան՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար:**

Անչափահասի նկատմամբ հոգաբարձությունը ավտոմատ կերպով **դադարում է**, երբ անձը դառնում է 18 տարեկան, առանց որևէ հատուկ որոշման կամ գործողության անհրաժեշտության[98]:

Հայաստանում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի պարտականությունը հաճախ ընկնում է տատիկների, պապիկների կամ այլ ընդլայնված ընտանիքի անդամների վրա: Խնամակալության և հոգաբարձության գրանցումը համեմատաբար հազվադեպ է, և միայն այն երեխաները, ովքեր համարվում են «դժվար կյանքի իրավիճակում հայտնված երեխա» կամ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» և օգտվում են պետական սոցիալական ծառայություններից, գրանցվում են «Մանուկ» տվյալների բազայում՝ մարզպետարանների համապատասխան վարչությունների կողմից՝ հիմք ընդունելով ԽՀՄ-ների, Երևանի քաղաքապետարանի և այլ համապատասխան կողմերի ներկայացրած տեղեկատվությունը:

Թեև խնամակալության և հոգաբարձության նշանակման, գնահատման և որոշումների կայացման իրավական հիմքը սահմանված է օրենքով, սակայն բացակայում է հատուկ նախապատրաստման, աջակցման կամ խորհրդատվական ծառայությունների հստակ մատնանշումը խնամակալների և հոգաբարձուների համար: Սակայն, ներկայիս օրենքի նախագծում նախատեսվում են նման ծառայություններ:

98 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 42-րդ հոդված (1998թ.) և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 134-136-րդ հոդվածներ (2004թ.):

ԽՀՄ-ների պարտականությունն է գնահատել խնամակալության և հոգաբարձության հնարավոր թեկնածուներին՝ համոզվելու համար, որ նրանք համապատասխանում են պետական կարգավորումներին: Նրանք նաև պատասխանատու են երեխային աջակցություն և խորհրդատվություն տրամադրելու համար՝ խնամակալության կամ հոգաբարձության տեղավորմանն ընդառաջ: Սակայն, քանի որ բացակայում են երեխաների համար խնամակալների ընտրության, խնամք տրամադրելու համար առավել համապատասխան ազգակցի որոշման, և երեխայի լավագույն շահերի առաջնահերթության ապահովման մանրամասն գործընթացներ, այդ աջակցությունը գործնականում չի իրականացվում: Ըստ օրենքի՝ ԽՀՄ-ները պարտավոր են տարեկան առնվազն երկու անգամ այցելել խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող երեխաներին: Սակայն, գործնականում այս պահանջը հաճախ չի պահպանվում[99]:

Օրենքի նախագծում ներմուծվում է «փաստացի խնամակալ» կամ «փաստացի հոգաբարձու» հասկացությունը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ժամանակավոր այլընտրանքային խնամքի մեխանիզմ: Դա թույլ է տալիս երեխայի մերձավոր ազգակագանին անհապաղ խնամք ցուցաբերել արտակարգ իրավիճակներում՝ մինչև պաշտոնական խնամակալության կարգավիճակի հաստատումը՝ կանխելով ավելորդ հոգեբանական տրավման: Փաստացի խնամակալը կամ հոգաբարձուն կարող է լինել երեխայի մերձավոր ազգականը, բացառությամբ որդեգրված (գտնված) երեխաների, որոնց դեպքում երեխայի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը հանդես է գալիս որպես փաստացի խնամակալ կամ հոգաբարձու: Այս դրույթը երաշխավորում է երեխայի խնամքի կազմակերպման թափանցիկությունը՝ նույնիսկ կարճաժամկետ տեղավորման դեպքերում:

99 «Երեխաների այլընտրանքային խնամքի գնահատումը Հայաստանում» (2018թ.):

5. ՏԵՂԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

5.1 Հայաստանում ՄԱՈՒԸԱ երեխաների ապաստանի ընթացակարգերի սխեմա

1. Ապաստանի դիմում

Դիմումի ներկայացում.

- Սահմանային անցակետեր
- Ոստիկանություն
- ԱԳՆ
- ՔԿՀ-ներ
- Կարող է դիմել. Գրավոր
- Բանավոր
- Ժեստերով
- Անօրինական մուտքը չի խոչընդոտում ապաստանի դիմումին

2. Ժամանակավոր կասեցում

Դիմումը կասեցվում է մինչև.

- Երեխայի համար ներկայացուցչի նշանակում

3. Ներկայացուցչի նշանակում

- ՄՔԾ-ն վերապատրաստված ներկայացուցիչ է նշանակում որակավորված թեկնածուներից (ՀԿ-ների առաջադրած փորձագետներ, խնամակալներ կամ ԵՊ աշխատակիցներ): Խնամակալը/հոգաբարձուն կամ հաստատության աշխատակիցները կարող են հանդես գալ որպես ներկայացուցիչ
- Ներկայացուցիչն ապահովում է երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը ապաստանի գործընթացի ողջ ընթացքում

4. Հարցազրույց

- Հարցազրույց գրանցումից կարճ ժամանակ անց
- Երեխան ներկայանում է և տալիս հակիրճ տեղեկություններ
- Հարցազրույցը անցկացվում է 2 շաբաթվա ընթացքում՝ ՄԾ-ի հատուկ վերապատրաստված աշխատակցի կողմից
- Ներկայացուցիչը մասնակցում է հարցազրույցին



ԱՈՒԸԱ երեխան իրավունք ունի՝

- Սահմանային անցակետերում ստանալ իրավաբանական խորհրդատվություն ապաստանի ընթացակարգերի վերաբերյալ:
- Իրավական հիմքով մնալ Հայաստանի Հանրապետությունում մինչև ապաստանի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, ներառյալ բոլոր դատական ատյաններում բողոքարկումների ավարտը:
- Նախապատվության կարգով տեղավորվել հատուկ ապաստանում կամ այլ օրենքով սահմանված հաստատություններում:
- ԱՈՒԸԱ երեխաները, ովքեր ենթարկվել են թրաֆիքինգի, իրավունք ունեն հատուկ խնամքի և աջակցության, որն իրականացվում է մասնագիտացված ՀԿ-ների կողմից՝ համաձայն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և

աջակցության մասին» ՀՀ օրենքի:

- Ունենալ խնամակալ և ներկայացուցիչ:
- Ստանալ անվճար իրավաբանական օգնություն ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակից:
- Ապաստանի հարցազրույցների ժամանակ անվճար պահանջել իրենց նախընտրած սեռի թարգմանիչ:
- Ստանալ կրթություն:
- Ստանալ անվճար շտապ և ամբուլատոր բուժօգնություն, ինչպես նաև ստացիոնար բուժում:
- Դատարանում բողոքարկել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության մերժման որոշումը:
- Անձնական տվյալների պաշտպանվածության իրավունք:

5.2 Խնամակալության գործընթաց

Ժամանում, բացահայտում, գրանցում

- ՄՔԾ-ն նույնականացնում է ապաստան հայցող երեխաներին և ուղղորդում նրանց պաշտպանության ծառայություններ:
- Ներառում է համակարգումը ԱՀՆ-ի, մարզպետարանների աշխատակազմերի կամ Երևանի քաղաքապետարանի և ԽՀՄ-ների հետ՝ գրանցման, կացարանի և խնամքի ապահովման նպատակով:
- Երբ ԱՈՒԸԱ-ն դիմում է ապաստանի համար, ՄՔԾ-ն խորհրդակցում է ԱՀՆ-ի, ԽՀՄ-ների, մարզպետների աշխատակազմերի կամ Երևանի շքաղաքապետարանի հետ՝ համապատասխան խնամքի կազմակերպման համար:
- Տեղավորումը կատարվում է ելնելով ԵԼԾ-երից՝ հաշվի առնելով նրա տարիքը, սեռը, առողջությունը, անվտանգությունը, բարեկեցությունը, մշակութային պատկանելիությունը, հարազատների առկայությունը և այլ գործոններ:

Ընտանիքի վերամիավորում և երկարաժամկետ պաշտպանություն

- ՄՔԾ-ն հաստատում է անձի ինքնությունն ու քաղաքացիությունը և ձգտում է ընտանիքի վերամիավորմանը, եթե դա երեխայի լավագույն շահերից է բխում:
- ԽՀՄ-ները և ՄԱ-ն իրականացնում են հաշվառում և վերահսկում են երեխայի կարգավիճակը:
- Եթե վերամիավորումը հնարավոր չէ, խնամակալը ապահովում է երեխայի ինտեգրումը կամ այլընտրանքային երկարաժամկետ խնամքի լուծումները:

Խնամակալի նշանակում

- ԽՀՄ-ները ԱՀՆ-ի, մարզպետների աշխատակազմերի կամ Երևանի քաղաքապետարանի պահանջով, նշանակում են խնամակալ (հոգաբարձու):
- Խնամակալը ներկայացնում է երեխայի լավագույն շահերը և մասնակցում է ապաստանի ընթացակարգերին:

ԱՈՒԸԱԵ-ի տեղավորում

- ԱՈՒԸԱ երեխաներն առաջնահերթ կարգով տեղավորվում են ժամանակավոր կացության կենտրոններում: Անհրաժեշտության դեպքում նրանք կարող են տեղավորվել նաև կարճաժամկետ խնամքի կենտրոններում, ինչպիսիք են ՀՕՖ երեխաների աջակցության կենտրոնը կամ SOS Մանկական գյուղեր Հայաստան ԲԿ-ն:
- Բոլոր գործողություններում առաջնահերթ է համարվում ԵԼԾ-երը, օրինական իրավունքները, անվտանգությունը և բարեկեցությունը:.
- Ընտանիքի վերամիավորում. ՄՔԾ-ն փորձում է գտնել ծնողներին/հարազատներին, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից:
- Խնամատար ընտանիք կամ խնամակալություն. Եթե վերամիավորումը հնարավոր չէ, ԽՀՄ-ները կազմակերպում են երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կամ նշանակում են խնամակալ/հոգաբարձու:
- Որդեգրում (եթե կիրառելի է). դիտարկվում է, եթե ընտանիք հետ վերամիավորումը կամ ծագման երկիր վերադարձը հնարավոր չէ՝ հետևելով իրավական ընթացակարգերին:
- Շուրջօրյա խնամքի հաստատությունում տեղավորելը (ծայրահեղ միջոց). Եթե ընտանեկան խնամքը հնարավոր չէ, ապա ԱՈՒԸԱ երեխաները կարող են տեղավորվել կրթական, առողջապահական կամ բնակչության սոցիալական պաշտպանության այլ հաստատություններում:

6. ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերջերս Եվրոպայի խորհուրդը բացթողումների լայնածավալ վերլուծություն է իրականացրել[100], որի արդյունքները հրապարակվել են 2024 թ.: Այն վերհանում և վերլուծում է Հայաստանի օրենսդրության, քաղաքականությունների և գործնական մոտեցումների բացթողումները տեղահանված երեխաների պաշտպանության և խնամքի ոլորտում, ներառյալ ՄԱՌԻԸԱ երեխաների արդյունավետ խնամակալությունը, ինչպես նաև ներքին լավ գործելակերպը:

Վերլուծության հիման վրա ներկայացվում է մանրամասն առաջարկների փաթեթ՝ ուղղված բացահայտված բացթողումների և կարիքների լուծմանը՝ նպատակ ունենալով հաղթահարել նշված խնդիրները, այդ թվում՝ հաստատությունների և մարդկային կարողությունների զարգացման տեսանկյունից:

Բացահայտված բացթողումները և առաջարկները համառոտ ներկայացված են հավելված 5-ում:

100 https://rm.coe.int/needs-assessment-report-eng-2024-final-with-disclaimer/native/1680b1a686 :

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Վարքագծի կանոնագիրք կամ էթիկական խարտիա (օրինակ)

- Նշանակված խնամակալը կամ օրինական ներկայացուցիչը պաշտպանում է երեխայի իրավունքները և ապահովում դրանց լիարժեք իրացումը:

- Նշանակված խնամակալը կամ օրինական ներկայացուցիչը կառուցում և պահպանում է վստահության վրա հիմնված հարաբերություններ առանց ուղեկցության մնացած անչափահասի հետ և հեշտ հասանելի է:

- Նշանակված խնամակալը կամ օրինական ներկայացուցիչը գնահատում և խրախուսում է ՄԱՈՒԸԱ երեխայի ինքնորոշումը և անկախությունը (օրինակ՝ մասնակցության միջոցով):

- Նշանակված խնամակալը կամ օրինական ներկայացուցիչը հարգում և արժևորում է ՄԱՈՒԸԱ երեխայի ծագման մշակույթը, նրա կրոնն ու հավատքը՝ օգնելով նրան ծանոթանալ այն սոցիո-մշակութային միջավայրին, որտեղ հայտնվել է՝ խնամատար երկրում ընդունվելուց հետո:

- Նշանակված խնամակալը կամ օրինական ներկայացուցիչը՝ երեխային վերաբերվում է արդար, ազնիվ, արժանապատիվ և հարգալից կերպով՝ զերծ մնալով որևէ նվաստացուցիչ, արժեզրկող կամ ստորացուցիչ վարքից:

- Կառավարում է հարաբերությունները ՄԱՈՒԸԱ երեխայի հետ իր բոլոր դրսևորումներով՝ ներառյալ ֆիզիկական մերձեցումը և սոցիալական ցանցերի օգտագործումը՝ համապատասխան իր դերին:

- Զերծ է մնում այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել կամ ռիսկեր առաջացնել երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական անվտանգության համար, երեխայի մոտ առաջացնել տհաճություն, ամաչկոտություն, վրդովմունք կամ հուզական, ֆիզիկական կամ սեռական բռնության դրսևորում լինել:

- Զերծ է մնում գործողություններից, որոնք կարող են դիտվել շահագործող կամ առաջացնել շահագործման վտանգ:

- Չի հանդուրժում և չի մասնակցում ՄԱՈՒԸԱ երեխայի կողմից

դրսևորվող անօրինական, բռնի կամ նրան վտանգի ենթարկող վարքին:

- Զերծ է մնում շահերի բախման հնարավոր իրավիճակներից և չի օգտագործում իր դիրքն անձնական օգուտ ստանալու նպատակով:

- Մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում երեխայի ֆինանսական հարցերին և կառավարում է նրա ունեցվածքը՝ բացառապես երեխայի շահերից ելնելով:

- Ապահովում է երեխայի նկատմամբ գաղտնիության պահպանումը՝ օրենքի սահմաններում[101]:

- Պաշտպանում է երեխային այնպիսի մեդիա ազդեցությունից, որը կարող է վնասել նրա անվտանգությանը կամ զարգացմանը:

- Ուշադիր է հնարավոր ոչ պատշաճ վարքի կամ երեխայի իրավունքները վտանգող վարքի նկատմամբ և անհապաղ գործում է՝ երեխային պաշտպանելու համար:
- Անհապաղ գործում է, եթե նկատում է երեխայի հոգեմարմնական բարեկեցությանը սպառնացող (հնարավոր կամ իրական) վտանգներ կամ ցանկացած ձևի բռնություն, կամ չարաշահում[102]:

Հավելված 2. Վնաս չպատճառելու և անվտանգությունն ապահովելու (ապահովման) գաղափարներ՝ սահմանումներ, տարբերություններ և համեմատություն

«Վնաս չպատճառելու» և «Ապահովման» գաղափարները սերտորեն կապված են միմյանց հետ, սակայն տարբերվում են իրենց շեշտադրումով, նպատակով և իրականացմամբ:

«Վնաս չպատճառելու» սկզբունքը մարդասիրական էթիկական վարքագիծ է, որը կարևորում է այն գործողություններից խուսափելու անհրաժեշտությունը, որոնք կարող են վնաս պատճառել կամ վատթարացնել անհատի վիճակը: Այն ընդգծում է մասնագետի բարոյական պարտավորությունը՝ հնարավոր ամեն բան անել, որպեսզի իր միջամտությունների կամ որոշումների արդյունքում ուղղակի կամ անուղղակի վնաս չհասցնի շահառուներին՝ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական կամ մշակութային իմաստով: Այս հասկացությունը ավելի կոնկրետ կենտրոնանում է ռիսկերի բացահայտման և միջամտությունների նախագծման վրա՝ դրանք բացասական կողմնակի ազդեցություններից

101 Այս սկզբունքը նաև ընդգծված է (UEAA) 2023 թ. ուղեցույցում:
102 Pricoco et al., թարգմանությունը ըստ հեղինակի:

զերծ պահելու նպատակով:

Ապահովումը ավելի լայն և համապարփակ հասկացություն է, որի նպատակն է պաշտպանել անհատներին՝ հատկապես երեխաներին և խոցելի խմբերին, բռնությունից, անտեսումից, շահագործումից և վնասից՝ կիրառելով քաղաքականություններ, ընթացակարգեր, ծրագրեր, գործելակերպեր և համակարգեր, որոնք ուղղված են վնասի կանխարգելմանը, անվտանգ և բարեկեցիկ միջավայրի ապահովմանը և ռիսկերին ու դեպքերին արձագանքելուն: Այս հասկացությունն առավել հաճախ օգտագործվում է ներքին կազմակերպական մշակույթին վերաբերող համատեքստում՝ կանխելու այն դեպքերը, որոնք կարող են տեղի ունենալ կազմակերպության աշխատակիցների (աշխատակազմ, պայմանագրային աշխատողներ, կամավորներ, իրականացման գործընկերներ, մատակարարներ, վաճառողներ, խորհրդատուներ, պրակտիկանտներ, փոխադարձ կցագրված անձինք, խոսնակներ) և արտաքին անհատների՝ հատկապես սեռական բռնության և շահագործման կոնտեքստում շփումների արդյունքում:

Հավելված 3. CM/Rec(2019)11 հանձնարարականի մանրամասն սկզբունքները

Սկզբունք 1 – Պետությունները պետք է պաշտպանեն առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքները միգրացիոն գործընթացներում՝ խնամակալության և երեխայի գերակա շահի ապահովման միջոցով: Այս սկզբունքն անդրադառնում է ՄԱՈՒԸԱ երեխաների իրավունքների պաշտպանությանը՝ հաստատելով նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված արդյունավետ խնամակալական համակարգ, որը հաշվի է առնում նրանց առանձնահատուկ կարիքները և հանգամանքները՝ առաջնահերթություն տալով նրանց լավագույն շահերին: Խնամակալության համակարգ ստեղծելիս պետք է ապահովվեն երեխաների վերաբերյալ միջազգային մարդու իրավունքների պարտավորությունները: Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաները իրավունք ունեն հատուկ պաշտպանության և աջակցության՝ իրավասու մարմինների և խնամակալի կողմից: Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալության միջոցները հաշվի առնեն երեխայի լավագույն շահերը և հատուկ հանգամանքները: Արդյունավետ մեխանիզմներ պետք է գործեն՝ երեխաներին պաշտպանելու այնպիսի ռիսկերից, ինչպիսիք են՝ խտրականությունը, սեռական բռնությունը և մանկական ամուսնությունը: Խնամակալությունը պետք է աջակցի նաև երեխաների համար կայուն լուծումների որոնմանը, ներառյալ ընտանիքի վերամիավորումը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից:

Սկզբունք 2. Պետությունները պետք է ընդունեն և իրականացնեն համապատասխան իրավական, քաղաքական, կարգավորող և/կամ վարչական կառուցակարգեր՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալությունն ապահովելու համար: Այս պահանջն ընդգծում է համապարփակ իրավական, քաղաքական, կարգավորող և վարչական կառուցակարգերի ընդունման և իրականացման կարևորությունը՝ ապահովելու համար միգրացիայի համատեքստում ԱՈՒԸԱ երեխաների արդյունավետ խնամակալությունը: Պետությունները պետք է ստեղծեն երեխաների փոփոխվող կարիքներին համապատասխան արդյունավետ խնամակալության համակարգ՝ ապահովելով համակարգման մեխանիզմներ այլ ծառայությունների և շահագրգիռ կողմերի հետ՝ երեխաների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Համապարփակ իրավական շրջանակը պետք է ներառի մասնագիտական չափորոշիչներ, հավաքագրման ընթացակարգեր, խնամակալի պարտականություններ և աջակցության միջոցառումներ: Այն պետք է ընդգրկի նաև վերապատրաստման պահանջները, երեխաների կարծիքը արտահայտելու մեխանիզմներ, բողոքարկման ընթացակարգեր, գերատեսչական համագործակցություն, գաղտնիության ապահովման միջոցներ և խնամակալների մշտադիտարման մեխանիզմներ: Խնամակալի նշանակման, փոփոխման և դադարեցման ընթացակարգերը պետք է առաջնահերթություն տան երեխայի լսված լինելու իրավունքին, նրա լավագույն շահերին և կայունության ու շարունակականության ապահովման անհրաժեշտությանը: Այդ կանոնակարգերը պետք է ամրագրված լինեն օրենքով և անհրաժեշտության դեպքում ենթարկվեն դատական վերահսկողության՝ երեխաների բարեկեցությունը պաշտպանելու նպատակով:

Սկզբունք 3. Պետությունները պետք է ապահովեն, որ միգրացիայի հաամտեքստում առանց
ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխան ունենա առանց
անհարկի ուշացման նշանակված խնամակալ: Այս պահանջն ընդգծում է ԱՈՒԸԱ երեխաների համար խնամակալների շուտափույթ նշանակման կամ հաստատման կարևորությունը՝ հարմարեցված երեխայի անհատական առանձնահատկություններին՝ նրան աջակցություն ցուցաբերելու մինչև չափահաս դառնալը: Բացի այդ, պետք է կազմակերպվեն խնամքի և աջակցության միջոցներ՝ խնամակալության կամ այլընտրանքային եղանակների միջոցով, անցումային փուլում՝, երբ երեխան դառնում է 18 տարեկան, ըստ տվյալ իրավիճակի նպատակահարմարության: Յուրաքանչյուր առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխա, անկախ միգրացիոն կարգավիճակից, պետք է ունենա խնամակալ: Պետությունները պետք է շուտափույթ նշանակեն կամ հաստատեն խնամակալին, երբ երեխային տրվում է այդ կարգավիճակը՝

ապահովելով շարունակական պաշտպանություն: Նույնիսկ խնամակալի նշանակման ուշացման դեպքում երեխայի իրավունքները չպետք է խախտվեն: Պետությունները պետք է երաշխավորեն իրավունքների պաշտպանությունը՝ խնամակալ նշանակելով այն անձանց համար, որոնց տարիքային կարգավիճակը որոշված չէ, սակայն կա հավանականություն, որ նրանք անչափահաս են: Անհրաժեշտության դեպքում երեխաները պետք է կարողանան հայցել խնամակալի փոփոխություն: Խնամակալի դերը պետք է շարունակվի մինչև ծնողական պատասխանատվության սահմանումը կամ երեխայի չափահաս դառնալը: Խնամքի և աջակցության միջոցառումներ պետք է իրականացվեն՝ խնամակալության կամ այլընտրանքային մեթոդների միջոցով, անցումային շրջանում, երբ երեխան արդեն դարձել է 18 տարեկան, ըստ կոնկրետ իրավիճակի նպատակահարմարության: Այս սկզբունքները պետք է կիրառվեն նաև այն երիտասարդների նկատմամբ, ովքեր չափահաս դառնալուց հետո շարունակում են աջակցության կարիք ունենալ: Պետությունները պետք է ապահովեն միգրացիայում գտնվող բոլոր երեխաների պատշաճ խնամքն ու պաշտպանությունը:

Սկզբունք 4 . Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն լիազորելու խնամակալներին՝ տեղեկացնել, օժանդակել, աջակցել միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին և, օրենքով նախատեսված դեպքերում, ներկայացնել նրանց շահերը՝ նրանց առնչվող գործընթացներում: Այդ միջոցների նպատակն է երեխաների իրավունքների և լավագույն շահերի պաշտպանությունը, ինչպես նաև կապի հաստատումը երեխայի և նրա բարեկեցության համար պատասխանատու համապատասխան մարմինների, գործակալությունների և անձանց միջև: Բացի այդ, պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալները պահպանեն իրենց դերի համար անհրաժեշտ անկախությունն ու անաչառությունը: Միջոցները պետք է հնարավորություն տան խնամակալներին տեղեկացնելու, աջակցելու և սատարելու միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաներին՝ անհրաժեշտության դեպքում լրացնելով նրանց իրավական կարողությունը: Խնամակալը ապահովում է, որ երեխաները հասկանան իրենց իրավունքները, հաղորդեն բռնության կամ շահագործման դեպքերի մասին, նպաստում է նրանց բարեկեցությանն ու զարգացմանը, ուղղորդում դեպի չափահաս կյանք անցման գործընթացը, աջակցում որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցությանը, ապահովում իրավաբանական օգնությունը, հայտարարում անհետ կորած երեխաների մասին, համագործակցում իշխանությունների հետ՝ ընտանիքների որոնման և հայտնաբերման հարցերում, կառավարում ունեցվածքը և որոշում երեխայի համար հավելյալ պաշտպանության միջոցների անհրաժեշտությունը: Խնամակալներն

առանցքային դեր ունեն երեխայի լավագույն շահերի պաշտպանության գործում և ապահովում են, որ երեխան հասանելիություն ունենա իր բարեկեցության, զարգացման և օրինական իրավունքների համար անհրաժեշտ աջակցության ծառայություններին: Խնամակալն իրավասու է պաշտպանելու երեխայի լավագուն շահերը՝ պարբերաբար գնահատելով նրա խոցելիությունն ու պաշտպանության կարիքները: Խնամակալները աջակցում են նաև լավագույն շահերի գնահատման, տարիքի գնահատման, ընտանիքի և անհետ կորած երեխաների հայտնաբերման գործերին, ինչպես նաև ներգաղթի կամ ապաստանի ընթացակարգերի իրականացմանը: Խնամակալը կարող է նախաձեռնել երեխայի համար իրավաբանի նշանակումը իրավական գործընթացներում՝ անհրաժեշտության դեպքում, և կարող է վիճարկել իշխանությունների գործողությունները, եթե դրանք չեն ապահովում երեխայի լվագույն շահերը: Խնամակալն ունի պարտավորություն երեխայի նկատմամբ և պետք է ստեղծի վստահելի հարաբերություններ՝ պարբերական անձնական շփումների և գաղտնիության կանոնների միջոցով: Երեխայի վերաբերյալ որևէ տեղեկատվության բացահայտումը պետք է տեղի ունենա երեխայի համաձայնությամբ, եթե դա չի հակասում նրա լավագույն շահերին: Խնամակալը հանդես է գալիս որպես կապող օղակ երեխայի և համապատասխան իշխանությունների, կառույցների և անձանց միջև՝ հնարավորություն տալով համակարգել երեխաներին առնչվող հարցերը այլ շահագրգիռ կողմերի հետ: Միջոցները պարտավորեցնում են շահագրգիռ կողմերին տեղեկացնել խնամակալին և երեխային՝ համապատասխան ընթացակարգերի և որոշումների վերաբերյալ: Խնամակալը պետք է լինի անկախ, անաչառ և հաշվետու՝ բացառելով շահերի միջև բախումը: Պետությունները երաշխավորում են, որ խնամակալները իրենց դերում ազատ են ցանկացած ազդեցությունից կամ միջամտությունից: Շահագրգիռ կողմերը շարունակաբար տեղեկացնում են խնամակալին և երեխային և համագործակցում երեխաներին վերաբերող հարցերում:

Սկզբունք 5. Պետությունները պետք է ապահովեն, որ միգրացիայի համատեքստում առանց
ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին տրամադրվի
համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվություն և, որ նրանց
հասանելի լինի գանգատների անկախ ընթացակարգ և իրավական միջոցներ՝
իրենց իրավունքներն արդյունավետ իրացնելու կամ իրենց իրավունքների
խախտումների դեպքում միջոցներ ձեռնարկելու համար: Պետությունները պետք է երեխաներին տրամադրեն համապարփակ տեղեկատվություն և խորհրդատվություն իրենց իրավունքների, ընթացակարգերի և խնամակալության մարմինների դերի վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը պետք է ներկայացվի երեխայի համար մատչելի և հասկանալի լեզվով, ստուգվի խնամակալի կողմից և չպետք է փոխարինի երեխային ուղղակի

տեղեկատվություն փոխանցելու պարտականությանը: Պետք է գործեն արդյունավետ մեխանիզմներ, որոնք երեխաներին հնարավորություն կտան օգտվելու իրենց խնամակալության կարգավորումների վերաբերյալ անկախ բողոքարկման մեխանիզմից:: Այս մեխանիզմները պետք է լինեն հեշտ հասանելի, երեխայակենտրոն և թափանցիկ՝ համապատասխան գաղտնիության պահպանման երաշխիքներով: Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները, ինչպիսին է, օրինակ, միջնորդությունը, պետք է խրախուսվեն այն դեպքերում, երբ դրանք ծառայում են երեխայի լավագույն շահերին: Երեխաները պետք է ունենան արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություն անաչառ և անկախ իրավասու մարմնի առջև: Դատական Վվարույթները պետք է լինեն երեխաների նկատմամբ զգայուն, հասանելի, և կիրառվի անհետաձգելիության սկզբունքը՝ արդարադատության անհապաղ և անվճար իրականացումն ապահովելու համար:

Սկզբունք 6. Պետությունները պետք է ապահովեն իրավասու մարմնի կազմավորումը, որը պատասխանատու է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման համար: Այս սկզբունքը վերաբերում է ինստիտուցիոնալ միջոցառումներին՝ ընդգծելով այն անհրաժեշտությունը, որ պետությունները ստեղծեն իրավասու մարմին, որը պատասխանատու կլինի միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման վերահսկման համար՝ հաշվի առնելով անդամ պետություններում խնամակալության պարտականությունների կազմակերպման ձևերը: Պետությունները պետք է երաշխավորեն, որ խնամակալության կառավարման գործառույթներն իրականացվում են իրավասու մարմնի կողմից, որը հսկում է խնամակալների հավաքագրումը, բարեվարքությունը և վերապատրաստումը, ինչպես նաև ապահովում է երեխայի պաշտպանության քաղաքականությունների առկայությունը: Պետք է սահմանվեն հստակ որակավորման չափորոշիչներ՝ խուսափելու երեխայի հետ շահերի բախումից: Այս մարմինը պետք է սահմանի ընթացակարգեր և աջակցման միջոցառումներ՝ ուղղված խնամակալներին և երեխաներին, ներառյալ՝ վարչական աջակցություն, վերապատրաստում և խնամակալի վարքագծի չափանիշների սահմանում: Պետք է գործեն հաղորդակցության, համագործակցության և հաշվետվության մեխանիզմներ խնամակալների համար՝ անհետ կորած կամ բռնության ենթարկված երեխաների դեպքերը վարելու համար: ՄԱՈՒԸԱ երեխաներին պետք է տրամադրվի երեխաների համար բարենպաստ տեղեկատվական նյութ՝ խնամակալի դերի, իրավունքների և առկա աջակցության ծառայությունների վերաբերյալ: Պետությունները պետք է երաշխավորեն, որ խնամակալները ունենան կառավարելի գործերի բաշխվածություն՝ իրենց պարտականությունները արդյունավետ կատարելու և յուրաքանչյուր երեխային անհատական ուշադրություն

ու աջակցություն ցուցաբերելու համար: Պետք է իրականացվի խնամակալների գործողությունների կանոնավոր մշտադիտարկում և վերահսկողություն՝ համոզվելու, որ նրանք պատշաճ կատարում են իրենց պարտականությունները: Իրավասու մարմինը պետք է ունենա գործառնական անկախություն՝ երեխայի բարեկեցությունը վերահսկելու նպատակով: Յուրաքանչյուր խնամակալության տակ գտնվող երեխայի համար պետք է վարվի համապատասխան տեղեկատվություն պարունակող անհատական գործ: Տվյալների վարումն ու պահպանման մեխանիզմները պետք է համապատասխանեն միջազգային տվյալների պաշտպանության չափանիշներին՝ հնարավորություն տալով ապացույցների ներկայացման՝ դատավարական և բողոքարկման գործընթացներում:

Սկզբունք 7. Պետությունները պետք է համապատասխան ռեսուրսներ հատկացնեն միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության ապահովման համար, ներառյալ՝ երաշխավորելով, որ խնամակալները պատշաճ կերպով ստուգված են, հուսալի են և որակավորված: Պետությունները պետք է կանոնավոր հիմունքներով տվյալներ հավաքեն՝ նպատակ ունենալով պարզել միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության հետ կապված երեխաների թվաքանակը, կարիքները և հատկացված ռեսուրսները, և նախատեսեն խնամակալության միջոցների վերանայման հնարավորություն՝ ապահովելու համար, որ դրանք արձագանքեն փոփոխվող կարիքներին, ներառյալ արտակարգ իրավիճակներում: Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալության մարմնին հատկացվեն կայուն և համարժեք ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսներ: Խնամակալության իրավասու մարմնի աշխատակազմը պետք է պահպանի բարձր մասնագիտական չափանիշներ, ներառյալ՝ գաղտնիության հետ կապված, դրսևորի բարձր բարեվարքություն և ունենա անհրաժեշտ հմտություններ: Խնամակալները պետք է ունենան անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձառություն՝ երեխաների զարգացման, իրավունքների, բարեկեցության ապահովման համակարգերի և մշակութային կարիքների հարցերում: Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ խնամակալներին և խնամակալության մարմնին տրամադրվի համապատասխան աջակցություն՝ կրթական կամ վերապատրաստման ծրագրերի միջոցով՝ իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար:

Սկզբունք 8. Պետությունները, իրենց ներքին համակարգերին համապատասխան, պետք է ստեղծեն ընթացակարգեր և ձեռնարկեն միջոցներ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ պատասխանատվություն

կրող մարդկանց և խնամակալի և/կամ խնամակալության մարմնի միջև արդյունավետ համագործակցություն և համակարգում ապահովելու համար: Այս սկզբունքն ընդգծում է ազգային մակարդակում համագործակցության և համակարգման կարևորությունը: Դա ներառում է մեխանիզմների ստեղծումը՝ ապահովելու համար արդյունավետ համագործակցությունն ու համակարգումը միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ պարտականություններ իրականացնող անձանց և խնամակալի և/կամ խնամակալության մարմնի միջև: Պետությունները պետք է հստակ սահմանեն խնամակալների և խնամակալության մարմինների դերերն ու պարտականությունները իշխանությունների և շահագրգիռ կողմերի նկատմամբ, մասնավորապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական պաշտպանության ծառայությունների, երիտասարդության ծառայությունների և կազմակերպությունների՝ ապահովելու հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Պետք է գործի աշխատունակ կառուցակարգ, որը կներառի խնամակալության մարմինը՝ առաջնահերթություն տալով միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների բարեկեցությանը և հիմնավորված, իրավունքների վրա հիմնված կայուն լուծումների որոնմանը: Խնամակալների, խնամակալության մարմնի և բոլոր այլ շահառուների միջև կանոնավոր հիմունքներով համագործակցությունն ու համակարգումը բարելավելու համար պետությունները պետք է մշակեն արձանագրություններ, համաձայնագրեր, ստանդարտ գործառնական ընթացակարգեր և ուղղորդման ընթացակարգեր: Ուղղորդման ընթացակարգերը պետք է անդրադառնան խնամակալի և խնամակալության մարմնի դերին՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխայի անհետացման դեպքում և այն իրավիճակներում, երբ երեխան բռնության, դաժան վերաբերմունքի, թրաֆիքինգի կամ շահագործման զոհ է կամ կանգնած է նման վտանգի առաջ: Պետք է պահպանվի գաղտնիությունը, ներառյալ տեղեկատվության փոխանակումը, որպես առաջնային նկատառում ունենալով երեխայի լավագույն շահերը : Պետությունները պետք է դյուրացնեն խնամակալների և այլ շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը և համակարգումը՝ պարբերաբար տրամադրելով բազմագերատեսչական և բազմամասնագիտական վերապատրաստում և գործիքներ: Պետությունները պետք է ապահովեն համագործակցության և համակարգման մշտադիտարկում և շարունակական գնահատում՝ համապատասխան շահառուների մասնակցությամբ:

Սկզբունք 9. Պետությունները պետք է ապահովեն միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հարցերով միջազգային համագործակցության ամենալայն շրջանակը, այդ թվում՝ ընտանիքի հայտնաբերման և կայուն, իրավունքի

վրա հիմնված լուծումների մշակման և իրականացման համար, և պատշաճ ձևով ներգրավեն իրենց խնամակալության մարմինը և/կամ խնամակալներին: Այս սկզբունքն ընդգծում է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների կարիքները հոգալու համար միջազգային մակարդակում համագործակցության կարևորությունը, այդ թվում՝ ընտանիքի հայտնաբերման և ընտանեկան հանգամանքների գնահատման, խնամքի և խնամակալության պարտականությունների փոխանցման, կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումների հաստատման, երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, երեխաների անհետացման կանխարգելման և անհայտ կորած երեխաների հայտնաբերման նպատակով: Պետությունները պետք է իրավական հիմք ունենան միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հետ կապված հարցերում միջազգային համագործակցություն ապահովելու համար: Պետությունները պետք է ունենան հստակ ուղիներ կամ կառուցակարգեր՝ Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների վերաբերյալ տեղեկատվության կամ այլ տեսակի աջակցության հարցումների փոխանցման և կատարման համար: Երեխաների իրավունքների ապահովման նպատակով պետությունների, խնամակալների և հաստատությունների միջև համագործակցությունը պետք է լինի արդյունավետ: Պետք է խթանվի գիտելիքների և լավագույն փորձերի պարբերական փոխանակումը՝ միգրանտ երեխաների խնամակալության հետ կապված: Համագործակցությունը պետք է կենտրոնանա երեխաների բարեկեցության և լավագույն շահերի պաշտպանության վրա՝ նաև երկրի սահմաններից դուրս: (CM/Rec(2019)11 հանձնարարական):

Հավելված 4. Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար կիրառելի ՄԱԿ ԵԻԿ-ի հոդվածները

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (ՄԱԿ ԵԻԿ) և դրա կամընտիր արձանագրությունները[103] մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական միջազգային փաստաթղթերն են, որոնք պաշտպանություն են ապահովում միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար և սահմանում են համապարփակ չափանիշներ: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան պարունակում է հոդվածներ, որոնք հատկապես կարևոր են ՄԱՈՒԸԱ երեխաների համար.

- 4-րդ հոդված. Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր երեխա կարողանա

103 Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն, Զինված հակամարտություններում երեխաների ներգրավման մասին կամընտիր արձանագրություն, Հաղորդակցության ընթացակարգի մասին կամընտիր արձանագրություն:

օգտվել իր իրավունքներից՝ ստեղծելով համակարգեր և ընդունելով օրենքներ, որոնք խթանում և պաշտպանում են երեխաների իրավունքները:

- 7-րդ հոդված. Յուրաքանչյուր երեխա ունի ծննդյան գրանցման, անուն և քաղաքացիություն ունենալու, ինչպես նաև՝ որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

- 8-րդ հոդված. Պետությունները պետք է հարգեն և պաշտպանեն երեխայի ինքնության իրավունքը և կանխեն երեխայի անվան, քաղաքացիության կամ ընտանեկան կապերի անօրինական միջամտությունը:

- 9-րդ հոդված. Երեխաները չպետք է բաժանվեն իրենց ծնողներից՝ ծնողների կամքին հակառակ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է երեխայի լավագույն շահերից: Բաժանված ծնողների երեխաները իրավունք ունեն պահպանել կապը երկու ծնողների հետ, եթե դա վտանգ չի ներկայացնում երեխայի բարեկեցության համար:

- 10-րդ հոդված. Ընտանիքները, որոնց անդամները գտնվում են տարբեր երկրներում, պետք է իրավունք ունենան ճամփորդելու այդ երկրներով՝ կապը պահպանելու կամ վերամիավորվելու նպատակով:

- 13-րդ հոդված. Երեխաներն ունեն տեղեկատվություն ստանալու և հաղորդելու իրավունք՝ պայմանով, որ այն չի վնասում իրենց կամ այլ անձանց:

- 14-րդ հոդված. Երեխաներն իրավուք ունեն պահպանելու իրենց համոզմունքները և դավանելու իրենց կրոնը, եթե դա չի խախտում այլոց իրավունքները:

- 16-րդ հոդված. Երեխաներն ունեն անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք:

- 17--րդ հոդված. Երեխաները իրավունք ունեն ստանալու իրենց առողջության և բարեկեցության վերաբերյալ կարևոր տեղեկատվություն:

- 19-րդ հոդված. Երեխաները պետք է պաշտպանված լինեն ֆիզիկական և հոգեբանական բռնությունից և դաժան վերաբերմունքից:
- 20-րդ հոդված. Երեխաները, ովքեր չեն կարող խնամվել իրենց ընտանիքի կողմից, ունեն հատուկ խնամքի իրավունք և պետք

է խնամվեն հարգանքով՝ հաշվի առնելով նրանց էթնիկական պատկանելիությունը, կրոնը, մշակույթը և լեզուն:

- 22-րդ հոդված. Փախստական երեխաները իրավունք ունեն հատուկ պաշտպանության և աջակցության:

- 23-րդ հոդված. Հաշմանդամություն ունեցող երեխաները իրավունք ունեն հատուկ խնամքի և աջակցության՝ լիարժեք և անկախ կյանք վարելու հնարավորության համար:

- 24-րդ հոդված. Երեխաներն ունեն բարձրորակ առողջապահական ծառայություններ, անվտանգ խմելու ջուր, սննդարար սնունդ, մաքուր և անվտանգ միջավայր, ինչպես նաև առողջությանը նպաստող տեղեկատվություն ստանալու իրավունք:

- 25-րդ հոդված. Խնամքի ներքո գտնվող երեխաներն իրավունք ունեն իրենց կենսապայմանների պարբերական գնահատման՝ դրանց համապատասխանությունն որոշելու համար:

- 28-րդ հոդված. Բոլոր երեխաները իրավունք ունեն անվճար նախնական կրթության: Դպրոցական կարգապահության ցանկացած ձև պետք է հարգի երեխայի մարդկային արժանապատվությունը:

- 29-րդ հոդված. Կրթությունը պետք է նպաստի երեխայի անհատականության, հատուկ ունակությունների և կարողությունների լիարժեք զարգացմանը: Այն պետք է խթանի երեխայի հարգանքը՝ մյուսների, մարդու իրավունքների, ինչպես նաև իրենց և այլ մշակույթների հանդեպ:

- 30-րդ հոդված. Փոքրամասնության պատկանող կամ բնիկ ազգերի երեխաներն իրավունք ունեն սովորելու և գործնականում կիրառելու իրենց մշակույթը, լեզուն և կրոնը:

- 32-րդ հոդված. Պետությունները պարտավոր են պաշտպանել երեխաներին այն աշխատանքից, որը վտանգ է ներկայացնում նրանց առողջության կամ կրթության համար, ինչպես նաև վնասակար թմրանյութերից և թմրանյութերի առևտրին ներգրավումից, սեռական շահագործման և չարաշահման բոլոր ձևերից, առևանգումից, վաճառքից և թրաֆիքինգից, մանկական պոռնոգրաֆիայից և **նրա բարեկեցությանը որևէ տեսանկյունից վնասող շահագործման բոլոր այլ ձևերից:**

- 37-րդ հոդված. Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի դաժան կամ

նվաստացնող պատժի: Օրենքը խախտած երեխաները չպետք է պահվեն անազատության մեջ մեծահասակների հետ միասին, պետք է պահպանեն կապն իրենց ընտանիքի հետ և չպետք է դատապարտվեն մահապատժի կամ առանց ազատ արձակման հնարավորության ցմահ ազատազրկման:

- 38-րդ հոդված. Պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պատերազմից տուժած երեխաներին պաշտպանելու և խնամելու համար:

- 39-րդ հոդված. Անտեսված, բռնության կամ շահագործման ենթարկված երեխաները պետք է ստանան մասնագիտացված աջակցություն՝ ֆիզիկական և հոգեբանական վերականգնման և հասարակությունում վերաինտեգրման համար:

- 40-րդ հոդված. Օրենքի խախտման մեջ մեղադրվող երեխաները իրավունք ունեն իրավաբանական օգնության և արդար վերաբերմունքի՝ այնպիսի արդարադատական համակարգում, որը հարգում է նրանց իրավունքները: Պետությունները պետք է սահմանեն քրեական պատասխանատվության նվազագույն տարիք և ապահովեն նվազագույն երաշխիքներ արդար և արագ դատավարության կամ այլընտրանքային գործընթացների համար:

- 42-րդ հոդված. Պետությունները պետք է աջակցեն երեխաներին՝ իմանալու իրենց իրավունքները:

Պետությունները և երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կազմակերպությունները պետք է պաշտպանեն ընտանիքից բաժանված երեխաների իրավունքներն ու լավագույն շահերն արտակարգ իրավիճակներում, երբ անհատական հիմունքներով խնամակալության կարգավորումների կիրառումը դժվար է[104]:

ՄԱՌԻԱ երեխաները գտնվում են հատկապես խոցելի իրավիճակում: Պատերազմից, բռնությունից, շահագործումից, անտեսումից կամ խոշտանգումներից տուժած ՄԱՌԻԱ երեխաները՝ հատկապես աղջիկները, որոնք պատերազմի և զինված հակամարտության համատեքստում կարող են ենթարկվել սեռով պայմանավորված բռնության, կարիք ունեն հատուկ խնամքի և աջակցության՝ իրենց առողջությունը, արժանապատվությունը, սոցիալական կյանքը և ինքնահարգանքը վերականգնելու համար: Պատերազմից և զինված հակամարտությունից տուժած երեխաների պաշտպանությունն ու խնամքը ապահովելու նպատակով պետությունները պարտավոր են հատուկ պաշտպանություն և աջակցություն տրամադրել

104 ՄԱԿ ԵԻԿ/ՄՊ/2005/6, 2005, կետ 39:

փախստական և ապաստան հայցող երեխաներին, որպեսզի նրանք կարողանան լիարժեք օգտվել իրենց իրավունքներից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք երեխան գտնվում է ապաստանի հայտ ներկայացնելու փուլում, թե արդեն ունի փախստականի կարգավիճակ[105]: Բնիկ ժողովուրդներին կամ փոքրամասնություններին պատկանող երեխաներն ունեն իրենց սեփական լեզուն սովորելու մշակույթը, կրոնը և լեզուն կիրառելու իրավունք: Նրանք իրավունք ունեն դավանելու իրենց լեզուն և կրոնը այն դեպքերում, երբ այդ ավանդույթները չեն կիսում բնակչության մեծամասնությունը (7-րդ, 20-րդ, 30-րդ հոդվածներ):

Եթե դա չի բխում երեխայի լավագույն շահերից, երեխան չպետք է բաժանվի իր ծնողներից: Այն երեխաները, ում ընտանիքն ի վիճակի չէ հոգալ նրանց մասին, իրավունք ունեն հատուկ խնամքի, որը պետք է տրամադրվի այնպիսի անձանց կողմից, ովքեր հարգում են երեխայի էթնիկական պատկանելիությունը, կրոնը, մշակույթը և լեզուն: Պետությունները պարտավոր են ստեղծել հիմնական իրավական շրջանակ և ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ ապահովելու համար, որ ԱՈՒԸԱ երեխաների լավագույն շահերը պատշաճ կերպով ներկայացված լինեն: Եթե ԱՈՒԸԱ երեխաները չեն կարող խնամվել իրենց կենսաբանական ընտանիքի կողմից, պետությունները պետք է ապահովեն նրանց հատուկ պաշտպանությունը և աջակցությունը: ԱՈՒԸԱ երեխային հայտնաբերելու պես պետությունը պետք է խնամակալ կամ խորհրդատու նշանակի և պահպանի խնամակալության պայմանավորվածությունը մինչև այն պահը, երբ երեխան կդառնա չափահաս կամ մշտապես կհեռանա տվյալ պետության տարածքից կամ իրավասությունից: Դա ներառում է նաև այլընտրանքային խնամքի տրամադրումը, որը պետք է լինի շարունակական և հարգի երեխայի մշակույթը, լեզուն և կրոնը: «Երեխայի լավագույն շահերը» պետք է միշտ հանդիսանան երեխայի խնամքի և վերաբերմունքի առաջնորդող սկզբունքը: Ինչպես ցանկացած երեխա, այնպես էլ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխան ունի բավարար կյանքի մակարդակ ունենալու իրավունք, որը բավարարում է նրա սոցիալական և ֆիզիկական կարիքները և նպաստում է նրա զարգացմանը: Պետությունները պետք է աջակցեն խնամակալներին՝ երեխային արժանապատիվ կյանքի մակարդակ ապահովելու գործում: ԱՈՒԸԱ երեխաներն իրավունք ունեն իրենց նկատմամբ կիրառվող խնամքի պայմանների, ինչպես նաև իրենց կյանքի պայմանների պարբերաբար գնահատման, եթե նրանք տեղավորվել են հիվանդանոցում կամ այլընտրանքային խնամքի միջավայրում, օրինակ՝ խնամատար ընտանիքում, խնամքի կամ պաշտպանության նպատակով: Պետք է սահմանվեն և կիրառվեն վերանայման ընթացակարգեր՝ խնամակալության արդյունավետությունը վերահսկելու համար, երաշխավորելով, որ երեխայի լավագույն շահերը հաշվի են առնվում որոշումների կայացման բոլոր

105 ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիա, 1989թ., 38-39-րդ հոդվածներ:

փուլերում և, ամենակարևորը, կանխվում է երեխայի նկատմամբ ցանկացած վատ վերաբերմունք: Բացի այդ, պետությունները պարտավոր են նպաստել բաժանված երեխաների վերամիավորմանը իրենց ծնողների հետ[106]:

Երեխայի հետ կապված յուրաքանչյուր գործողություն պետք է քննարկվի խնամակալի հետ և նրան պետք է տրամադրվի համապատասխան տեղեկություն: Խնամակալը պետք է մասնակցելու իրավունք ունենա բոլոր պլանավորման և որոշումների կայացման գործընթացներում, ինչպիսիք են՝ միգրացիոն հարցերը և բողոքարկումները, հարցազրույցները, խնամքի ծրագրերը և երկարաժամկետ լուծում գտնելուն ուղղված բոլոր ջանքերը: Խնամակալը կամ խորհրդատուն պետք է պատշաճ ձևով բավարարի երեխայի իրավական, սոցիալական, առողջապահական, հոգեբանական, նյութական և կրթական կարիքները, միևնույն ժամանակ հանդես գալով որպես կապող օղակ երեխայի և այն մասնագիտացված կազմակերպությունների կամ անձանց միջև, որոնք ապահովում են երեխայի շարունակական խնամքը: Դա ենթադրում է, որ խնամակալը կամ խորհրդատուն պետք է ունենա համապատասխան փորձառություն՝ երեխաների խնամքի ոլորտում: Խնամակալության իրավունքը չպետք է տրվի այն կազմակերպություններին կամ անձանց, որոնց շահերը կարող են հակասել երեխայի շահերին: Երեխայի կարծիքը միշտ պետք է հաշվի առնվի, և նա պետք է տեղեկացված լինի խնամակալության և իրավաբանական ներկայացվածության հետ կապված բոլոր պայմանավորվածությունների մասին: ԱՈՒԸԱ երեխաները պետք է ստանան տեղեկատվություն խնամակալության, խնամքի և տեղավորման պայմանավորվածությունների, ինչպես նաև իրավաբանական ներկայացվածության վերաբերյալ՝ ելնելով նրանց ըմբռնման (ընկալման) և հասունության մակարդակից: Անհրաժեշտության դեպքում հաղորդակցության բոլոր փուլերում պետք է թարգմանիչներ տրամադրվեն:

Պետությունները և երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները պետք է պաշտպանեն և խթանեն ընտանիքից անջատված երեխաների իրավունքներն ու լավագույն շահերը՝ արտակարգ իրավիճակների պայմաններում, երբ անհատական խնամակալության համակարգերի ստեղծումը կդժվարանա[107]:

ԱՈՒԸԱ երեխաներն ունեն կրթություն ստանալու իրավունք: Նրանք պետք է ունենան անվճար հասանելիություն նախնական և տարբեր ձևերի միջնակարգ կրթություն ստանալուն: Դպրոցում կիրառվող կարգապահությունը պետք է հարգի երեխայի իրավունքներն ու արժանապատվությունը[108]: Հատուկ կարիքներ ունեցող ԱՈՒԸԱ երեխաների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար պետք է

106 Նույն տեղում, հոդվածներ 22, 25, 27 :
107 ՄԱԿ ԵԻԿ/ՄՊ/2005/6, 2005թ., 39-րդ կետ:
108 ՄԱԿ ՓԳՀ, 1951թ., հոդված 22:

ապահովվի նաև անվճար որակյալ կրթության մատչելիությունը: 1951 թվականի «Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան» նաև վերահաստատում է պետությունների պարտավորությունը՝ կրթություն ապահովելու փախստական երեխաների համար[109]:

Պետությունները պարտավոր են պաշտպանել ԱՈՒԸԱ երեխաներին, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին, մանկական աշխատանքի ներգրավումից, թմրամիջոցների չարաշահումից, առևանգումից, վաճառքից և թրաֆիքինգից, սեռական և այլ շահագործման ձևերից, ներառյալ՝ շահագործման նպատակով նրանց ապօրինի տեղափոխումը երկրի ներսում կամ սահմաններից դուրս (տես՝ նույն աղբյուրը, 32-36-րդ հոդվածներ), ինչպես նաև զինվորական ծառայության ներգրավումից: Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված աղջիկները, սեռով պայմանավորված, բռնության տեսանկյունից առանձնահատուկ վտանգի ներքո են՝ ներառյալ թրաֆիքինգի, սեռական շահագործման, հարկադիր ամուսնության և այլ բազմաթիվ ձևերի միջոցով:

Հավելված 5. Հատված FRONTEX-ի 2019 թ. առաջարկություններից ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ:

Frontex-ն առաջարկում է ստեղծել հստակ և արագ գործարկվող ուղղորդման համակարգ և ապահովել, որ ուղղորդումները կատարվեն հնարավորինս վաղ փուլում: Երեխաներին վերաբերող ցանկացած ուղղորդման մեխանիզմի համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

- Երեխայի իրավունքների պաշտպանությունը պետք է լինի բոլոր միջոցառումների առաջնահերթությունը՝ լիարժեք հարգանքով երեխայի լավագույն շահերի նկատմամբ: Բոլոր երեխաները՝ ուղեկցությամբ, առանց ուղեկցության կամ բաժանված, պետք է կարողանան հավասար հիմքերով օգտվել պաշտպանությունից, որը հաշվի կառնի նրանց փաստացի կարիքները, և տեղավորվեն իրենց ընտանիքի անդամների հետ միասին, երբ դա բխում է երեխայի լավագույն շահերից:

- Արդյունավետ համակարգը պետք է հնարավորինս լայն ընդգրկում ունենա, որպեսզի կարողանա արագ արձագանքել բռնության, շահագործման, մարդկանց թրաֆիքինգի կամ առևանգման տարբեր դրսևորումներին: Պետք է հասանելի լինի մասնագիտացված ծառայությունների լայն շրջանակ, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով արձագանքել յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքներին:

109 Նույն աղբյուրը,հոդվածներ 32-36:

- Պետք է կիրառվի բազմամասնագիտական և միջոլորտային մոտեցում: Երեխաների պաշտպանության ինտեգրված համակարգերը առավել արդյունավետ են: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ներառել բոլոր համապատասխան և մասնագիտացված դերակատարներին՝ թե՛ պետական, և թե՛ քաղհասարակության:

- Տարբեր կառույցների միջև ձևավորված համաձայնությունները պետք է լինեն բավարար ճկուն՝ ուղղորդման գործընթացի բարդությունները կառավարելու և տարբեր իրավիճակներում գտնվող երեխաների տարբեր կարիքներին արձագանքելու համար: Բոլոր գործընկերները պետք է ներգրավված լինեն՝ ըստ իրենց դերերի և պատասխանատվությունների, իսկ համագործակցության հիմնարար սկզբունքը պետք է հստակ և մանրամասն սահմանված լինի կառուցակարգի շրջանակում:

- Պետք է ապահովվի աջակցություն և պաշտպանություն տրամադրող ծառայությունների մատչելիությունը և դյուրինացվի դրանց հասանելիությունը:

- Թափանցիկությունը և պատասխանատվության հստակ բաժանումը արդյունավետ ուղղորդման կառուցակարգի առանցքն են:

- Պետք է հիմնվել արդեն գոյություն ունեցող կառուցակարգերի վրա՝ նպատակ ունենալով ուժեղացնել տեղերում հանձնառությունը, ինչը կդյուրինացնի գործընթացը: Կայունությունը պետք է լինի վերջնական նպատակը:

- Կառուցակարգը պետք է պարբերաբար վերանայվի և թարմացվի՝ երեխաների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Պետք է ձգտել համագործակցության այլ համապատասխան ուղղորդման համակարգերի հետ:

- Սահմանապահ զորքերը միշտ պետք է ունենան հետևյալ տեղեկատվությունը (հասանելիության դեպքում).

– «պարտադիր զանգի» ծառայությունների կոնտակտային տվյալները՝ երեխայի շուրջօրյա աջակցության և այլ շտապ օգնության ծառայություններ:

– պաշտպանական բոլոր ծառայությունների և ծրագրերի ամբողջական ցանկ՝ կոնտակտային տվյալներով (բժշկական,

հոգեկան առողջության, իրավաբանական, նյութատեխնիկական և այլն), անկախ նրանից, թե դրանք տրամադրվում են ազգային իշխանությունների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների, թե՝ ՀԿ-ների կողմից:

Հավելված 6. Հայտնաբերված բացթողումների և առաջարկությունների ամփոփում՝ ըստ 2024 թվականի կարիքների գնահատման զեկույցի

6.1 Բացթողումներ

«Հայ երեխաների իրավունքների պաշտպանություն հետկոնֆլիկտային համատեքստում» Եվրոպայի խորհուրդի ծրագրի շրջանակում, նախաձեռնվել է կարիքների գնահատում, որի հիմնական նպատակը Հայաստանում տեղահանված երեխաների պաշտպանութունն ու ապահովությունն է, մասնավորապես, ԱՈՒԸԱ երեխաների արդյունավետ խնամակալության ապահովումն է, գործող օրենսդրության, քաղաքականությունների և գործնական մոտեցումների բացթողումների հայտնաբերումն ու վերլուծությունը, ինչպես նաև վերհանված խնդիրների լուծման նպատակով առաջարկների տրամադրումը, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների զարգացման վերաբերյալ[110]:

Այս խնդիրներն ուսումնասիրվել են երեխաների պաշտպանության, երեխայակենտրոն արդարադատության և այլընտրանքային խնամքի բարեփոխման լայն համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ինստիտուցիոնալ խնամքից դեպի անհատական խնամքի անցման (ապաինստիտուցիոնալացման) և մարդասիրական ճգնաժամերից տուժած երեխաների պաշտպանության և ապահովության խնդիրներին:

Համակարգում և բազմամասնագիտական մոտեցում
Բացթողումների և կարիքների գնահատման զեկույցը նաև արձանագրում է բարձրագույն մակարդակում միջգերատեսչական պատշաճ համակարգման պակասը, որը խոչընդոտում է բազմամասնագիտական մոտեցման կիրառումը: Հայաստանում ԱՈՒԸԱ երեխաներին վերաբերող հարցերում միջգերատեսչական համագործակցությանը և համակարգմանը խանգարում է այն, որ գերատեսչությունները բավարար իրազեկված չեն միմյանց լիազորությունների, գործառույթների և կարողությունների վերաբերյալ: Որոշ դեպքերում, նույնիսկ երբ առկա է պարտականությունների

110 Կարիքների գնահատման զեկույց Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգի ապաինստիտուցիոնալացման և բարեփոխման, այդ թվում՝ առանց ուղեկցության եվ ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ, https://rm.coe.int/needs-assessment-report-arm-2024-final-with-disclaimer/native/1680b1a687:

հստակ բաժանում, արձանագրվում է փոխադարձ համագործակցության և համակարգման պակաս: Չկա աշխատանքային խումբ, որը կծառայի որպես համակարգման և տեղեկատվության փոխանակման հարթակ՝ ապահովելով, որ պարտականությունները չկրկնվեն և մոտեցումները մասնատվեն:

Մի շարք ստանդարտ գործառնական ընթացակարգեր և ուղեցույցներ համարվել են անբավարար՝ կիրառելի օրենսդրության հետևողական իրականացումն ապահովելու համար, հանգեցնելով մատուցվող ծառայությունների ցածր որակի: Այս իրավիճակը առավել սրվում է կարողությունների զարգացման և արդյունքայնության գնահատման վրա անբավարար ուշադրության, ինչպես նաև իրականացվող կարողությունների զարգացման ուղղությամբ անբավարար ջանքերի հետևանքով: Ազգային մակարդակով երեխաների պաշտպանության ինտեգրված համակարգի բացակայությունը լուրջ մտահոգություն է առաջացնում, որը պահանջում է առաջնահերթ արձագանք: Նույն կերպ, արտակարգ իրավիճակներում երեխաների պաշտպանության ամուր իրավական և գործառնական շրջանակի բացակայությունը մատնանշում է երկարաժամկետ կայուն ինստիտուցիոնալացված կառուցակարգի ստեղծման անհրաժեշտությունը՝ արտակարգ իրավիճակներում երեխաների պաշտպանության ապահովման համար, որպեսզի երեխաները կարողանան մարդասիրական ճգնաժամի պայմաններում օգտվել որակյալ ծառայություններից: Այս համատեքստում, ծառայությունների մասնատվածությունը և ընդհանուր համակարգման անբավարարությունը, չնայած գերատեսչական լիազորությունների և հանձնարարականների համեմատաբար հստակությանը, առավել ընդգծված է:

- **Երեխայի լավագույն շահերի ապահովում**

Վերոնշյալ բացթողումների և կարիքների գնահատման արդյունքում բացահայտված մեկ այլ հատուկ մարտահրավեր է «երեխայի լավագույն շահերի» հասկացության միասնական և հետևողական ընկալումը բոլոր ոլորտներում: Այն պետք է հիմնված լինի մեթոդական ուղեցույցների և ստանդարտ գործառնական ընթացակարգերի վրա՝ ուղղորդելու երեխայի տեղավորման հետ կապված յուրաքանչյուր որոշումը:

- **Ապահովում**

Մեկ այլ ակնառու խնդիր է երեխաների ապահովության պահանջների երաշխավորման համար անհրաժեշտ օրենսդրական և/կամ քաղաքական հիմքի բացակայությունը, թեև իշխանությունները հաճախ կիրառում են սոցիալական պատվերի մոդելը, որպեսզի հանրային ծառայությունները պետական գնումների ծրագրերի միջոցով պատվիրակեն մասնավոր և

շահույթ չհետապնդող կազմակերպություններին:

- **Ընտանիքի միասնություն**

Գնահատումը չի բացահայտել որևէ կոնկրետ քաղաքականություն, որը նպաստում է ընտանիքի վերամիավորմանը, և որևէ կենսունակ մեխանիզմ, որը կվերականգնի ծնողների կարողությունը՝ առավել արդյունավետ կերպով հոգալու երեխայի մասին: Նույն կերպ, չի հաջողվել փաստական ապացույցներ գտնել ընտանիքի հայտնաբերման և վերամիավորման նպատակով պետական մակարդակով հաստատված ինստիտուցիոնալ մեխանիզմի առկայության վերաբերյալ:

- **Մշտադիտարկում, վերահսկողություն և ուղղորդում**

Մեկ այլ հիմնական խնդիր է մշտադիտարկման մեխանիզմի բացակայությունը: Թեև խնամակալ մարմինները տեսականորեն պարտավոր են հաշվետվություն ներկայացնել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, հաշվետվությունները կանոնավոր չեն ներկայացվում, իսկ երբ ներկայացվում են, հաճախ ձևական բնույթ են կրում: Խնամակալների նկատմամբ վերահսկողությունը նույնպես հետևողականորեն չի իրականացվում: Շուտով ընդունվելիք «Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագիծը կլրացնի այս բացը, սակայն նախագծում քաղաքականություն մշակելու և վերահսկման գործառույթները միախառնվում են լիազորված մարմնի օպերատիվ գործառույթների հետ, ինչը կարող է խաթարել մշտադիտարկման և վերահսկողության արդյունավետությունը և հանգեցնել երեխայի տեղավորման վերաբերյալ որոշումների կայացման ուշացման: Նմանապես, վերահսկողությունը վերապահված է տեղական համայնքների ղեկավարներին, սակայն լուրջ մտահոգությունների կամ խնամատարների դեմ բողոքների դեպքում անհրաժեշտ է դիմել ավելի բարձր ատյան:

Բացի այդ, քանի որ խնամակալ մարմնի գործառույթների մեջ մտնում է խնամակալության վերահսկումը, ներառյալ դիմումների և բողոքների մշտադիտարկումը և ուսումնասիրությունը՝ կապված նրանց գործողությունների կամ անգործության հետ, բացառվում է շահերի բախման դեպքում բողոքներն ավելի բարձր ատյան ներկայացնելու հնարավորությունը:

- **Խնամատար ընտանիքի համակարգի մասնագիտացում**

Մասնագիտական խնամատարության համակարգը դեռևս մշակման փուլում է և դեռևս կարիք ունի ամրապնդվելու՝ առկա պահանջարկը

բավարարելու համար, մասնավորապես՝ վերանայելով փոխհատուցումը և նպաստները՝ խնամատար ծնողներին ներգրավելու համար:

- **Արդարադատության բացեր**

Արդարադատության մատչելիության առումով Հայաստանը դեռևս չունի երեխաների համար բարենպաստ արդարադատության լիարժեք համակարգ, ինչպես նաև անչափահասների կամ երեխաների համար մասնագիտացված դատարաններ, թեև Երևանում և Կապանում ներկայումս գործարկվում են երկու՝ «երեխաների համար բարենպաստ անկյուններ», որոնք կարող են համապատասխանել տեղահանված երեխաների՝ հատկապես առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների կարիքներին: Երեխայակենտրոն՝ երեխաների համար բարենպաստ մոտեցումն ու օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների համար նախատեսված երաշխիքները (հատկապես՝ քրեական նախաքննության, հարցաքննության, դատական գործընթացների ժամանակ և այլն) առկա են, սակայն դրանց կիրառման վերաբերյալ բացակայում են որոշակի մանրամասներ, կամ առաջարկվող միջոցները քիչ են օգտագործվում:

Նշենք նաև, որ տեղահանված երեխաների, այդ թվում՝ ԱՈՒԸԱ երեխաների համար չկան բարենպաստ և մատչելի բողոքարկման կառուցակարգեր: ԱՈՒԸԱ երեխաների համար անվճար իրավաբանական օգնության տրամադրումը, ինչպես նաև նրանց համար հասկանալի լեզվով տեղեկատվության մատչելիությունը դեռևս բավարար չէ:

Հաշվի առնելով քրեական զոհականացման հարցում տեղահանված երեխաների, հատկապես ԱՈՒԸԱ երեխաների խոցելիությունը, զեկույցում նշվում է, որ բացակայում է առաջին արձագանքող բուժաշխատողների կողմից կենսաբանական նմուշների հավաքագրման ընթացակարգը, ինչն առաջացնում է ուշացումներ և ապացույցների անդառնալի կորուստ, թեև փաստվում է, որ երեխաների դեմ կամ նրանց վրա ազդեցություն ունեցող հանցագործությունների հայտնաբերման մակարդակը բարելավվել է՝ կարողությունների զարգացման շնորհիվ:

- **Մարդկային ռեսուրսներ**

Բացերի և կարիքների գնահատման արդյունքում արձանագրվել է խնամակալության համակարգի ավելի լավ ֆինանսավորման, խնամատարների ներգրավման և կարողությունների զարգացման հարցերում ավելի մեծ ներդրումների անհրաժեշտությունը, ինչպես նաև երեխաների մասնագիտացված պաշտպանության սոցիալական աշխատողների համակարգի ձևավորման կարիքը, որ ապահովվեն բավարար թվով պատրաստված և անհրաժեշտ ռեսուրսներով

ապահովված սոցիալական աշխատողներ: Նույնը վերաբերում է համապատասխան որակավորում ունեցող հոգեբաններին: Թեև ներպետական օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է CM/Rec(2019)11 հանձնարարականի պահանջներին, սակայն օժանդակ կանոնակարգերի և կառուցակարգերի բացակայությունը՝ իրավասու խնամակալների բազա կազմավորելու նպատակով, խաթարում է վերոնշյալ օրենսդրական դրույթների արդյունավետությունը: Չկա ուսուցման կամ կարողությունների զարգացման որևէ ծրագիր՝ խնամակալության որակի ապահովման նպատակով:

Պետք է մշակվի, պլանավորվի և իրագործվի համապատասխան կարողությունների զարգացման համապարփակ ծրագիր, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Սահմանապահ զորքերի և ապաստան հայցողների հարցերով զբաղվող պաշտոնյաների համար, ներառելով երեխաների հայտնաբերումը, երեխաների համար բարենպաստ հարցաքննության մեթոդները, ԱՈՒԸԱ երեխաների շրջանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ռիսկերի կանխարգելումը և դրանց արձագանքումը, տարիքային գնահատման կարողությունների զրագացումը և այլն: Ծրագիրը պետք է ներառի պարբերական թարմացումներ և շարունակական մասնագիտական զարգացման համար նախատեսված ստանդարտ վերապատրաստման քայլեր :

- **Բացահայտում, ուղղորդում և առաջնահերթությունների սահմանում**

Բացակայում է առանց ուղեկցության և ընտանիքից բաժանված երեխաների սահմանումը, որը կիրառելի է ներքին միգրացիոն հոսքերի (ներքին տեղահանվածների) համատեքստում, ինչի հետևանքով տեղահանված երեխաների շրջանում հայտնաբերված ԱՈՒԸԱ երեխաները թիվը շատ փոքր է: Համապատասխան վիճակագրական տվյալներ առկա չեն, իսկ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տվյալների բազան ԱՈՒԸԱ երեխաների հետ կապված որևէ գործեր չի պարունակում, ինչը հանգեցնում է նրանց վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության: Նմանապես, երեխաների պաշտպանության ամբողջական ավտոմատացված տեղեկատվական համակարգը կնպաստի պարտադիր զեկուցման համակարգին՝ զեկուցման պահանջների միատեսակ կիրառմանը և կնվազեցնի մարդկային սխալի ռիսկը: Ներկայումս թրաֆիքինգի տուժողների հայտնաբերումը չի իրականացվում ընթացակարգային համապարփակ ձևով :

Առանց ԱՈՒԸԱ երեխաները նույնականացման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքի գոյություն չունի ոչ՝ նրանց ժամանակին գրանցման հնարավորություն, ո՛չ էլ ստանդարտ գործառնական ընթացակարգեր, այդ թվում՝ տարիքի որոշման և գնահատման եղանակներ, ինչպես նաև արագ

ուղղորդում անհրաժեշտ ծառայությունների, որոնք մեծապես կախված են ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից և նրա գործընկերներից:

Միևնույն ժամանակ, 2021-2026 թվականների կառավարության գործողությունների ծրագրի այն մասը, որն ուղղված է սահմանային անցակետերից անձանց այլ մարմինների իրավասությանը փոխանցելու գործընթացի բարեփոխմանը, ԱՈՒԸԱ երեխաների մասին որևէ դրույթներ չի պարունակում:

- **Բավարար ֆինանսական աղբյուրներ**

Ենթադրվում է, որ ներկայացուցիչները պետք է գործեն անվճար հիմունքներով և պետական ֆինանսավորում նախատեսված չէ: Անբավարար ռեսուրսները մեծապես անարդյունավետ են դարձնում խնամակալների ստուգման ընթացակարգը: Ներկայումս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարողությունների զարգացման համար բյուջետային ֆինանսավորում նախատեսված չէ, ինչը մարտահրավերներ է առաջացնում երեխաների պաշտպանության մասնագիտացված սոցիալական աշխատողների աշխատուժի զարգացման համար: Նույն իրավիճակն է նաև համայնքային մակարդակի բազմագերատեսչական և բազմաբնույթ երեխաների պաշտպանության խորհուրդների գործունեության բարելավման հարցում:

Ուղղորդումներ
Համապատասխան ծառայությունները այդ թվում՝ հոգեբանական, բժշկական և կացարանային/բնակարանային, դեռևս որոշակի չափով կախված են ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից և նրա գործընկերներից:

6.2 Հետագա քայլերի վերաբերյալ առաջարկներ

Պրակտիկ մասնագետների համար հիմնական առաջարկներից մի քանիսը վերաբերում են հետևյալին.

- ներդրումների կատարում՝ առկա գործընթացները, ընթացակարգերը և պրակտիկաները ավելի լավ հասկանալու համար՝ երեխաների լավագույն շահերի որոշման և գնահատման համար, և մեթոդական ուղեցույցի մշակում,
- արձագանքող ծառայությունների ցանցի ընդլայնում՝ ներառելով այնպիսի ծառայություններ, ինչպիսի քեն՝ ազգային մատակարարների կողմից հոգեբանական, բժշկական ծառայությունների և կացարանի/

ապաստարանի տրամադրումը, որոնք արդիական և կայուն են՝ ներառյալ բժշկական մասնագետների/հաստատությունների ցանցի ստեղծումը, որն իրավասու է սեռական բռնությունների դեպքերում շտապ բժշկական զննում իրականացնել՝ օգտագործելով ապացույցների հավաքման լայն գործիքակազմ,

- ապահովում, որ տեղահանված երեխաները, ներառյալ ԱՈՒԸԱ երեխաները, ստանան լեզվաբանական և զարգացման մակարդակին համապատասխան տեղեկատվություն՝ ներառյալ գրավոր և բանավոր թարգմանության ծառայությունների հասանելիություն, ըստ անհրաժեշտության,

- իրազեկվածության մակարդակի բարձրացում ԱՈՒԸԱ երեխաների անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ, ապահովելով, որ դատական գործընթացում ներգրավված բոլոր կողմերը տեղեկացված լինեն այդ իրավունքի մասին,

- խնամատար ընտանիքների ավելի ընդգրկուն բազայի ձևավորում՝ երեխաների լեզվաբանական և էթնամշակութային բազմազան կարիքները բավարարելու նպատակով,

- բոլոր մակարդակներում գերատեսչական համագործակցության ուժեղացում՝ արդյունավետ ուղեգրումները խթանելու համար,

- ԱՈՒԸԱ-ների նույնականացման ցուցիչների և ստանդարտ գործառնական ընթացակարգերի ընդունում,

- մեխանիզմ ստեղծում, որը կապահովի, որ տարբեր էթնամշակութային, լեզվական և կրոնական պատկանելության երեխաները ստանան որակյալ ծառայություններ, այդ թվում՝ կրթության հասանելիություն հումանիտար ճգնաժամերի պայմաններում,

- երեխաների պաշտպանության համար մասնագիտացված սոցիալական աշխատողների կադրային բազայի զարգացում՝ երեխաների պաշտպանության ծառայությունների անձնակազմը համալրելու համար: Կադրային բազան պետք է հագեցված լինի հմտությունների լայն շրջանակով, ունենա անձնակազմի աշխատակարգ՝ յուրաքանչյուր աշխատանքային գործառույթի նկարագրությամբ, ինչպես նաև պետք է գործի պարբերաբար վերապատրաստման կարիքների գնահատում իրականացնելու և դրանց լուծում տալու համար արդյունավետ մեխանիզմ,

- մասնագետների կարողությունների զարգացման և գերատեսչական համակարգման կառուցակարգերի ամրապնդման կարևորում՝ միջոլորտային մոտեցումների խրախուսման նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Եվրոպայի խորհուրդ (2010). Life projects. Council of Europe Publishing, https://edoc.coe.int/en/migration/7788-life-projects-for-unaccompaniedmigrant-minors.html

- Եվրոպայի խորհուրդ (2024). Կարիքների գնահատման զեկույց https://rm.coe.int/needs-assessment-report-arm-2024-final-with-disclaimer/native/1680b1a687

- Committee on the Rights of the Child (2005). General Comment N6, Treatment of Unaccompanied and Separated Children Outside Their Country of Origin, CRC/ GC/2005/6, https://www.refworld.org/legal/general/crc/2005/en/38046

- European Council on Refugees and Exiles (ECRE). (2014). Right to Justice:
- Quali- ty legal assistance for unaccompanied children, https://ecre.org/wp-content/uploads/2016/03/Annex1_guidingprinciples_righttojusticeEN.pdf

- European Union Agency for Asylum -UEAA- (2024). Practical Tool for Guardians Transnational procedures in the framework of international protection, https://fra.europa.eu/en/publication/2024/practical-tool-guardians-transnational-procedures-framework-international

- European Union Agency for Asylum -UEAA- (2023). Practical Tool for Guardians Introduction to international protection, https://euaa.europa.eu/publications/introduction-international-protection

- ՀԻԳ (2014). Guardianship for children deprived of parental care handbook. A handbook to reinforce guardianship systems to cater for the specific needs of child victims of trafficking. Luxembourg: Publications Office of the European Union, https://fra.europa.eu/en/publication/2014/guardianship-children-deprived-parental-care

- ՀԻԳ (2020). Relocating unaccompanied children: applying good practices to future schemes. Luxembourg: Publications Office of the European Union, https://fra.europa.eu/en/publication/2020/relocation-unaccompanied-children

- ՀԻԳ (2010). Separated, asylum-seeking children in European Union Member States - Summary. Luxembourg: Publications Office of the European Union, https://fra.europa.eu/en/publication/2012/separated-asylum-seeking-children-european-union-member-states-summary

- ՀԻԳ (2023b). *Practical Tool for Guardians. The asylum procedure.* Publications Office of the European Union, https://euaa.europa.eu/publications/asylum-procedure

- Frontex *(2019). VEGA Handbook: Children at land borders.* Luxembourg: Publications Office of the European Union, https://www.frontex.europa.eu/publications/vega-handbook-children-at-land-borders-IqVyxI

- ՄԿԿԿ, ՄԱԿ ՓԳՀ, ՅՈՒՆԻՍԵՖ և այլք (2004). Inter-Agency Guiding Principles on Unaccompanied and Separated Children, https://www.unhcr.org/media/inter-agency-guiding-principles-unaccompanied-and-separated-children

- Pricoco, M. F., Associazione Magistrati per i Minorenni e la Famiglia (AIMMF), Autorita Garante per l'Infanzia e l'Adolescenza, Save the Children Italia Onlus, Albano, F., & Milano, R. (n.d.). *CARTA ETICA DEL TUTORE VOLONTARIO*, https://tutelavolontaria.garanteinfanzia.org/sites/default/files/2020-04/carta-etica-tutore-volontario.pdf

- Save the children (2021). *The Nine Basic Requirements for Meaningful and Ethical Children's Participation | Save the Children's Resource Centre*. Save the Children's Resource Centre, https://resourcecentre.savethechildren.net/pdf/basic_requirements-english-final.pdf

- Save the children (2011). *Core Standards for guardians of separated children in Europe. Goals for guardians and authorities*. Save the Children's Resource Centre, https://resourcecentre.savethechildren.net/document/core-standards-guardians-separated-children-europe-goals-guardians-and-authorities

- Save the children (2007). *Save the Children's Definition of Child Protection | Save the Children's Resource Centre*. Save the Children's Resource Centre, https://resourcecentre.savethechildren.net/document/save-childrens-definition-child-protection

- The Alliance for Child Protection in Humanitarian Action, Fore, H., Grandi, F., & Knudsen, C. (n.d.). Minimum standards for child protection in humanitarian action. In *Minimum Standards for Child Protection in Humanitarian Action*, https://alliancecpha.org/sites/default/files/technical/attachments/CPMS_2019_Handbook_English.pdf

- ՄԱԿ (1951). Convention relating to the Status of Refugees. In *United Nations Conference of Plenipotentiaries*, https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.23_convention%20refugees.pdf

- UNCR (1989). Convention on the Right of the Child. General Assembly resolution 44/25, https://www.ohchr.org/fr/instruments-mechanisms/instruments/convention-rights-child

- UNHCR (2001) Guidelines "Refugee Children –Guidelines on Protection and Care", United Nations High Commissioner for Refugees, https://www.unhcr.org/media/refugee-children-guidelines-protection-and-care

- UNESCO (2011a). Reforming school supervision for quality improvement. Supervision: a key component of a quality monitoring system- Module 1, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000215928

- UNESCO (2011b). Reforming school supervision for quality improvement. Roles and functions of supervisors - Module 2, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000215929

- UNCR (1989). Convention on the Right of the Child. General Assembly resolution 44/25, https://www.ohchr.org/fr/instruments-mechanisms/instruments/convention-rights-child

- UNHCR (2001) Guidelines "Refugee Children –Guidelines on Protection and Care", United Nations High Commissioner for Refugees, https://www.unhcr.org/media/refugee-children-guidelines-protection-and-care

- UNESCO (2011a). Reforming school supervision for quality improvement. Supervision: a key component of a quality monitoring system- Module 1, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000215928

- UNESCO (2011b). Reforming school supervision for quality improvement. Roles and functions of supervisors - Module 2, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000215929

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE